11349

Sengpfle

[illegible]

[illegible] 1927

3/021
S-19

1 DEC 2000

Մ. Ի. ՏԱՅՇԻՆ ՅԵՎ Ֆ. Ֆ. ԿՈՉԼՈՎ

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք գյուղական շարժական
դպրոցների յեվ իճճնակրթության համար

ՊՐԱԿ Ա.

Ռուս. թարգմ.
Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

3(02)
Տ-19

13.08.2013
25 SEP 2008
3(02)
Տ-19

Մ. Ի. ՏԱՅՇԻՆ ՅԵՎ Ֆ. Ֆ. ԿՈԶԼՈՎ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք գյուղական շարժական դպրոցների
յեվ
ինքնակրթության համար

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ռուսերենից թարգմանեց
Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

ՀՍՍՀ ԳՀՏ 2 2

Գրառեպվար № 1բ. Հր. 481. Տիրաժ 6000.
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—37.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գос. Библиотека
ՀՍՍՀ-ԱՎ
им. А. Ширванзаде
Ф. Инв. №
4848-83

ՉՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդյունաբերություն յեվ գյուղատնտեսություն

Ամեն մի յերկրի տնտեսություն բաժանվում է յերկու մասի, արդյունաբերության և գյուղատնտեսության։ Մի քանի յերկրում, ինչպես որինակ, Անգլիայում, գերակշռում է արդյունաբերությունը, ուրիշներում, ինչպես որինակ Գերմանիայում, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը շատ թե քիչ հավասարապես են զարգացած, այլ յերկիրներում, ինչպես որ. Իտալիայում, գերակշռում է գյուղատնտեսությունը։ Անգլիայում ազգաբնակության յուրաքանչյուր հարյուրին ընկնում է 6 գյուղացի, այսինքն՝ չնչին փոքրամասնություն, Գերմանիայում՝ 40, այսինքն՝ մոտ կեսը, իսկ Իտալիայում՝ 56, այսինքն՝ կեսից ավելին։

Յուրաքանչյուր յերկրում արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը սերտորեն կապված են միմյանց։ Գյուղատնտեսության մեջ արտադրվում են պարենային պրոդուկտներ (հաց, բանջարեղեն, կարտեղեն և այլն) և արդյունաբերության համար հում նյութեր (վուշ, կանեփ, կաշի, բամբակ և այլն)։ Արդյունաբերությունը լինում է արդյունահանական (քարածխի, նավթի, մետաղահանքի ստացումն) և մշակող, յերբ բանվորները մշակում են զանազան տեսակի նյութեր (հում նյութեր). անմշակ կաշին դարձնում են վոտնամանների համար պիտանի կաշի, բամբակից չիթ և այլ հյուսվածքներ շինում, յերկաթահանքից յերկաթ ու պողպատ պատրաստում։

Գյուղատնտեսության մեջ ստացվող պրոդուկտներն ամբողջովին գյուղում չեն սպառվում։ Նրանց մի մասը քաղաք է տարվում և այնտեղ ծախվում։ Նմանապես և այն պրոդուկտները, վորոնք մշակվում են արդյունաբերության մեջ, չեն մընում միայն քաղաքում։ Նրանք գյուղ էլ են գնում։ Գյուղացին ծախում է այն, ինչ վոր արտադրում է գյուղը, և գնում է արդյունաբերության պրոդուկտներ. այսպիսով քաղաքի և գյուղի մեջ տնտեսական կապ է հաստատվում։ Քաղաքը գյուղից ստանում է պարեն (продовольствие) ու արդյունաբերության համար հում նյութ, և տալիս է գյուղին արդյունաբերական ապրանքներ։ Քաղաքի արդյունաբերական ապրանքների փոխանակությունը գյուղական ապրանքների հետ կատարվում է առևտրի միջոցով։ Քաղաքի ու գյուղի միջև կապը գընման և վաճառքի կարգով է լինում՝ շուկայի միջոցով։

Սա առևտրական կապ է։

Գյուղի յենթարկումը քաղաքին

Առևտրական կապը քաղաքի ու գյուղի միջև բոլոր բուրժուական կապիտալիստական յերկրներում այն հետևանքն է ունենում, վոր քաղաքն իրեն է յենթարկում գյուղը։ Այս կատարվում է թե այն ժամանակ, յերբ նրանցում գերակշռում է արդյունաբերությունը, թե այն ժամանակ, յերբ գյուղատնտեսությունն է գերակշռում։

Ինչումն է կայանում քաղաքի տիրապետությունը գյուղի։ Ամենից առաջ նրանում, վոր գյուղացին ստիպված է իր տնտեսությունը հարմարեցնել քաղաքի պահանջներին։ Այլապես նա չի կարող մի բան ծախել քաղաքին և նրանից վորևէ բան գնել։ Դիցուք, օրինակ, գյուղացին ավելի շատ կանեփ է ցանել, քան վուշ։ Իսկ քաղաքի արդյունաբերությունն ընդհակառակը, ավելի վուշի թելերի (ВОЛОКНО) պետք ունի քան կանեփի։ Յեթե գյուղացիք շարունակեն ավելի էլ ընդարձակել կանեփի ցանքսը վուշի փոխարեն, ապա այդ նրանց վրա ծանր կնստի։ Քաղաքին հարկավոր է վոչ թե կանեփ, այլ վուշի թել. կանեփը նա չի առնի։ Այն, ինչ վոր կհաջողվի ծախել, պետք է ծախվի ցած, վնասովի գներով։ Վորպեսզի վնաս չանի

գյուղացին, պիտի յենթարկվի քաղաքի պահանջին և մեծացնի վուշի ցանքսը։

Կապիտալիզմի ժամանակ գյուղացու համար դժվար է իր տնտեսությունը վարել։ Գյուղացին ստիպված է շարունակ մեծացնել այն պրոդուկտների ու հում նյութերի քանակը, վորոնք նա վաճառքի յե հանում։ Վերցնենք մի այսպիսի օրինակ։ Գյուղի կեսն իր հողը մշակում է արորով, ցանում է անմաքուր սերմ, հնձում է մանգաղով, կալսում է թմբիչով (цеп), հացահատիկներն աղում ձեռքի յերկանքով։ Գյուղի այս մասի անասունները նիհար են, այնպես վոր նրանցից «վոչ բուրդ կստացվի, վոչ կաթ». աղբ էլ վոր ստացվի լավ է։ Իսկ գյուղի մյուս կեսը հողը մշակում է լավ գութանով (մինչև իսկ տրակտորով), սերմերը մաքրելու համար ձեռք է բերում սերմազտիչներ, ծեծելու համար կալսիչ (МОЛОТИЛКА), տնտեսության մեջ պահում է լավ անասուններ և այլն։ Հասկանալի յե, վոր գյուղի առաջին կեսը հետզհետե աղքատանալու յե, տնտեսապես ընկնելու և քայքայվելու։ Գյուղի յերկրորդ մասի տնտեսությունն ընդարձակվելու յե։ Սա կգնի քայքայվողների հողերը, նրանց տնտեսությունն իր ձեռքը կը գցի։ Կապիտալիստական յերկրների գյուղերում այսպես էլ լինում է։ Բայց այնուամենայնիվ ինչու լավ տնտեսությունները պետք է ընդարձակվեն։ Վորովհետև այդ տնտեսությունները շուկային հարկավոր պրոդուկտներ ավելի եժան և ավելի շատ կարտադրեն, ավելի շատ կծախեն, ավելի շատ միջոցներ կունենան և սրանով էլ իրենց ուժը կավելացնեն։

Մենք լավ գիտենք, վոր գյուղացու տնտեսությանը հարկավոր են գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ, վորոնք կապիտալիստական յերկրներում կարելի յե գնել միայն քաղաքում, կապիտալիստների մոտ։ Գնելու համար փող է հարկավոր։ Հարկավոր փողը գյուղացին ձեռք է բերում հում նյութի ու պրոդուկտների վաճառքից միայն։ Իսկ ծախել նա կարող է այնքան շատ, վորքան շատ է արտադրում այնպիսի պրոդուկտներ, վորոնք կարելի յե ծախել քաղաքին։

Այն ամենը, ինչ վոր ծախվում է շուկայում, կոչվում է

ապրանք։ Իսկ այն տնտեսությունը, որ պրոդուկտներն արտադրում է վաճառքի համար, կոչվում է ապրանքային։ Նշանակում է, գյուղացու տնտեսությունը պետք է ավելի ու ավելի ապրանքային տնտեսություն դառնա, որպեսզի անհրաժեշտ արդյունաբերական ապրանքները ձեռք բերել կարողանա։ Գյուղացական տնտեսության ապրանքայնությունը պետք է մեծացնել նաև նրա համար, որ հարկավոր է վճարել տուրքեր, բանկերի տոկոսները և այլն։

Իսկ ինչ է նշանակում ապրանքայնությունը մեծացնել։

Այս նշանակում է՝ ավելի ու ավելի կապվել շուկայի հետ։ Այս նշանակում է՝ իր տնտեսությունից ավելի ու ավելի ապրանքներ դուրս հանել շուկա և ավելի ու ավելի ապրանքները գնել շուկայում իր տնտեսության համար։ Գյուղացական տնտեսությունը հետզհետե ավելի ու ավելի սերտ և կապվում շուկայի հետ։ Ահա հենց այստեղ՝ շուկայում, բուրժուական, կապիտալիստական յերկիրներում քաղաքի կապիտալիստը՝ քաղաքային արդյունաբերության տերն, իրեն և յենթարկում գյուղական տնտեսությունը։

Ինչու՞ և ինչպես է այդ կատարվում։

Ինչու՞ շուկայի միջոցով, ինչու՞ առևտրի միջոցով է քաղաքի խոշոր կապիտալիստական արդյունաբերությունն իրեն յենթարկում գյուղը։

Մենք գիտենք, որ մեծ խանութը՝ մագազինն ավելի լավ և առուտուր անում, քան փոքրիկ ապրանքազուրկ կրպակը։ Խոշոր առևտրականը ծեծկում է մանրին։ Նույն բանն է կատարվում նաև գյուղացու հացի ու հում նյութի վաճառքի ժամանակ։ Շուկայում խոշոր ու հարուստ տնտեսությունը ծեծկում է մանր ու աղքատին։

Վերցնենք այսպիսի որինակ։ Կալվածատեր Կուրբատովի Սամարայի կալվածքը ցարիզմի ժամանակ շուկա յեր հանում 10.000 փութ լավ ցորեն։ Կալվածքում բոլոր գյուղատնտեսական աշխատանքները կատարվում եյին մեքենաներով և տնտեսությունը տարվում եր կուլտուրական ձևով։ Կալվածատիրոջ լավ մշակված հողի դեսյատինը տալիս եր 2—3 անգամ ավելի, քան գյուղացունը։

Այդ նույն շուկան ե բերում և գյուղացին իր 100 փութ, վորակով ավելի ցած, ցորենը։ Ո՞վ կլինի իր կամքը թելադրողը այդ շուկայում. կալվածատե՞րն՝ իր 10.000 փթով, թե՝ գյուղացին, վոր ծախելու յե 100 փութ։ Պարզ է, վոր գինն կարողը, հացի շուկայում իշխողը կալվածատերն է լինելու և վոչ թե գյուղացին։ Յեթե կալվածատերն իր ցորենի փթի գինն իջեցնի, ապա, գյուղացին գինը բարձրացնելու ուժ չի ունենա, և ստիպված կլինի ծախել կալվածատիրոջ գներով, այսինքն իրեն համար վնասով։

Կապիտալիստական խոշոր տնտեսությունը գլխավոր վաճառողն ու գնորդն է հանդիսանում շուկայում։ Նա ճնշում է շուկան իր տնտեսության մեծ ուժով, իշխում է շուկային, նրան իր ձեռքին է պահում, կառավարում է նրան։ Իսկ շուկայի միջոցով նա իր ձեռքին է պահում գյուղը, գյուղացու տնտեսությունը։ Մանր տնտեսություններն ստիպված են յենթարկվել խոշորների տիրապետության, քանի վոր նրանք ուժ չունեն և անկարող են կռվել նրանց դեմ։ Մի ամբողջ շարք բուրժուական պետությունների փորձը ցույց է տվել, վոր մանր տնտեսությունների ամեն տեսակի պայքարը խոշորների դեմ սովորաբար վերջացել է առաջինների քայքայմամբ։ Խոշոր ձեռնարկությունները ընկճում են մանրերին, իրենց պրոդուկտների եժանությամբ, քանակով և վորակով։ Գներն իջեցնելով նրանք վերջնականապես ավերում են մանրերին, նրանց ամբողջովին իրենց յենթարկում։ Ահա մի որինակ. այն ժամանակ, յերբ գեղջկուհին կամ տնայնագործն իր ճախարակի վրա կմանի մի ֆունտ մանվածք, բանվորուհին գործարանում կարողանում է մանել 50 փութ մանվածք, այսինքն՝ յերկու հազար անգամ ավելի. վորակով էլ ավելի բարձր։

Հազար մեքենայանոց մեծ գործարանի շենքն էլ ավելի եժան է նստում, քան մանր տնայնագործական ձեռնարկների 500 շենքերն իրենց յերկ-յերկու մեքենաներով։

Խոշոր արդյունաբերությունը հում նյութերի, վառելիքի

և ուրիշ նյութերի գնման մեջ նրանով է շահում, որ միանգամից է գնում՝ մեծ քանակությամբ և ավելի եժան գներով։ Բացի այս, նա կարող է ապրանքը պահել առժամանակ, քանի դեռ շուկայում գները ցած են, կարող է իր համար ավելի լավ, ավելի ձեռնտու գների սպասել կամ կարող է ապրանքը տեղափոխել այնտեղ, որտեղ այդ ապրանքն ավելի թանկ կծախվի։

Խոշոր արդյունաբերության տիրապետությունը վոչ միայն նրանում է կայանում, որ նա ավելի ուժեղ և ավելի հարուստ է. նրա գլխավոր ուժը նրանումն է, որ նա իր պատրաստում ստանոկներ ու մեքենաներ ամբողջ արդյունաբերության համար, այլ և գութաններ ու մեքենաներ՝ գյուղական տնտեսության համար։

Իր ձեռքին ունենալով մեքենաների ու ստանոկների արտադրությունը, որոնցով գործում են ամբողջ ճյուղերը և խոշոր ու ամբողջ գյուղատնտեսությունը, սրանով խոշոր արդյունաբերությունը հիմքն է հանդիսանում ամբողջ ժողովրդական տնտեսության։ Մեքենայի ու ստանոկի միջոցով խոշոր արդյունաբերությունն իր յեռևից է տանում, կառավարում ու իրեն է յենթարկում իրենից կախումն ունեցող ամբողջ արդյունաբերությունն ու ամբողջ գյուղատնտեսությունը։

«Քանակով մեծ, բայց ուժով փոքր»—ասում է ժողովրդական առածը։

Այսպես էլ ամբողջ արդյունաբերությունը քանակով մեծ է, այնտեղ նրա տնտեսական ուժը չափազանց փոքր է։ Խոշոր արդյունաբերության հզորությունն ու ուժն ավելի լավ պարզելու համար, մենք մեջ կբերենք ու կդիտենք Գերմանիայի ամբողջ արդյունաբերության թվերը։ Ահա նրանք.

Պատերազմից առաջ Գերմանիայում յուրաքանչյուր 1000 արդյունաբերական ձեռնարկությանն ընկնում էր միայն 9 խոշոր ձեռնարկություն, կամ այլ կերպ՝ Գերմանիայում յերկու և կես միլիոն արդյունաբերական ձեռնարկություններից

միայն 28 հազարն էր խոշոր, այսինքն՝ խոշորները 90 անգամ քիչ էլին մանրերից։

Բայց դրա փոխարեն, այդ մի բուռն խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն զբաղեցրել էլին.

1. Գերմանիայի բոլոր արդյունաբերական բանվորների կեսը.

2. Գերմանիայի բոլոր ելեքտրոկայանների ելեքտրական ուժի յերեք քառորդը. իսկ սա՝ արդյունաբերության գլխավոր ուժն է։

3. Գերմանիայի բոլոր շոգեմեքենաների ուժի յերեք քառորդը։

Հասկանալի յե, որ Գերմանիայի խոշոր արդյունաբերությունն իր ձեռքին ուներ միլիոնավոր մանր արդյունաբերությունը, ուղղություն էր տալիս սրա աշխատանքին այնպես, ինչպես ձեռնտու յեր իրեն՝ խոշոր արդյունաբերությանը։

Խոշոր արդյունաբերությունն իր ուժով, իր կապիտալով, իր մեքենաներով ու ստանոկներով, իրեն հարկավոր վորոշ պրոդուկտների ու հում նյութերի իր պահանջով ստիպում է գյուղատնտեսությանն արտադրել այն, ինչ հարկավոր է իրեն՝ խոշոր արդյունաբերությանը. հարկադրում է պարապել, զբաղվել նրանով, ինչ վոր գնում է, ինչ պահանջում ու իր արտադրության համար վերցնում է այդ խոշոր արդյունաբերությունը։ Որինակ, ամենուրեք այն ռայոններում, վորտեղ գործում են շաքարի խոշոր գործարանները, գյուղացիք, համարյա միայն ճակնդեղ են ցանում։

Անգլիայում բրդեղենի արդյունաբերությունն անգլիական ֆերմերներին[1]) ստիպեց բազմացնել նրբաբուրդ վոչխարների հատուկ մի ցեղ (порода), վորովհետև միայն այդ վոչխարների բուրդն էր լավ ծախվում, լավ գնով գնում. կամ վերցնենք մի այլ որինակ։ Նույն Անգլիայում պահանջ կա խոզի մսի մի հատուկ տեսակի, այսպես կոչված բեկոն մսի (беконнаго мяса)։ Ձեվ Անգլիայում բազմացվում են այդ խոզերի առանձին տեսակը,

[1]) Ֆերմերներն Անգլիայում և ուրիշ շատ յերկիրներում կապիտալիստական հողերից խոշոր և մանր կապալառուներն են։

վորը քաղաքին և նրա կոնսերվների գործարաններին, այսինքն՝ կոնսերվային արդյունաբերության հարկավոր միսն է տալիս։ Ավելին կասենք, դեպի Անգլիա խոզի միս արտահանող այլ պետությունների գյուղատնտեսությունն էլ ստիպված է այդպիսի հատուկ տեսակի խոզեր բազմացնել, նրանց հատուկ ձևով կերակրել, վորպեսզի անգլիական գործարաններն ու քաղաքային շուկան հարկավոր միսն ստանա (բեկոնային գործարաններ կառուցվում են նաև Ս. Ա. Մ.-ի մեջ, վորպեսզի խոզի միս պատրաստեն Անգլիա արտահանելու համար)։

Այսպես, կապիտալիստական քաղաքային խոշոր արդյունաբերությունն իրեն և չենթարկում վոչ միայն իր յերկրի, այլ նույնիսկ ուրիշ պետությունների գյուղն ու գյուղատնտեսությունը։

Կապիտալիստական քաղաքը շահագործում է գյուղին

Կապիտալիստական արդյունաբերությունն ամբողջապես կառուցված է շահագործման և ուրիշների հաշվին հարստանալու վրա։ Նա շահագործում է վոչ միայն բանվորի աշխատանքը, նա սրանով չե սիայն, վոր հարստանում է։ Նա շահագործում է նաև գյուղը, մանր ու միջակ գյուղական տնտեսատերերին, գյուղացիներին, վորոնցից նա հում նյութ է վերցնում իր համար և վորոնց ծախում իր արտադրած իրեղեններն՝ (изделия) ու մեքենաները։ Նա այդ շահագործումն իրագործում է նրանով, վոր իրեն և չենթարկում առևտուրը գյուղի հետ, իր ձեռքին է պահում յերկաթուղիները, վորոնցով գյուղատնտեսության պրոդուկտներն են փոխադրվում։ Նա շահագործում է գյուղը բանկերի միջոցով, վորոնք վարկավորում են գյուղական տնտեսատերերին, քանի վոր բանկերը գտնվում են հենց նույն խոշոր կապիտալիստների ձեռքին, վորոնք իշխում են արդյունաբերության մեջ։

Հյուսիսային Ամերիկան այժմ ամենահարուստ յերկիրն է համարվում։ Այնտեղ առանձնապես ուժեղ և խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը։ Սա գտնվում է մի բուռն կապիտալիստ միլիարդատերերի ու միլիոնատերերի ձեռքին, վորոնց անվանում են արքաներ՝ պողպատի, նավթի, ածուխի, յերկաթուղիների։ Զարգացած է այնտեղ նաև գյուղատնտեսու-

թյունը։ Նա տարվում է ավելի քան վեց միլիոն առանձին յերկրագործական տնտեսություններ մեջ, վորոնք շատ ավելի լավ են սարքավորված, քան մեր գյուղացական տնտեսությունները։ Նրանք կոչվում են ֆերմաներ, իսկ նրանց տերերը՝ ֆերմերներ։ Այս ֆերմերական տնտեսությունների կեսը ժանրեր ու միջակներ են։ Հենց սրանք են, վոր ամենաուժեղ շահագործման ու ճնշման են յենթարկվում մի բուռն ամերիկական խոշոր կապիտալիստների կողմից։ Ամերիկայի խոշոր արդյունաբերությունը, վոր ֆերմերական տնտեսությունների համար մեքենաներ ու տրակտորներ է պատրաստում, բանկերը, յերկաթուղիները գտնվում են փոքրաթիվ խոշոր կապիտալիստների ձեռքին։ Բանկի, յերկաթուղու և մեքենայի միջոցով կապիտալիստը դուրս է ծծում ֆերմերներից հսկայական շահեր (барыш)։ Ֆերմերը, յերկաթուղով հացը փոխադրելու համար յերկաթուղային կապիտալիստին է տալիս իր գյուղատնտեսության պրոդուկտների արժեքի 34%-ը. այսինքն՝ յեթե ֆերմերը քաղաք է տանում 100 փութ ցորեն, ապա՝ 34 փութը նա ծախսում է, յերկաթուղով տանելու վարձ է տալիս։

Առավել ևս շատ է վճարում անասնապահ ֆերմերը։ Նա իր տնտեսության պրոդուկտների վաճառքից ստացած յուրաքանչյուր 100 ռուբլուց կեսը՝ 49 ռուբլի ստիպված է վճարել յերկաթուղու տիրոջը՝ յերկաթուղային արքային։ Հասկանալի յե, վոր ֆերմայի հաշվին շահվում է նաև նրա պրոդուկտները մշակող գործարանատերը, ինչպես և առևտրականը։ Այս բոլորի հետևանքն այն է լինում, վոր ֆերմերին մնում է միայն 20 ռուբլի, այսինքն՝ իր դատածի (заработок) միայն մի հինգերորդ մասը։ Յեվ Ամերիկայում տարեկան հազարավոր հողագործ-ֆերմերներ են քայքայվում, վորոնց գույքն ու հողը վաճառվում են պարտքի դիմաց։

Սակայն կապիտալիստի շահումը ֆերմերի հաշվին սրանով չի սահմանափակվում։ Ֆերմերն ստիպված է գնել գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, արհեստական պարարտացման նյութեր։ Կապիտալիստական բանկերը նրան փող են տալիս, բայց այնպիսի սարկացնող պայմաններով, վորոնք մեր

խորհրդային որենքներով հանցանք են համարվում և չեն թույլատրվում։ Այդ պայմանները ֆերմերի համար այնքան ծանր են, որ նա չկարողանալով իր պարտքերը վճարել բանկին, դառնում է նրա սեփականությունը և սկսում է միայն բանկի համար, մի կերպ իր պարտքի տոկոսները տալով։ Հաճախ, ֆերմերը հնարավորություն չի ունենում տոկոսներն անգամ վճարելու, ել չխոսենք պարտքի վճարման մասին։ Յեվ քանի գնում ավելի յե աճում ֆերմերի պարտքը բանկին։ Ամերիկական ֆերմերների ընդհանուր պարտականությունը (задолженность) այժմ հասնում է 16 միլիարդ դոլարի, կամ մեր փողով 30 միլիարդ ռուբլու՝ վոսկով։ Այս պարտքի միայն տոկոսը յուրաքանչյուր ֆերմային միջին հաշվով գալիս է 280 ռուբլի։

Իսկ ընդամենը բանկերը ֆերմերների պարտքերից 800 միլիոն դոլլար միայն տոկոս են ստանում տարեկան։

Իսկ ինչ է ֆերմերի յեկամուտը։

Ամերիկական կառավարությունը հետազոտել է ֆերմերական տնտեսությունները և գտել, որ ֆերմերի տարեկան միջին յեկամուտը հասնում է 419 դոլլարի։ Այս յեկամտից բանկին 140 դոլլար տոկոս վճարելուց հետո ֆերմերին մնում է միայն 279 դոլլար։

Սակայն, ներկայումս Ամերիկայում գները այնքան են բարձրացած, որ մի դոլլարով կարելի յե յերեք անգամ պակաս ապրանք գնել, քան պատերազմից առաջ։ Յեվ յեթե հաշվենք մինչ-պատերազմյան ժամանակի համեմատ, մինչ-պատերազմյան գներով, ապա՝ ֆերմերին մնում է ընդամենը միայն 79 դոլլար կամ 158 ռուբլի։ Այս պետք է գիտենա ամեն մի գյուղացի, որ հասկանա, թե բուրժուական յերկիրներում կապիտալիստները ինչպես ճարպկորեն շահագործում են մանր ու միջակ գյուղական տնտեսությունները, թե՝ ինչպես են նրանք իրենց սիրապետությունն ոգտագործում։

Այսպես, ամերիկական կապիտալիստը, այսպես կապիտալիստական քաղաքն իր բռունցքի մեջ է պահում բուրժուական Ամերիկայի գյուղը։ Կապիտալիստական արդյունաբերության սիրապետությունը կապիտալիստների ձեռքին շարաչար շահագործման մի զենք է դառնում։

Կարո՞ղ է արդյոք կապիտալիզմը չճնշել գյուղը

Գուցե այդ վայրենի ճնշումը և գյուղական տնտեսության քայքայումը միայն Ամերիկայում է կատարվում։

Վոչ. Ամերիկան մի վատթար բացառություն չի հանդիսանում. նրա կարգերն ավելի վատ չեն, քան բուրժուական այլ պետությունների կարգերը։ Բոլոր բուրժուական յերկիրներում ել կապիտալիստները շահագործում և սարկացնում են գյուղացիներին վոչ պակաս, քան Ամերիկայում։ Գերմանական և ֆրանսական մանր և միջակ գյուղացական տնտեսությունները քայքայվում են, աղքատանում և սարկացած են ել ավելի, քան ամերիկական ֆերմերները։

Յեվ բուրժուական քաղաքի այդ սարկությունը, այդ ճնշումը գյուղի նկատմամբ անհնար է վերացնել. այս անխուսափելի յե, քանի դեռ գոյություն ունեն կապիտալն ու կապիտալիստական կարգերը, քանի դեռ խոշոր արդյունաբերությունը մի բուռն կապիտալիստների ձեռքին է գտնվում։ Բուրժուազիան խոշոր արդյունաբերության սիրապետությունն սահեցնել շահագործման համար, ուրիշի հաշվին հարստանալու համար, միլիոնավոր բանվորներին ու միլիոնավոր մանր գործ գյուղացիներին անխնա կերպով ճնշելու և սարկացնելու համար։ Առանց այդ ճնշման կապիտալիստական կարգերն իրենց գոյությունը պահպանել չեն կարող։

Մեզ մոտ ել ցարական Ռուսաստանում խոշոր արդյունաբերությունը կալվածատերերի հետ միասին հսկայական շահումներ եր անում գյուղական տնտեսությունից, քայքայում եր նրան, գյուղացիներին մուրացիկ դարձնում, նրանց քաղաքները քշում, իր արտադրության համար եժան բանվորներ ստեղծում։

Չինգ տարվա ընթացքում, 1904 թվից մինչ 1910 թիվը ռուսական գյուղի աղքատացումը կարելի յե տեսնել գյուղական տնտեսության մեջ անասունների և ձիաների նվազումը

յուց տվող հետևյալ թվերից։ Ագգաբնակութ յան յուրաքանչյուր 100 հոգուն՝

	ընկնում եր 1905 թվին	ինացել եր՝ 1910 թվին
ձիաներ	25	20
խոշոր եղջյուր. անասուն .	39	30
վոչխարներ	57	40

Հասկանալի չե, վոր սրա հետ միասին նվազում եր ագգաբնակութ յան յուրաքանչյուր հոգուն ընկնող հացի բերքը. աճում եր ցանքագուրկների և ձիազուրկների թիվը։

Ի՞նչ և սովորեցնում մեզ այն, ինչ վոր մենք իմացանք խոշոր արդյունաբերութ յան նշանակութ յան և դերի մասին բուրժուական պետութ յունների մեջ։ Ահա թե ինչ.

Խոշոր կապիտալիստական արդյունաբերութ յունը առեվտրի միջոցով, ստանոկի, գումանի յեվ մեքենայի միջոցով իրեն և յենթարկում մանր արդյունաբերութ յունն ու գյուղատնտեսութ յունը։

Կապիտալիստական արդյունաբերութ յունը գյուղատնտեսութ յունն իր արտադրութ յան կարիքներին ու պահանջներին և հարմարեցնում յեվ կալվածատերերի հետ միասին շահագործում, բայքայում և գյուղացիներին, նրանց աղքատացնում, նրանց քաղաք և շարտում իր գործարաններում եժան գնով աշխատեցնելու համար։

«Հողագործի պլխին, ասում և Լենինը, հետզհետե ավելի ու ավելի յե ծանրանում այն կապիտալի ճնշումը, վորն առաջանում և, գլխավորապես, առևտրի ու արդյունաբերութ յան բնագավառում»։

Այս քայքայումից ու աղքատացումից յելքը, փրկութ յունը գյուղացութ յան համար միայն կապիտալիզմի և նրա կապիտալիստական կարգերի վոչնչացման մեջն և՝ բանվոր դասակարգի և նրա կոմունիստական կուսակցութ յան գեկավարութ յան ներքո։

«Իսկ այլ յելք, սովորեցնում եր մեզ Իլիչը, մարդկութ յանը չի տված»։

Մեր արդյունաբերութ յունը

Մենք արդեն գիտենք, վոր Անգլիայում արդյունաբերութ յունն և գերիշխում. Իտալիայում՝ գյուղատնտեսութ յունը։ Իսկ մեզ մոտ, խորհուրդների յերկրում, ժողովրդական տնտեսութ յան վոր ճյուղն և գերիշխում։

Ժողովրդական տնտեսութ յան գերիշխող ճյուղը Խ. Ս. Հ. Մ-թյան մեջ գյուղատնտեսութ յունն և հանդիսանում, վորը ցրված և 22 միլիոն գյուղացական տնտեսութ յունների մեջ։ Այս նշանակում և, վոր մեր գյուղական տնտեսութ յունը՝ մանր տնտեսութ յուն և։

Մեր արդյունաբերութ յունը կազմում և Խ. Ս. Հ. Մ-թյան ժողովրդական տնտեսութ յան յերկրորդ մասը։ Սոցիալիստական արդյունաբերութ յունը կանգնած և գյուղական տնտեսութ յան կողքին մի շարքում և նրա հետ միասին մի ամբողջութ յուն և կազմում՝ խորհրդային սոցիալիստական հանրապետութ յունների Միութ յան ժողովրդական տնտեսութ յուն։

Խորհրդային քաղաքն ու խորհրդային գյուղը բանվորների ու գյուղացիների մի ամբողջական տնտեսութ յան անբաժան մասերն են հանդիսանում։

Մեր խոշոր արդյունաբերութ յունը գտնվում և չորս գլխավոր ռայոններում։

Առաջին ռայոն—կենտրոնական-արդյունաբերական։ Այստեղ առավելապես մանուֆակտուրա յե մշակվում։ Անկվածային արդյունաբերութ յունն այս ռայոնի գլխավոր արտադրութ յունն և հանդիսանում։ Անկվածային արդյունաբերութ յան մեջ և աշխատում ամբողջ ռայոնի բոլոր գործարանների բանվորների մեծագույն մասը (մոտ յերկու յերրորդը)։ Այստեղ մշակվում և մանուֆակտուրայի բոլոր տեսակները՝ բրդյա, քաթանի, բամբակե և մետաքսյա։

Ռայոնի ամբողջ անկվածային արդյունաբերութ յան կենտրոնը Մոսկվան և, թեև խոշոր գործարաններ կան նաև Իվանովո-Վազնեսենսկ, Յարոսլավլ, Կոստրոմա և այլ քաղաքներում։

Բացի անկվածայինից, այս ռայոնում կա խոշոր մետաղ-

մշակող և մեքենագործական արդյունաբերություն, վոր կենտրոնացած է, գլխավորապես, Մոսկվայում, Կալուգայում, Տուլայում և Նիժնի-Նովգորոդում։

Յերկրորդ ռայոն—հարավային լեռնարդյունաբերական։ Այստեղ գլխավոր հարստությունը յերկաթահանքն է ու քարածուխը։

Այս ռայոնում է գտնվում Դոնի ավազանը (Դոնբասսը). այստեղ աշխատում են այնպիսի խոշոր մետաղագործական գործարաններ, ինչպիսի յեն՝ Պետրովսկի, Ստալինսկի և այլ՝ գյուղատնտեսական, մեքենագործական, նավաշինային գործարաններ։

Ռայոնի արտադրության մեջ կարևոր տեղ է բռնում ապակու և քիմիական արդյունաբերությունը։

Յերրորդ ռայոնը՝ Ուրալը յերկրագնդի ամենահարուստ յերկիրներից (область) մեկն է յերկաթանքի, պղնձի, քարածխի, վոսկու և այլ հանքաշերտերով։ Այնտեղ գտնվում են նաև պլատինի հանքաշերտեր (залежи)։

Ուրալի լեռնագործարանային արդյունաբերությունը մեծ քանակությամբ բանվորներ է զբաղեցնում։ Բանվորների թվով Ուրալը յերրորդ տեղն է բռնում։

Բացի յերկաթի ու պղնձի հանքերի ստացումից և սրանցից մետաղ ձուլելուց, նույնպես և վոսկու ու պլատինի ստացումից, Ուրալում կա նաև քիմիական, փայտամշակման (древообделочная) և թղթի արդյունաբերություն։

Չորրորդ ռայոնը՝ հյուսիս-արևմտյանն է։ Այստեղ հիմնականը մետաղային արդյունաբերությունն է։ Սա կենտրոնացած է գլխավորապես Լենինգրադում. այստեղ են մեքենաշինական գործարանները. մետաղային արդյունաբերությունից հետո յերկրորդ տեղը բռնում է քիմիական, էլեկտրոտեխնիքական և բամբակագործական արդյունաբերությունը։ Կա նաև փայտամշակման, թղթի, կաշվեղենի և այլ արդյունաբերություն։

Այս չորս ռայոններում է կենտրոնացած մեր պետական խոշոր սոցիալիստական այն արդյունաբերությունը, վորը խորհրդային գյուղին է սպասավորում։

1925 թվին մենք ունեյինք 7.899 արդյունաբերական ձեռնարկություն. սրանցից 727-ը խոշոր, վոր կազմում է ընդհանուր քանակի 9,2%-ը։ Նշանակում է մեզ մոտ խոշոր ձեռնարկությունների թիվը 10 անգամ քիչ է, քան մանրերինը, բայց նրանց մեջ բանվորների թիվը $2^1/_2$ անգամ ավելի յե, քան վերջիններիս մեջ։

Խորհրդային արդյունաբերության հիմքը պետական խոշոր արդյունաբերությունն է հանդիսանում, վոչ թե մանրը։

Մենք արդեն ասել ենք, վոր ժողովրդական տնտեսությունը կազմված է յերկու մասից՝ արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից։

Այս մասերից վորն է հարուստ մեզ մոտ՝ ԽՍՀ Միության մեջ։ Գյուղատնտեսությունն է ավելի հզոր մասը, թե տնտեսական ուժը սոցիալիստական խոշոր արդյունաբերությանն է պատկանում։

1003/14350

Հաշված է, վոր յեթե բոլոր գյուղացական տնտեսությունները, շենքերը, անասունները, ամբողջ ինվենտարը գնահատելու լինենք մինչպատերազմյան ռուբլիներով, կստացվի $7^1/_2$ միլիարդ ռուբլու մի գումար։ Իսկ մեր բոլոր գործարանները գնահատվում են տասնյերկու և մի յերրորդ ($12^1/_3$) միլիարդ ռ.։ Այստեղից արդեն իսկ պարզ է, վոր մեր պետական սոցիալիստական արդյունաբերությունն ավելի ուժեղ է քան գյուղացական միլիոնավոր անհատական, մասնատված տնտեսությունները։

9898-87

Սակայն, մինչդեռ կապիտալիստական յերկիրների բուրժուազիան խոշոր արդյունաբերության ուժն ոգտագործում է գյուղացիներին շահագործելու և քայքայելու համար, կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը մեր պետական արդյունաբերության ուժն ոգտագործում են գյուղատնտեսությանն ոգնելու, նրա ուժը բարձրացնելու, կոոպերացիայի միջոցով նրան ավելի շատ մեքենաներ, գութաններ ու տրակտորներ մատակարարելու համար։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/[illegible]·1922
имени А. Мясникяна

Մեր պետական արդյունաբերությունը վոչ թե բայթայում, այլ բարձրացնում է գյուղացական տընտեսությունը

Յերբ մենք ասում ենք, վոր կապիտալիստական տնտեսության մեջ տիրապետում է խոշոր արդյունաբերությունը, այս նշանակում է, վոր մի բուռն կապիտալիստ-արդյունաբերողները իշխում են բուրժուական դեմոկրատական պետության ամբողջ կյանքի վրա։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության տիրապետությունը բուրժուական պետություններում մեջ մի խումբ կապիտալիստների լիակատար դիկտատորական մի իշխանություն է սահմանում բանվորների ու գյուղացիների վրա։ Բուրժուական որենքները պաշտպանում են կապիտալիստների կողմից բանվորների և գյուղացիների նկատմամբ կատարվող այս անսահման շահագործումը։ Բուրժուական որենքները պաշտպանում են խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի իրավունքներն ու շահերն ընդդեմ բանվորների և գյուղացիների ճիշտ այնպես, ինչպես մեր խորհրդային որենքները պաշտպանում են չքավոր և միջակ գյուղացուն ընդդեմ նեպմանի և կուլակի։ Կապիտալիստներն իրենց ձեռքին են պահում պետական իշխանությունը և լայն կերպով ոգտագործում այն՝ ժողովրդական մասսաները շահագործելու և նրանցից ոգուտներ դուրս ծծելու։ Մեծ տատապանք ու ծանր վիճակ է կրում գյուղացությունը կապիտալի տիրապետության ժամանակ բոլոր բուրժուական յերկիրներում։

Միանգամայն տարբեր դրություն է մեզ մոտ՝ խորհրդային Միության մեջ։ Մեզ մոտ ժողովրդական տնտեսության հիմքը՝ խոշոր արդյունաբերությունը բանվոր դասակարգի ձեռքին է, և վոչ թե կապիտալիստների։ Այսպիսով, խոշոր արդյունաբերության տիրապետությունը մեր յերկրում պրոլետարիատի տիրապետություն է և նշանակում։ Իսկ պրոլետարիատի տիրապետությունը հիմնովին տարբերվում է կապիտալիստների տիրապետությունից։ Կապիտալիստները—այս մի շահագործող դասակարգ է. այնինչ պրոլետարիատը կապիտալիզմի պայմաններում ամենաճնշված դասակարգն է հանդիսանում։

Այս պատճառով, բանվոր դասակարգի տիրապետությունը մեր յերկրում մի նոր ճնշողի և շահագործողի տիրապետություն չէ։ Ընդհակառակը, պրոլետարիատն իր տիրապետող դրությունը գործադրում է ամեն տեսակ շահագործման, ամեն տեսակի ճնշման դեմ պայքարելու համար. ուստի խոշոր արդյունաբերությունը բանվոր դասակարգի կողմից ոգտագործվում է շահագործումը վոչնչացնելու, չքավորին և միջակին ոգնելու, գյուղական տնտեսությունը բարձրացնելու համար։

Խոշոր արդյունաբերությունը կուսակցության և բանվոր դասակարգի ձեռքին ամրապնդում է խորհրդային քաղաքի և խորհրդային գյուղի շաղկապը (смычка)։

Կապիտալիստական յերկիրներում քաղաքը կողոպտում ու ճնշում է գյուղին։ Մեզանում, քաղաքի պրոլետարիատն, ոգտվելով խոշոր սոցիալիստական արդյունաբերության ուժով, իր յեսևից տանում է գյուղն՝ ամեն տեսակ շահագործումից ու ճնշումից ազատելու ճանապարհով։

Բանվոր դասակարգն ու կուսակցությունը գյուղական անհատական տնտեսության այս կախումը խոշոր արդյունաբերությունից՝ ուղղում են դեպի չքավոր ու միջակ գյուղացիների տնտեսություններին ոգնելու կողմը։

Մենք գիտենք, վոր գյուղում գյուղատնտեսական գործիքների, մեքենաների և տրակտորների թիվը տարեց տարի ավելանում է. թեև դեռևս պապենական զառամյալ արորն էլ հաճախ է պատահում։ Գյուղացական տնտեսությունը հետզհետե վերակառուցվում է։ Այս կատարվում է վոչ միանգամից, վոչ թռիչքով, այլ աստիճանաբար ու հատառորեն՝ բանվորի ու գյուղացու ընդհանուր ուժերով։

Պրոլետարիատի ձեռքին, կուսակցության ղեկավարության տակ, մեր սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը բարելավում, բարձրացնում է մեր՝ դեռևս «վայրի» (ինչպես ասում է Իլյիչը գյուղացական տնտեսության հետամնացության, անկուլտուրականության մասին) գյուղական տնտեսությունը։ Խելքի յե գալիս նաև գյուղացին։ Ամենքին էլ պարզ է, վոր «ավալքի» ձևով ապրել չի լինի, վոշ՝ յեթե տնտեսությունը

նոր ձևով գյուղատնտեսի և կոոպերացիայի ցուցմունքներով չվարես, կհյուծվես և կքայքայվես։ Գյուղի լավագույն, գիտակից մասն արդեն ամուր կերպով կպել է գործանին, մեքենային, մեքենային ընկերություններին, կոլեկտիվ տրակտորին, կոոպերացիային։

Գյուղի կուլտուրական առաջավորներն որինակ են ցույց տալիս, թե ինչպես պետք է տնտեսությունն ավելի լավ վարել, նրան ավելի յեկամտաբեր դարձնել, ինչպես մի դեսյատինից ստանալ վոչ թե 30—40, այլ՝ 100—120 փութ հացահատիկ, ինչպես կովի կիթը 10—15 ֆնտից հասցնել 30—40 ֆնտի։

Գյուղատնտեսական կուրսերում և գյուղատնտեսական կոմբակներում և քաղգրագիտության դպրոցներում խորհրդային գյուղի ավելի գործունյա մասը գիտություններ է սանում, բարձրացնելով իր կուլտուրականությունը։ Գավառականին, շրջանայինն գյուղատնտեսական ցուցահանդեսները, վոր կազմակերպվել եյին համարյա մեր ամբողջ Միության տարածության մեջ, ցույց տվին, վոր գյուղի տնտեսությունն աճում է բանակապես, աճում է վորակապես, դառնում է ավելի կուլտուրական, ավելի յեկամտաբեր։ (Ձեզ մոտ էլ ցուցահանդես յեղել է։ Հիշեցեք, ինչ ցույց տվեց ցուցահանդեսը)։

Գյուղական տնտեսության այսպիսի աճմանն ոգնում է մեր արդյունաբերությունը. սա ծառայում է նրա կարիքներին ու շահերին։ Մեր գործարանները պատրաստում են (1925—1926 թ.) գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ 122 տոկոսով ավելի, քան մինչ պատերազմը՝ 1913 թվին, այսինքն՝ համարյա $2^1/_2$ անգամ շատ։ Բացի մեքենաներից և գործիքներից, այժմ կարգի յե դրված տրակտորի արտադրությունը, մինչդեռ առաջ մեզ մոտ տրակտորներ յերբեք չեյին շինվում։ Անցյալ 1925 թվին գյուղ են ուղարկված 63 միլիոն ռուբլու մեքենաներ, գործիքներ և այլ գործիքներ։ 1926 թվի արդյունաբերական պլանի համաձայն բաց է թողնվում ևս 106 միլիոն ռուբլու։ Մինչև այժմ 11,000 տրակտոր եր բանում. 1926 թվին նկատի յի առնված բաժանել գյուղական տնտե-

սությունների ևս 16,000. ուրեմն, աշխատելու յեն 27,000 տրակտոր։ Ի հարկե, այս դեռ քիչ է. իսկ մեքենայի, գործանի և տրակտորի պահանջն աճում է ու աճում. շատանում է արտադրությունը, շատանում է գյուղի հարստությունը։ Մեքենայի ու տրակտորի հետ միասին գյուղն անձեռնտու յեռադաշտյան սիստեմից անցնում է յեկամտաբեր բազմադաշտյանին, միացնում է բաժան-բաժան տնտեսությունները յեվ դարձնում է կոլլեկտիվ, արտելային, կոոպերատիվ տնտեսություններ։

Այսպես աճում ու ամրապնդվում է խորհրդային գյուղի շահերի զոդումը խորհրդային քաղաքի շահերի հետ, սոցիալիստական խոշոր արդյունաբերության զոդումը գյուղական տնտեսության հետ՝ կուսակցության և բանվոր դասակարգի կարող ղեկավարության ներքո։

Կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ուժեղ թափով զարգացնում են յելեքտրական արդյունաբերությունը։ Դեռ ևս Վլադիմիր Իլյիչի կենդանության ժամանակ սկսված եր մեր տնտեսության յելեքտրիֆիկացիան։

Ներկայումս մենք ունենք մի քանի աշխատող խոշոր յելեքտրոկայաններ, ինչպիսիք են՝ Շատուրսկի, Կաշիրսկի, Վոլխովստրոյ, Կիզելստրոյ, և ուրիշներ։ Արդյունաբերության և, մանավանդ, գյուղական տնտեսության յելեքտրիֆիկացիան մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը նոր հիմքերի վրա կդնի, առանձնապես կվերաշինի գյուղական տնտեսությունը, մանր, ցան ու ցրիվ տնտեսությունից նրան կդարձնի խոշոր, կոլլեկտիվ կոոպերատիվ։ Միայն ամբողջ յերկրի ընդարձակ յելեքտրիֆիկացիայի պայմաններում գյուղական տնտեսությունը կվերածվի խոշոր մեքենային այնպիսի արդյունաբերության, ինչպիսին քաղաքի խոշոր արդյունաբերությունն է։

Այն ժամանակ, յերբ յելեքտրիֆիկացիան լիակատար կդարգանա, քաղաքի և գյուղի տարբերությունն էլ կվերանա։

Հասկանալի յե, վոր այդպիսի յելեքտրիֆիկացիային դեռ ձգտում ենք, նոր ենք սկսում նրան կազմակերպել և կառուցել։ Սա մեծ գործ է և նրա իրագործման ճանապարհով մեր տնտեսությունը շատ ավելի դանդաղ է գնում, քան մենք բո-

լորս կուզեյինք։ Այնուամենայնիվ կարելի յե այժմ արդեն նըկատել, վոր մեր ելեքտրական արդյունաբերությունը քաղաքում գերակշռում է մինչպատերազմյանին $3^1/_2$ անգամ, իսկ գյուղը հաժարյա միայն խորհրդային իշխանության որով ելեքտրականության յերես տեսավ։ 1913 թվին ընդամենը 52 գյուղական ելեքտրակայան կար, իսկ 1925 թվին արդեն ունեյինք 331 կայան, այսինքն՝ $6^1/_2$ անգամ ավելի։

Այս նշանակում է, Իլյիչի կտակը՝ ելեքտրիֆիկացիա կառուցելու մասին, կուսակցությունը կատարում է հաստատորեն և հաժառ կերպով։

Բանվոր դասակարգն ու կուսակցությունն ամեն ջանք ու միջոց գործ են դնում մեր խոշոր արդյունաբերությունը բարձրացնելու և զարգացնելու համար, և այդ արդյունաբերության ոգնությամբ, աշխատավոր գյուղացու հետ միասին, կոլտուրային գյուղատնտեսությունն են կազմակերպում, ոգնում են գյուղացուն, մանր, անճար, միատաբեր տնտեսությունը՝ յեկամտաբեր, խոշոր, մեքենային, կոլեկտիվ տնտեսության վերածելու ուղիով առաջ գնալու։

Սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը թշնամի չե, այլ բարեկամ յեվ ոգնական է գյուղատնտեսության։ Միայն խոշոր սոցիալիստական արդյունաբերության միջոցով յեվ սրա ղեկավարությամբ է զարգանում ու աճում ԽՍՀՄ Միության գյուղատնտեսությունը յեվ վերածվում կոլեկտիվ, կոոպերատիվ տնտեսության ու ընթանում դեպի սոցիալիզմ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ
ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

Ի՞նչ ուղիով կարող և և պետք է ընթանա գյուղացական տնտեսության զարգացումը մեր յերկրում։

Գյուղացական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չե։ Գյուղացական տնտեսությունները, յեթե վերցնենք այդ տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-

ապրանքային տնտեսություններ են։ Իսկ ինչ բան է մանրապրանքային տնտեսությունը։ Սա մի տնտեսություն է, վոր կանգնած է կապիտալիզմի և սոցիալիզմի միջև, նրանց ուղեկտուրի վրա։ Նա կարող է զարգանալ թե՛ կապիտալիզմի կողմը, ինչպես այդ այժմ տեղի յե ունենում կապիտալիստական յերկիրներում, թե՛ սոցիալիզմի կողմը, ինչպես այդ պետք է տեղի ունենա մեզ մոտ, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ։

Ինչից են, վոր գյուղացական տնտեսությունն այդպես անկայուն է, ինքնուրույնությունից զուրկ։ Ինչո՞վ բացատրել այդ։

Այս բացատրվում է գյուղացական տնտեսությունների ցրվածությամբ, նրանց անկազմակերպությամբ, նրանց կախումով՝ քաղաքից, ինդուստրիայից (խոշոր արդյունաբերությունից), վարկային սիստեմից, յերկրում տիրող իշխանության բնույթից։ վերջապես, բացատրվում է այն հանրածանոթ փաստով, վոր գյուղը գնում է և պիտի գնա քաղաքի յետևից, ինչպես նյութական, նույնպես և կուլտուրական տեսակետից։

Գյուղացական տնտեսության զարգացման կապիտալիստական ուղին՝ զարգացումն է գյուղացության ամենախորը դիֆերենցիացիայի (շերտավորման) միջով, ըստ վորում մի բևեռում կուտակվում են խոշոր լատիֆունդիաները (կալվածները), իսկ մյուս բևեռում՝ մասսայական չքավորությունը։ Կապիտալիստական յերկիրներում զարգացման այս ուղին անխուսափելի չե, քանի վոր գյուղը, գյուղացական տնտեսությունը կախման մեջ է քաղաքից, ինդուստրիայից, քաղաքում կենտրոնացած վարկից, իշխանության բնույթից։ իսկ քաղաքում էլ թագավորում է բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը։

Պարտադի՞ր է, արդյոք, գյուղացական տնտեսությունների զարգացման այսպիսի ուղին մեր յերկրի համար, վորտեղ քաղաքը միանգամայն այլ կերպարանք ունի, վորտեղ ինդուստրիան գտնվում է պրոլետարիատի ձեռքին, վորտեղ փոխա-

դրական միջոցները, վարկային սիստեմը, պետական իշխանությունը և այլն, կենտրոնացած են պրոլետարիատի ձեռքին, վորտեղ հողի ազգայնացումը յերկրում ընդհանուր որենք է հանդիսանում։ Իհարկե, պարտադիր չե։ Ընդհակառակը։ Հենց այն պատճառով, վոր քաղաքը գյուղի դեկավարն է հանդիսանում, իսկ քաղաքում մեզ մոտ թագավորում է պրոլետարիատը, վոր իր ձեռքին ունի ժողովրդական տնտեսության բոլոր իշխող բարձունքները, հենց այս պատճառով, գյուղացական տնտեսության զարգացումը պետք է ընթանա այլ ուղիով, այն է՝ սոցիալիստական շինարարության ուղիով։

Վ.Ի.Ն է այդ ուղին։

Դա միլիոնավոր գյուղացական տնտեսությունների մասսայական կոոպերացման ուղին է կոոպերացիայի բոլոր ուղղություններով, գյուղացական ցան ու ցիր տնտեսությունները սոցիալիստական ինդուստրիայի շուրջը համախմբելու ուղին է, գյուղացության մեջ կոլեկտիվիզմի սկզբունքների արմատացման ուղին է—նախ՝ յերկրագործության պրոդուկտներն սպառելու և գյուղական տնտեսություններին քաղաքի գործվածքները մատակարարելու գծով, ապա և գյուղատնտեսական արտադրության գծով։

Յեվ քանի գնա, այնքան ավելի անխուսափելի է դառնալու այս ուղին պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում. վորովհետև կոոպերացումը սպառման գծով, կոոպերացումը մատակարարման գծով, վերջապես կոոպերացումը՝ վարկի ու արտադրության գծով (գյուղատնտեսական ընկերությունները) միակ ուղին են հանդիսանում գյուղի բարորությունը բարձրացնելու համար, միակ միջոցն են հանդիսանում գյուղացության լայն մասսաներն աղքատությունից և քայքայումից փրկելու համար։

(Մտալին. «Բայշևիկ» № 3, յեր. 36—37)։

ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱՐԴՆ Ե

Տնտեսական շինարարության ասպարիզում հաջողությունը յելակետ է ընդունում այն, վոր մեր յերկիրը՝ պրոլետարիատի

դիկտատուրայի յերկիրն ունի «բոլոր անհրաժեշտ ավյալները լիակատար սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու համար» (Լենին)։ Համագումարն ընդունում է, վոր այն պայքարը, վոր մղվում է Մ. Ս. Հ. Մ-յան մեջ հանուն սոցիալիստական շինարարության հաղթանակի, մեր կուսակցության հիմնական խընդիրն է հանդիսանում։ Հաշվետու տարին լիովին ապացուցեց այս դրությունների ճշտությունը։ Նախ քան այլ յերկիրներում իշխանության գրավումը պրոլետարիատի կողմից, սրա անպայման ոժանդակությամբ և առանց այսպես կոչված «ոգնության» ոտարերկրյա կապիտալի կողմից, մեր յերկրում մասնավոր կապիտալի դեմ անդադար պայքար մղելով, բանվոր դասակարգը գյուղացության հիմնական մասսայի հետ միացած, արդեն իսկ առաջին լուրջ նվաճումներին է հասել սոցիալիստական շինարարության մեջ։

Անցած տարին բնորոշվեց ժողովրդական տնտեսության ուժեղ աճումով իր ամբողջության վերցրած, այս աճումը մոտեցնելով մինչպատերազմյան մակարդակին, նույնպես և նրա առանձին ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղական տնտեսության, տրանսպորտի, արտաքին առևտրի, վարկային սիստեմի ու բանկերի, պետական յել և մտի և այլն, աճումով։ Ժողովրդական տնտեսության ներսում, նրա բաղկացուցիչ մասերի (ընական-գյուղացական տնտեսություն, մանր ապրանքային արտադրություն, մասնաւորական կապիտալիզմ, պետական կապիտալիզմ) բոլոր բազմազանությամբ վերցրած, առանձին թափով բարձրանում է սոցիալիստական արդյունաբերության, պետական և կոոպերատիվ առևտրի, ազգայնացրած վարկի և պրոլետարական պետության այլ իշխող բարձունքների տեսակարար կշիռը։

Այսպիսով, ակներև է պրոլետարիատի տնտեսական առաջխաղացությունը նոր տնտեսական քաղաքականության հիմունքների վրա և Մ. Ս. Հ. Մ-յան եկոնոմիկայի շարժումը սոցիալիզմի ուղղությամբ։ Պետական սոցիալիստական արդյունաբերությունը հետզհետե ավելի ու ավելի յե դառնում ժողովրդական

տնտեսության այն ավանգարդը, վորն իր յետեվից տանում է ժողովրդական ամբողջ տնտեսությունը։

(XIV կուսհամագումարի բանաձևերից. Ստալին. «Կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվետվությունը Ռ. Կ. Կ. (բ.) XIV համագումարին»)։

ՀԱՐՑԵՐ 1. ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի՞նչ պատճառներից և առաջանում գյուղի յենթարկումը քաղաքին։

2. Ի՞նչ դեր է կատարում խոշոր արդյունաբերությունը գյուղը քաղաքին յենթարկելու գործում։

3. Ինչպիսի՞ արդյունաբերություն է հիմք հանդիսանում ամբողջ խոշոր արդյունաբերության։

4. Վորտե՞ղ է կենտրոնացած Ս. Ս. Հ. Մ-ության հիմնական արդյունաբերությունը։

5. Կապիտալիստական քաղաքն ինչ յեղանակներով է շահագործում գյուղը։

6. Կարո՞ղ է արդյոք գյուղացությունը շահագործումից ու ճնշումից ազատվել կապիտալիզմի պայմաններում։

7. Ինչպե՞ս են դասավորվում քաղաքի ու գյուղի հարաբերությունները պրոլետարատի տիրապետության որոք։

8. Ինչո՞ւ յե գյուղացին շահագրգռված խոշոր արդյունաբերության զարգացման մեջ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1. ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Գյուղխորհրդում պարզեք՝ քանի՞ գութան ու մեքենա կան ձեր գյուղում. պարզեք նույնպես, քանի՞ արոր կա հետամնաց անտեսությունների մեջ։

2. Պարզեք՝ ինչպե՞ս եր բաշխված հողը ձեզ մոտ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, և համեմատեցեք, ո՞ւմ մոտ այժմ ջատ հող կա՝ կուլակների՞, թե չքավորների ու միջակների (հողի ինչ տեղափոխումն է կատարվել)։

3. Պարզեք՝ գյուղն ո՞ւմ եր ծախում հացն առաջ, և ո՞ւմ է ծախում այժմ։

ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական յերկիրներում պետական իշխանությունը կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքին է գտնվում յեվ ծառայում է նրանց։ Աշխատավորության ճնշելու

Առաջին զրույցից գիտենք, վոր բուրժուական բոլոր յերկիրներում կապիտալիստներ ու կալվածատերեր կան և, վոր նրանք ճնշում են բանվորներին ու գյուղացիներին, ստրկացնում նրանց և նրանց հաշվին հարստանում։ Կապիտալիստներն ու կալվածատերերը շահագրգռված են, վոր այսպիսի կարգերը, վորքան կարելի յե յերկար պահպանվեն։ Սակայն բանվորներին ու գյուղացիներին ճնշել նրանք կարող են միայն այն ժամանակ, յերբ իշխանությունն ու պետությունը նրանց ձեռքին է գտնվում։

Նրանց ինչքին է հարկավոր իշխանություն։ Վորպեսզի պահպանեն այն կարգերը, վորոնք իրենց ձեռնտու յեն, վորպեսզի ճզմեն բանվորներին ու գյուղացիներին, վորպեսզի իրենց իշխանությունը, իրենց գործարաններն ու հողը պաշտպանեն բանվորներից ու գյուղացիներից։ Պաշտպանել էլ հի հարկավոր է, քանի վոր կապիտալիստներն ու կալվածատերերը քիչ են, այնինչ՝ ճնշված բանվորներն ու գյուղացիները, վորոնք իրենց ճնշողներին ատում են, միլիոններ են կազմում։

Սրա համար էլ բուրժուազիան ստեղծում է իր բուրժուական բանակը, նավատորմ, վոստիկանությունը, դատարանը, վորոնց ոգնությամբ էլ հպատակության մեջ է պահում բանվորներին ու գյուղացիներին։ Իսկ վորպեսզի չասեն, թե, տես, բուրժուազիան ապորինություն է կատարում, ճնշում է և այլն,

նա որենքներ է հրատարակում, ի հարկե, իր համար ձեռնտու, և այդ որենքները խախտելու համար աշխատավոր բանվորներին ու գյուղացիներին պատժում։ Բայց և իր ձեռքով գրած որենքներն էլ բուրժուազիան խախտում է, երբ տեսնում է, որ նրանք իրեն համար անձեռնտու չեն դառնում։

Այսպես չեղավ Անգլիայում այս տարվա (1926) գարնանը։ Այնտեղ բռնկվեց անգլիական ընդհանուր գործադուլը։ Գործադուլ էին արել Անգլիայի բոլոր բանվորները. նրանք աջակցում էին անգլիական ածխափորերի պայքարին կապիտալիստների դեմ, որոնք ուզում էին հանքահորերի բանվորներին ստիպել ավելի փոքր աշխատավարձով ավելի շատ աշխատել։ Ցեվ ահա, անգլիական կապիտալիստները, որոնց համար այդ գործադուլը ձեռնտու չեր (նա 7 որվա ընթացքում նրանց առագին միասներ հասցրեց, քանի որ բոլոր գործարանները կանգնել էին, շոգենավերն ու յերկաթուղու գնացքները չէին գընում և այլն), խախտեցին գործադուլի ազատության որենքը։ Նրանց ցուցմամբ Անգլիայի գերագույն դատարանը գործադուլն ապօրինի ճանաչեց։ Իսկ այդ նշանակում եր, որ այժմ կարելի չե բանվորներին կալանավորել, դատել և պատժել գործադուլներին մասնակցելու համար։ Այս նշանակում եր, որ կապիտալիստների բանակն ու վոստիկանությունը այժմ կարող են ցրել գործադուլավորներին։

Այսպես ահա, բուրժուազիան վոչնչացնում է իր իսկ ձեռքով գրած որենքները, յերբ նրանք իր համար անձեռնտու չեն։

Մենք տեսնում ենք, որ բուժուական յերկիրներում դատարանն ու որենքները մի բուռն կապիտալիստների շահերն են պաշտպանում։

Իսկ ո՞ւմ շահերն է պաշտպանում բանակը և ինչի՞ համար է ստեղծված նա։ Բուրժուական յերկրներում բանակն էլ նույնպես կապիտալիստների շահերն է պաշտպանում։ Կապիտալիստները բանակը պահում են պատերազմների համար, իսկ բանվորներին ու գյուղացիներին բանակ հարկավոր չէ, քանի որ նրանք հակառակ են իմպերիալիստական պատերազմներին. Այսպիսի պատերազմը բացի ավերումից, նրանց վոչինչ չի տալիս։

Այնինչ, մի յերկրի կապիտալիստներն ու կալվածատերերը ժամանակ առ ժամանակ պատերազմում են մի ուրիշ յերկրի կապիտալիստների ու կալվածատերերի հետ մեծ շահումներ (барыш) ստանալու համար։ Իսկ ինչպիսի՞ շահումների համար են նրանք պատերազմում։

Կապիտալիստներին ու կալվածատերերին հարկավոր է, որքան կարելի յե շատ ծախել այն ապրանքներից, որ ստացվում են գործարաններում, գյուղատնտեսական պրոդուկտներ ծախել ավելի մեծ քանակությամբ, քան կարող են ծախել իրենց յերկրում։ Սրա համար նրանք նոր շուկաներ են փորոնում ուրիշ յերկիրներում։ Սակայն այդ շուկաներն արդեն բաժանված են, և համարյա ամեն տեղ նոր շուկաներում փորձ յերկրի կապիտալիստ ու կալվածատեր կարգադրություններ են անում։ Յերբ նրանք չեն կարողանում շուկաներն իրենց մեջ բաժանել, սկսում են պատերազմել միմյանց հետ։ Բանվորն ու գյուղացին կասի, ինձ ինչ. թող նրանք պատերազմեն իրար հետ, թող կռվեն ու իրար բողազ պատռեն։

Բայց ախր, բուրժուազիան ինքը չի պատերազմում։ Նա, իր շահերը պաշտպանելու համար, ստիպում է բանվորին ու գյուղացուն պատերազմել։ Նա բանակը նրանցից է կազմում, միայն թե նրանց գլխին իր հավատարիմ սպաներն ու պետերն է դնում։

Իսկ յերբ պատերազմ չկա, այս բանակը բանվորների ու գյուղացիների ապստամբությունն է ճնշում։

Մենք տեսնում ենք, որ կապիտալիստական յերկիրներում բանակն էլ (ինչպես և նավատորմը) բուրժուազիայի շահերն է պաշտպանում։ Բանվորն ու գյուղացին բուրժուական բանակից ճնշումից բացի վոչինչ սպասելիք չունեն։

Վոստիկանությունն էլ բուրժուազիային հավատարիմ մարդկանցից են կազմում։ Վոստիկանությունը կապիտալիստների իշխանության հատուկ կարգերն է պահպանում, այսինքն՝ բանվորի ու գյուղացու ճնշման ու ստրկացման կարգերը։ Նա ճնշում է բանվորների ու գյուղացիների՝ բուրժուազիայի ճնշումից ազատվելու ամեն մի փորձ։

Բուրժուական յերկրում իշխանությունը գտնվում է մի բուռն կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքին։ Այս իշխանությունը բուրժուազիայի շահերն է պաշտպանում։

Այս իշխանությունը պահպան է հանդիսանում բուրժուազիայի իրավունքների՝ բանվորներին ու գյուղացիներին ճնշելու ու կապանքի մեջ պահելու։

Այս իշխանությունը դատարան, բանակ, վոստիկանություն է ստեղծում, որենքներ հրատարակում ի պաշտպանություն կապիտալիստների ու կալվածատերերի յեվ, իհարկե, ընդդեմ բանվորների ու գյուղացիների։

Այս դեռ քիչ է. դատարան, բանակ և վոստիկանություն ստեղծելով բուրժուազիան ստիպում է, վոր հենց իրենք՝ բանվորներն ու գյուղացիները հոգան սրանց ծախսերը։

Ինչպե՞ս։

Քանի վոր իշխանությունը բուրժուազիայի ձեռքն է. նա է որենքներ հրատարակում։ Նա փող է հավաքում իր իշխանության պահպանման համար։ Նա տուրքեր է դնում ազգաբնակության վրա։ Իհարկե, կապիտալիստներն ու կալվածատերերը շահագրգռված են, վորքան կարելի յե, քիչ տուրք վճարել։ Իսկ բանակը, դատարանը, վոստիկանությունը խիստ պետք է պահպանել։ Սրա համար բուրժուազիան տուրքերի ամբողջ ծանրությունը բանվորների ու գյուղացիների վրա յե դնում։ Այս մենք տեսնում ենք բուրժուական յերկիրների բանվորների ու գյուղացիների կյանքից։

Գերմանիայում այժմ հողային հարկը վճարվում է համաձայն հողի արժեքի։ Իսկ հողը միատեսակ չի գնահատվում։ Մեր գյուղացին կասի. «Այդ հասկանալի յե, հողը լավ է, ուրեմն ավելի թանկ արժե»։ Սակայն Գերմանիայում այդպես չե։ Այնտեղ պաշտպանում են կալվածատերի շահերը։ Յեթե գյուղացին հող ունի, ապա՝ թեկուզ նրա հողը վատն էլ լինի, տուրքերը վորոշելիս, նրա հողի դեսյատինը գնահատում են 100 ռ. իսկ կալվածատերինը, վորը հող շատ ունի, հողն էլ ավելի յաքին է, գնահատում են 25-50 ռուբլի։ Ինչո՞ւ յեն այդպես անում։

Վորպեսզի կալվածատերն յուրաքանչյուր դեսյատինից ավելի քիչ վճարի, քան գյուղացի չքավորն ու միջակը. վորպեսզի տուրքերի ամբողջ ծանրությունը գյուղացու վրա ընկնի։

Մեզ մոտ էլ, ցարական Ռուսաստանում, այդպես էր. մինչդեռ գյուղացին դեսյատինին վճարում էր 49 կոպեկ, կալվածատերը վճարում էր միայն 5 կոպ., այսինքն, տասն անգամ քիչ։ Զեմստվոն էլ, վորտեղ դեկավարները կալվածատերեր էին, այդ անհավասարությունը պաշտպանում էր։ Ինչո՞ւ։ Վորովհետև ցարական կարգերը կալվածատիրոջ ու կապիտալիստի շահերն էին պաշտպանում. քայքայված գյուղացու հետ նրանք գործ չունեին։

Իսկ ինչպես է այժմ մեզ մոտ՝ Ս.Ս.Հ. Միության մեջ։ Ո՞վ է ավելի տուրք տալիս, չքավորը, միջակը, թե կուլակը։

Մեզ մոտ չքավոր տնտեսությունների 20 տոկոսը բոլորովին ազատ է տուրքից։ Դրա փոխարեն, ունևորներն ու կուլակներն ավելի յեն վճարում, քան չքավորներն ու միջակները։ Կուլակը և ունեվորը պարտավոր են ավելի վճարել յուրաքանչյուր դեսյատինի համար։

Քանի շատ դեսյատին ես ցանել, քանի շատ հաց ես ըստացել, այնքան էլ շատ պետք է վճարես ամեն մի դեսյատինին, ամեն մի փթին։ Ժողովրդային իշխանությունը չքավորի և միջակի շահերն է պաշտպանում։

Բուրժուական պետությունը վոչ միայն պաշտպանում է կապիտալիստների ու կալվածատերերի շահերը, այլ յեվ բոլոր տուրքային ծանրությունները, բանակի, նավատորմի, դատարանի վոստիկանության պահպանությունը, ճնշված բանվորների ու գյուղացու ուսին է բարձում։

Կապիտալիստական յերկրների բուրժուազիան ասում է, վոր նրանց մոտ, նրանց յերկրում դեմոկրատիա յե, այսինքն՝ իշխանությունը պատկանում է ամբողջ ժողովրդին, քանի վոր իբր թե, ինքը՝ ժողովուրդն է ընտրում պարլամենտները, ինքն է որենքներ հրատարակում։ Բայց մենք գիտենք, վոր այդպիսի ժողովրդական իշխանությունից բանվորներն ու գյուղացինե-

բը լավ որ չեն տեսնում։ Իրապես վոչ մի ժողովրդական իշխանություն չկա, այլ կա մի խումբ կապիտալիստների ու կալվածատերերի իշխանություն։ Կա բուրժուազիայի դիկտատուրա։ Հապա ինչու՞ չեն կապիտալիստներն ու կալվածատերերը ծածկում այս և աղաղակում ժողովրդական դեմոկրատական իշխանության մասին։

Վորովհետև մլիոնավոր աշխատավորների վրա իրենց իշխանությունը պահպանելու համար հարկավոր է այդ աշխատավորներին խաբեության մեջ գցել։ Բուրժուազիան կապիտալիստական յերկիրներում ձևականորեն ընդհանուր ընտրական իրավունք է մտցնում (իհարկե, բանվորների ու գյուղացիների համար ամեն տեսակ սահմանափակումներով)։ Իսկ ընտրությունների ժամանակ նա ոգտվում է իր հարստությունով և այն ստրկական դրությամբ, վորի մեջ գտնվում են բանվորներն ու գյուղացիները. նա ամեն միջոց գործ է դնում աշխատավորներին խաբելու և այսպիսով իր թեկնածուներն է անց կացնում։

Նրանք կանգ չեն առնում նույնիսկ այսպիսի միջոցների առաջ. որինակ Ամերիկայում, կապիտալիստներն ընտրությունների ժամանակ քաղցած գործազուրկների ձայները գնում են և վճարում նրանց 2 ռուբլի, 4 ռուբլի նրա համար, վոր սրանք ձայն տան այն թեկնածուներին, վորոնք ձեռնտու յեն կապիտալիստներին ու կալվածատերերին։

Միաժամանակ, նրանք իրենց վոստիկանության, դատարանների, ձերբակալությունների, կոմմունիստական լրագրերը փակելու, բանվորական ժողովները ցրելու և այլ բռնությունների, մինչև իսկ սպանությունների միջոցով, աշխատում են կոմմունիստների բերանը փակել, վորոնք աշխատավորների աչքերը բաց են անում բուրժուազիայի խաբեբայությունների ու սրիկայական արարքների առաջ։ Վերջ ի վերջո, պարլամենտները կամ այլ որենսդրական ընտրական որգաններն են ընկնում մեծ մասամբ կապիտալիստների ու կալվածատերերի կողմնակիցները, նրանց շահերի պաշտպանները։ Յեվ յեթե պարլա-

մենտն այնուամենայնիվ բուրժուազիային հաճելի չի լինում, նրան արձակում են։

Սրանից յերևում է, վոր կապիտալիստական յերկիրներում ժողովուրդը վոչ մի իշխանություն չունի, վոր բանվորներն ու գյուղացիներն այնտեղ պետությունը չեն կառավարում։ Այնտեղ մի խումբ կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունն է, վորոնք ճնշում են բանվորներին ու գյուղացիներին։ Այդպիսի *ժողովրդական իշխանությունը* մի ծանր քար է բանվորների ու գյուղացիների վզին։ Այդպիսի ժողովրդական իշխանությունը խաբեություն է աշխատավորների համար։

Խորհրդային պետությունը աշխատավորների պետություն է

1917 թվի հոկտեմբերին մենք ազատեցինք կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունից։ Գործարանների ու հողի հետ միասին իշխանությունն էլ աշխատավորների ձեռք անցավ։ Մենք ստեղծեցինք խորհրդային պետություն։ Ինչով է տարբերվում այս պետությունը բուրժուական պետությունից։

Կապիտալիստները, կուլակն ու առևտրականները մեզ մոտ, խորհրդային որենքներով, խորհրդային սահմանադրության համաձայն, զրկված են քաղաքական իրավունքներից, այսինքն՝ ընտրություններին մասնակցելու և յերկիրը կառավարելու իրավունքներից. կալվածատերեր էլ մեզ մոտ բոլորովին չկան, քանի վոր ամբողջ հողը խլված է նրանցից։ Սրա համար էլ խորհրդային պետությունը կառավարում են իրենք՝ աշխատավորները, մինչդեռ բուրժուական յերկիրներում պետությունը կառավարում են աշխատավորների շահագործողները։

Մեր գյուղական խորհուրդներն ընտրվում են գյուղի չքավորների և միջակ գյուղացիների կողմից, և ամեն ժամանակ, յերբ ազատ ու միջակը գործում են միասին՝ մեր կոմմունիստական կուսակցության ղեկավարության տակ, խորհուրդները նրանց ձեռքին են գտնվում և նրանց ոգտին աշխատում, և վոչ թե գյուղական կուլակների ու հարուստների։ Նույնն են և մեր գավառական և շրջանային գործադիր կոմիտեները։

րը, քանի որ նրանք ընտրվում են գյուղական խորհուրդների համագումարներում, իսկ այդ համագումարներում դժվար չե արնպիսի շրջգործկոմ ընտրել, որ չքավորների ու միջակների շահերին ծառայի։ Թվերը ցույց են տալիս, որ մեր յերկրում գյուղական խորհուրդների անդամների ամեն 100 հոգուց 95-ը չքավորներից ու միջակներից են, իսկ շրջգործկոմների և գավառակային գործկոմների անդամներից 82-ը աղքատ կամ միջակներ են։

Քաղաքային խորհուրդներն ընտրվում են բանվորների ու ծառայողների կողմից. սրանց մեջ էլ անպին մեծամասնությունը բանվորներ են։ Քաղաքների ամբողջ կառավարությունը մեզնում բանվորների ձեռքին է, և վոչ թե գործատերերի և վաճառականների, ինչպես առաջ էր, մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը։

Մեր գավառները խորհուրդների գավառային համագումարներն են կառավարում. իսկ համագումարների ընդմիջումների ժամանակամիջոցին՝ գավառային գործադիր կոմիտեները։ Իսկ ովքե՞ր են ընտրվում այդ համագումարների և այդ գործադիր կոմիտեների կազմի մեջ։ Բանվորները և գյուղացիները (չքավորներն ու միջակները), մասամբ էլ ծառայողները։ Գավառակային գործադիր կոմիտեների անդամների յուրաքանչյուր 100 հոգուն ընկնում է 50 բանվոր, 35 գյուղացի, և 15 ծառայող։

Նույն դրությունն է նաև խորհուրդների նահանգական և յերկրային համագումարներում և նրանցից ընտրված գործադիր կոմիտեներում։ Նույնն է և Ռ. Ս. Խ. Միության մեջ մրցնող դաշնակից և ավտոնոմ հանրապետությունների խորհուրդների համագումարների և կենտրոնական գործադիր կոմիտեների նկատմամբ, նույնպես և խորհուրդների համամիութենական համագումարի և Ռ. Ս. Խ. Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեի նկատմամբ, որոնց պատկանում է յերկրի կենտրոնական ղեկավար իշխանությունը։

Բուրժուական յերկրների պարլամենտներում կապիտալիստների և կալվածատերերի ներկայացուցիչներն են նստած։ Մեզ մոտ խորհուրդների համամիութենական համագումարում և

Ռ. Ս. Խ. Միության կ. Գ. կ.-ի մեջ այն որենքները, որոնցով կառավարում է ամբողջ յերկիրը, քննվում և հաստատվում են բանվորների և գյուղացիների (չքավորների և միջակների) կողմից։ Բուրժուական յերկրներում, տեղերում, այսինքն՝ նահանգներում, գավառներում, գյուղերում և քաղաքներում, բոլոր իշխանությունները յենթարկվում են պարլամենտներին և մինիստրություններին, որոնք կապիտալիստների և կալվածատերերի ցուցմունքով են գործում։

Մեզ մոտ, խորհուրդների համամիութենական համագումարի ընդմիջումների ժամանակ տեղերի բոլոր խորհուրդների, ամբողջ իշխանության ղեկավարը Ռ. Ս. Խ. Միության կ. Գ. կ. ե և Ժողկոմխորհը, որոնք բանվորների ու գյուղացիների համամիութենական համագումարներում վերջիններիս ներկայացուցիչների ցուցմունքների համաձայն և նրանց շահերի ոգուն են գործում։

Բուրժուական յերկրներում վոստիկանությունն ու դատարանը գործում են միացած, պաշտպանելու՝ կապիտալիստների սեփականությունն ու յեկամուտները, նրանց պետական կարգերը՝ ընդդեմ բանվորների և գյուղացիների։

Մեր խորհրդային միլիցիան և դատարանը, որտեղ նույնպես բանվորները և չքավոր ու միջակ գյուղացիներն են նըստած (և՛ վորպես դատավոր, և՛ վորպես ժողովրդականատենակալ) հեղափոխական բոլոր խստությամբ հետապնդում և պատժում են նրանց, ով մեր յերկրում աշխատավորների շահերն ե խանգարում ու աշխատավորների իշխանությանը վնասում։

Բուրժուական պետությունների մեջ բանակը ծառայում է թույլ ժողովուրդներին ճնշելու և թալանելու, մի յերկրի բուրժուազիային պաշտպանելու՝ ընդդեմ մյուս յերկրների բուրժուազիայի, և վոր գլխավորն ե, այն բանվորներին ու գյուղացիներին ճնշելու, վորոնք ապստամբում են բուրժուազիայի իշխանության դեմ։

Մեր կարմիր բանակը պաշտպանում է Ռ. Ս. Խ. Միությունը, պաշտպանում է աշխատավորներին կապիտալիստական

երկիրների բուրժուազիայի հարձակումներից և երկրի ներսում հակահեղափոխությունից (հիշեցեք քաղաքացիական պատերազմը): Սա բանվորագյուղացական բանակ է, և կառավարվում է բանվորների և գյուղացիների կողմից: Սրանց միջից է, առաջին հերթին, սովորեցվում ու պատրաստվում բանակի հրամանատարական կազմը: Ցերկիրը և նրա խորհրդային իշխանությունը գենքը ձեռին պաշտպանելու պատվավոր իրավունքը պատկանում է միայն աշխատավորներին: Վոչ աշխատավոր տարրերը կարմիր բանակում միայն ոժանդակ աշխատանքներ են կատարում, բանակին սպասավորում, պատերազմի ժամանակ խրամատներ փորում և այլն: Վերջապես, պիտի աչքի առաջ ունենալ երկու հիմնարկություն էլ. սրանք են՝ դպրոցը և չեկեղեցին:

Բուրժուական պետությունների մեջ դպրոցներում սովորեցնում են այն և այնպես, ինչը և ինչպես կապիտալիստներին է հարկավոր: Ցեկեղեցին ու կրոնն էլ բուրժուական երկրներում կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքին մի պարծիք են հանդիսանում, բանվորներին ու գյուղացիներին հնազանդության մեջ պահելու, նրանց սանձելու համար:

Ա. Ս. Հ. Միության մեջ դպրոցը սովորեցնում է, թե ինչպես բանվորներն ու գյուղացիները ավելի լավ կարողանան ժողովրդական տնտեսություն կառուցել, ինչպես աշխատավորների շահերն ավելի լավ պաշտպանել: Ա. Ս. Հ. Միության մեջ գիտությունը բոլորի համար է, իսկ բուրժուական երկրներում միայն ունևոր դասակարգերն են գիտություն ստանում:

Կրոնը Ա. Ս. Հ. Մ.-Թյան մեջ պետության պաշտպանությունը չի վայելում, չեկեղեցին բաժանված է պետությունից, դպրոցն էլ՝ չեկեղեցուց:

Այսպիսով, բուրժուական երկրներում պետական իշխանությունը ծառայում է բանվորների, չքավոր ու միջակ գյուղացիների չեվ նրանց հետ ամբողջ աշխատավորությունը ճնշելու չեվ մի խումբ կապիտալիստների ու կալվածատերերի շահերը պաշտպանելու համար:

Իսկ մեր երկրում խորհրդային իշխանությունը աշխատավորների, բանվորների չեվ չքավոր ու միջակ գյուղացիների բազմամիլիոն մասսայի շահերին է ծառայում:

Այս նրանից է, որ բուրժուական երկրներում պետական իշխանության ղեկավարները կապիտալիստներն են. այնտեղ բուրժուազիայի դիկտատուրա չե. իսկ մեզ մոտ Խորհրդային իշխանության ղեկավարը բանվոր դասակարգն է չեվ նրա դաշակցությունը. մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա չե:

Պրոլետարիատի դիկտատուրան բանվորների չեվ գյուղացիների դաշինքն է՝ բանվոր դասակարգի ղեկավարության տակ: Սա չե խորհրդային իշխանության հիմքը:

Առաջին զրույցից մենք գիտենք, որ բուրժուազիայի դիկտատուրան ժամանակակից կապիտալիստական երկրներում խոշոր արդյունաբերության վրա չե հենվում: Նա տեր է խոշոր արդյունաբերության, ուստի և տեր է պետական իշխանության:

Հենց առաջին զրույցում էլ մենք տեսանք, որ մեզ մոտ բանվոր դասակարգն է, որ ստեղծում, կառուցում, կազմակերպում է խոշոր արդյունաբերությունը: Դրա համար էլ նա չե ղեկավարում խորհրդային պետությունը: Նրա այդ ղեկավարությունն է, որ կոչվում է պրոլետարիատի դիկտատուրա:

Կապիտալիստների ու կալվածատերերի համար բանվոր դասակարգի դիկտատուրա նշանակում է նրանց տիրապետության վոչնչացումը և նրանց իշխանությունը վերականգնելու ամեն մի փորձի ճնշումը: Գյուղացիական մասսայի համար պրոլետարիատի դիկտատուրան բանվոր դասակարգի ղեկավարությունն ու նրա ոգնությունն է նշանակում:

Վլադիմիր Իլյիչը սովորեցնում էր մեզ, որ պրոլետարիատի դիկտատուրան բանվորների չեվ գյուղացական մասսայի դաշինքն է բանվոր դասակարգի ղեկավարությամբ: Վլադիմիր Իլյիչը ժամանակ է, որ այս միության մեջ բանվոր դասակարգի ղեկավարող ղերը հարկավոր է, վորպեսզի կարելի լինի ճնշել բուրժուազիայի ամեն մի դիմադրություն, վերջնականապես հաղթել բուրժուազիային չեվ գյուղացական մասսայի հետ միասին սոցիալիզմը կառուցել:

Բայց ինչո՞ւ յե հարկավոր գյուղացիական մասսային այդ դաշինքը յեվ բանվոր դասակարգի այդ ղեկավարությունը:

Յեթե մեզնից ամեն մեկը լավ նայի և հիշի, թե ինչպես խորտակվեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը, կասի, վոր նա խորտակվեց բանվոր դասակարգի ղեկավարությամբ, վորը կալվածատերի դեմ իրենց հողի համար կռվող չքավոր և միջակ գյուղացիության առաջից եր գնում: Առանց բանվոր դասակարգի յեվ նրա կուսակցության՝ կոմմունիստ բոլշևիկների՝ հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթանակել չեր կարող: Առանց այդ ղեկավարության չեյինք կարող քաղաքացիական կռվում կապիտալիստների և կալվածատերերի կատաղի դիմադրությունը ճնշել: Յեթե քաղաքացիական կռվում ել բանվոր դասակարգն առաջից չընթանար, յեթե չքավոր ու միջակ գյուղացիները կապիտալիստների ու կալվածատերերի՝ սպիտակ բանակների դեմ կռվելու համար բանվոր դասակարգի շուրջը չհավաքվեյին, այն ժամանակ կալվածատերերն ու կապիտալիստներն իրենց իշխանությունը յետ կխլեյին: Կալվածատերը նորից կնստեր աղքատ ու միջակ գյուղացիության վզին, հողը նորից կընկներ կալվածատերերի ձեռքը:

Ինչո՞ւ բանվոր դասակարգն եր ղեկավարում այդ կռիվը:

Վորովհետև նա ավելի կազմակերպված ե, ավելի համախմբված և քաղաքականապես ավելի զարգացած: Նա իրենից աշխատավորների մի ամրաձույլ մասսա յե ներկայացնում:

Ինքը՝ արտադրությունը, ինքը՝ կապիտալիստական արդյունաբերությունը, մանավանդ խոշոր արդյունաբերությունն ե միացրել բանվորներին և գործարաններում բազմահազար մասսաների վերածել: Վերցնենք որինակ, այնպիսի գործարաններ, ինչպես են՝ Պուտիլովին, Բրյանսկին կամ Սորմովոն: Ցարիզմի ժամանակ նրանցից յուրաքանչյուրի մեջ աշխատում եր 10,000 մինչև 30,000 բանվոր: Սրանք բոլորն ել գտնվում եյին աշխատանքի միատեսակ ծանր պայմաններում. Նրանց բոլորին ել հավասարապես շահագործում եյին կապիտալիստները:

Գործարանները կազմակերպում եյին բանվորներին կապիտալիստների դեմ միակուռ ու տոկուն կռվի համար և նրանց միջից բանվորների համար լավագույն ղեկավարներ դաստիարակում, բանվորական մասսայի ատելություն բորբոքում շահագործողների դեմ և կռվի պատրաստում նրանց դեմ:

Այսպիսով կապիտալիստական արդյունաբերությունը, արտադրությունը, գործարանը տասնյակ տարիների ընթացքում բանվոր դասակարգին պատրաստում եյին բոլոր շահագործողների ու ճնշողների դեմ կռվելու յեվ ճնշված աշխատավորների պայքարը ղեկավարելու՝ բուրժուազիայի յեվ կալվածատերերի դեմ:

Այլ եր գյուղացիության վիճակը: Նա ցան ու ցրիվ եր, միլիոնավոր մանր, անհատական տնտեսությունների բաժանված, վորոնք իրենց տնտեսական դրությամբ և շահերով համանման չեյին:

Իրեն շահագործող կալվածատերերի ու նրանց սպասավորների դեմ դժվարին կռվի մեջ գյուղացիությունը կարիք եր զգում միակուռ, կռվի մեջ յեփված, քաղաքականապես զարգացած մի դաշնակցի և ղեկավարի: Քանի դեռ այդպիսի դաշնակիցն ու ղեկավարը չկար, կալվածատերերի լուծը թոթափելու նրա բոլոր ջանքերը խորտակվում եյին:

Այդպիսի դաշնակից միայն բանվոր դասակարգը կարող եր լինել, միայն նրա ղեկավարությամբ կարելի յեր կալվածատերերին հաղթել, ապա յեվ նվաճած հողը պաշտպանել:

Հենց այժմ ել, յերբ մեզ մոտ կալվածատերեր այլես չը կան, գյուղացիությունը չի կարող առաջ շարժվել առանց բանվոր դասակարգի դաշինքի, առանց սրա ղեկավարության:

Բանվոր դասակարգն առաջվանից ել ավելի կազմակերպված, ավելի ձուլված, ավելի փորձված ե. Նախկին ստրկությունն ու ճնշումը լիովին և անհետ վոչնչացնելու և դեպի սոցիալիզմը դիմելու ուղին նրա համար այժմ ավելի պարզ ե: Նա առաջվա պես խոշոր գործարաններում ե աշխատում: Նա առաջինը յեղավ, վոր առանց կապիտալիստ տերերի, մեր յերկրում սկսեց կառուցել և այժմ ել կառուցում ե կատարելագործված մեքենաներով խոշոր, միացյալ սոցիալիստական ար-

պաղրուքյուն։ Մինչդեռ գյուղի չքավոր, առավել ևս միջակ գյուղացուքյունը, դեռ ելի բաժան-բաժան և ապրում և աշխատում մլլիոնավոր առանձին, մանր տնտեսուքյունների մեջ։ Դեռ ևս գյուղի չքավորուքյան և մանավանդ միջակ գյուղացուքյան շատ փոքր մասն է միայն գիտակցում, որ չքավորուքյունից և ամեն տեսակ քայքայման հնարավորուքյունից լիակատար և իսկական ազատումն այդ տնտեսուքյունների համախմբման և խոշոր տնտեսուքյուններ ստեղծելու մեջ է կայանում, նույնպես կատարելագործված մեքենաներով, նույնպես առանց կապիտալիստ, կալվածատեր ու կուլակ տերերի։

Այս բանում ել, ինչպես և կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետուքյունը խորտակելու համար մեր յերկրում նրանց դեմ մղված անցյալ կռվում, գյուղացի չքավորուքյունն ու միջակ մասը բանվոր դասակարգի ոժանդակուքյան և ղեկավարուքյան կարիքն ունեն։

Սոցիալիստական արդունաբերուքյունը կառուցող բանվոր դասակարգը միայն կարող է ղեկավարել յերկրի ամբողջ աշխատավոր ազգաբնակուքյունը դեպի սոցիալիզմը տանող ճանապարհին, հանուն որի մեր յերկրում խորտակվեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանուքյունը և խորհրդային պետուքյուն ստեղծվեց։

Ահա թե ինչու յե հարկավոր բանվոր դասակարգի ղեկավար դերը, նրա դիկտատուրան խորհրդային պետուքյան մեջ։

Խորհրդային սահմանադրուքյունն այնպես է կազմված, որ բանվոր դասակարգի այդ ղեկավարուքյունն ապահովի բանվորների, գյուղի չքավոր ու միջակ գյուղացուքյան դաշինքը դեպի սոցիալիզմը տանող ճանապարհին։ Հենց դրա համար ել սահմանադրուքյունը մի քանի առավելուքյուններ է տալիս բանվոր դասակարգին։ Այդ բոլոր առավելուքյունները նրանում են, որ խորհուրդների համագումարներում քաղաքային խորհուրդներն ուղարկում են՝ հազար ընտրողներից մեկ պատգամավոր, իսկ գյուղական ռայոնները ազգաբնակուքյան 5 հազարին 1 պատգամավոր։ Այս առավելուքյունը մեծ բան

չե, քանի որ մի ընտրողին միշտ ել 3-4 հոգի բնակչուքյուն է ընկնում։

Այսպիսի առավելուքյունը հիմնավորվում է բանվոր դասակարգի այն մեծ նշանակուքյամբ, որ նա ունեցավ կապիտալիստների և կալվածատերերի իշխանուքյան խորտակման մեջ, ինչպես և խորհրդային տնտեսուքյան գլխավոր հիմքի՝ խոշոր արդյունաբերուքյան և ելեքտրիֆիկացիայի կառուցման մեջ. այս հանգամանքը նրան առանձին նշանակուքյուն է տալիս յերկրի քաղաքական ղեկավարուքյան գործում։

Շնորհիվ այս հանգամանքի, շնորհիվ նրա մեծ չափով կազմակերպված, միահամուռ և դիտակից լինելուն և շնորհիվ այն վստահուքյան, որը բանվոր դասակարգը վայելում է գյուղացական մասսայի մեջ—շնորհիվ այս բոլորի, բանվոր դասակարգն անհրաժեշտ քանակուքյամբ ներկայացուցիչներ է ստանում խորհուրդների համագումարներում և գործադիր կոմիտեներում (վերից մինչ ներքև, գավգործկոմից մինչև Ս.Ս.Հ. Միության Կ.Գ.Կ.), նրա համար, որ իրապես իր ղեկավարուքյունն անցկացնի յերկրի ամբողջ կառավարության մեջ։

Խորհրդային պետուքյունն աշխատավորների իսկական դեմոկրատիա է

Ինչպես և պրոլետարիատն իրագործում է իր ղեկավարուքյունը խորհրդային պետուքյան և գյուղացական մասսայի վրա, Բուրժուազիան, ինչպես գիտենք, իր դիկտատուրան թագցնում է։ Սա, բուրժուական հանրապետուքյունների մեջ իր իշխանուքյունը համաժողովրդական, դեմոկրատական է անվանում. իսկ գործնականում ամեն տեսակ խորամանկ միջոցներով իշխանուքյունից հեռու է պահում ժողովրդի մեծագույն մասին՝ շահագործվող բանվորներին և գյուղացիներին։ Սրա հակառակ, բանվոր դասակարգը բացարձակ կերպով հայտարարում է, որ մեր յերկրում նրա դիկտատուրան է. բայց այդ դիկտատուրան նա այնպես է կիրառում, որ բոլոր աշխատավորներին մանակից է դարձնում իրենց յերկրի կառավարության մեջ։

Մենք արդեն տեսանք և գիտենք, որ խորհրդային պետուքյան մեջ այդ կիրառվում է վարից մինչ վեր, խորհրդա-

յին իշխանության ամենացած որգանից մինչև ամենաբարձրը։

Այս դեռ քիչ է. պրոլետարիատն իր գլխավոր, հիմնական խնդիրն է համարում այս։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, թե սոցիալիզմը միայն մի լիլիոնները կարող են կառուցել։ Մեր յերկրում աշխատավորների մի լիլիոնները՝ գյուղացիներն են։ Առանց գյուղացիների ժամանակցության սոցիալիզմին հասնել չի կարելի։

Վ. Ի. Լենինն ասում էր, որ խորհրդային պետության մեջ պրոլետարիատի խնդիրը նրանում է, որ նա «ի մի հավաքի» և «իր յետևից տանի» աշխատավոր ազգաբնակության բոլոր ցրված շերտերը, իսկ ամենից առաջ գյուղի չքավոր ու միջակ գյուղացության ցաք ու ցրիվ մասսան։ Առանց սրան պրոլետարիատը չի կարող հուսադրվել սոցիալիզմի վերջնական հաղթանակին։ Սակայն, բանվոր դասակարգը բոլոր աշխատավորներին «ի մի հավաքել» և «իր յետևից տանել» կարող է միայն բանվորության և գյուղացական մասսայի համար ընդհանուր, կենդանի գործ շինելով, գրավելով այդ մասսան պետության ու տնտեսության կառավարության մեջ, նրանց շարքերը խտացնելով և նրանց սովորեցնելով այդ կառավարությանը մասնակից դարձնելու միջոցով։

Ահա թե ինչու, ինչպես մատնանշում էր Վ. Ի. Լենինը, խորհրդային պետությունն է, որ հակառակ բուրժուական պետության, իրականացնում է իսկական, իրական դեմոկրատիան, այսինքն՝ աշխատավորների իսկական ժողովրդի իշխանությունը, գրավելով բանվորական ու գյուղացական մասսաներին «դեպի մշտական, անարգել, և, դրա հետ միասին, վճռական մասնակցություն պետության դեմոկրատական կառավարության մեջ»։ Այս նպատակով է ոգտագործում բանվոր դասակարգն այն առավելությունը, որ տալիս է նրան մեր տնտեսությունը։

Չքավոր և միջակ գյուղացին պետության և յերկրի տնտեսության կառավարության մեջ մասնակցելով ավելի ու ավելի չի վարժվում այն բանին, թե ինչպես, ինչ ճանապարհներով ազատվել քայքայումից և աղքատությունից։ Նա հետզհետե

ավելի չի համոզվում, որ այստեղ նրա համար կա միայն մի ճանապարհ, այն է՝ սոցիալիզմի ճանապարհը։ Յեվ հետզհետե նա ավելի կվստահնա բանվոր դասակարգին իր հայացքներով, իր ձգտումներով, իր կազմակերպվածությամբ և խըմբվածությամբ։ Յեվ, յերբ չքավոր և միջակ գյուղացությունն իրենց ամբողջ մասսայով, իրենց մեծամասնությամբ, բանվոր դասակարգի հետ միասին մի ճակատ կկազմեն, այն ժամանակ խորհրդային սահմանադրության մեջ բանվոր դասակարգին առավելություններ տալու կարիք չի լինի։ Այդ առավելությունները կվերանան։ Կոմմունիստական կուսակցության ծրագիրն էլ այդ է մատնանշում ասելով, որ բանվոր դասակարգի առավելությունները ժամանակավոր են և կպահպանվեն միայն այնքան, քանի դեռ բոլոր բանվորներն էլ սոցիալիզմի շինարարության ուղիով չեն ընթանում։

Այն որից, յերբ մեր յերկրի տնտեսությունն սկսեց աճել, սկսեց բարձրանալ նաև չքավոր գյուղացության և միջակ գյուղացության ակտիվությունը, նրանց գործունեությունը, նրանց մասնակցությունը խորհրդային աշխատանքների մեջ։ Իսկ այդ մասնակցության հետ միասին աճում է նույնպես գյուղացական մասսաների խտացումը (сплочение) խորհրդային իշխանության շուրջը՝ պրոլետարիատի և նրա կուսակցության ղեկավարության ներքո։

Քաղաքացիական կռվի ժամանակ միջակ գյուղացության շարքերում դեռ ևս մեծ տատանումներ կային այն հարցի շուրջը, թե՝ ում հարել. բանվոր դասակարգին՝ սպիտակ գվարդիականների դեմ, թե սպիտակ գվարդիականներին՝ բանվոր դասակարգի դեմ. խորհրդային իշխանությունը պաշտպանի՞, թե՝ նրա դեմ գնալ։ Այժմ, գյուղում միայն կուլակներն են խորհրդային իշխանության դեմ։ Նրանք աշխատում են ամեն բանում հակառակ գնալ խորհրդային իշխանությանը, որովհետև այս իշխանությունը նրանց չի սպասավորում, այլ համախմբում է գյուղացական մասսան նրանց դեմ։

Իհարկե, կուլակն ինքն ըստ ինքյան, առանց գյուղացական ճնշած մասսայի ոժանդակության, ուժ չունի. ահա թե

ինչու նա աշխատում է ամեն տեսակ ստությամբ իր կողմը քաշել չքավոր ու միջակ գյուղացիներին, իրեն նրանց «բարեբարը» ձևացնելով։

Քաղաքացիական պատերազմը և բանվոր դասակարգի ու նրա կուսակցության, խորհրդային պետության և յերկրի տնտեսության ճիշտ ղեկավարությունը միջին գյուղացությանը ցույց տվին, թե վոր կողմ պետք է գնալ, և գյուղի չքավորներին ավելի պինդ հավոդեցին նրանում, վոր գյուղացությունը մի ընդհանուր ճանապարհ ունի, այն է՝ պրոլետարիատի հետ։

Բանվորների, գյուղի չքավոր և միջակ գյուղացության դաշինքը պրոլետարիատի ղեկավարությամբ, նրա դիկտատուրայի պայմաններում, տարեց տարի աճում և ամրանում է։

Խորհուրդների աշխուժացումն ու լավացումը

Այս բանին շատ է նպաստում խորհուրդների աշխատանքի աշխուժացման և լավացումն ու լավացումը վացման այն քաղաքականությունը, վոր անց է կացնում մեր կոմմունիստական կուսակցությունը, կատարելով Վլադիմիր Իլյիչի պատվերը՝ բանվորական և գյուղացական մասսային դեպի «պետության դեմոկրատական կառավարության մեջ մշտական, անարգել և այն էլ վճռական մասնակցությունը» գրավելու մասին։ Թե ինչպես է այդ քաղաքականությունն անցկացվում, այս մասին մանրամասն կը խոսենք հետագայում, յերբ մի առանձին գրույցում կանգ կառնենք խորհուրդների աշխատանքների վրա գյուղում։ Այստեղ մենք միայն խոսենք, թե ինչումն է խորհուրդների այդ աշխուժացման և լավացման խնդիրը։

Այդ խնդիրն այն է, վոր խորհուրդները չկորվեն իրենց ընտրողներից՝ բանվորներից և գյուղացիներից, չքավորներից ու միջակներից. վոր խորհուրդները շարունակ հաշիվ տան իրենց ընտրողներին և իրենց աշխատանքում նրանց ձայնին ականջ դնեն։

Այն է, վոր այդ բանվորներն ու գյուղացիները գործուն մասնակցություն ունենան խորհուրդների ընտրություններին և այնտեղ էլ անցկացնեն գործունյա և հուսալի մարդկանց, վորպեսզի խորհուրդների մեջ չընկնեն պարապ, աշխատանքի անընդունակ կամ անալնիվ մարդիկ, իսկ գյուղերում՝ բացի արանից, վոր խորհուրդների մեջ չընկնեն կուլակներն ու նրանց պոչերը։

Ինդիրն այն է, վոր բանվորներն ու գյուղացիները՝ չքավորներն ու միջակները, միայն խորհուրդներ ընտրելով չբավականանան, վոր նրանք խորհուրդների աշխատանքին հետևեն, ստուգեն այն և ոգնեն նրա պակասություններն ուղղելուն։

Այն է՝ վոր այդ բանվորներն ու գյուղացիները վոչ միայն հետևեն խորհուրդների աշխատանքին, այլ և ոգնեն նրան, անձամբ մասնակցեն խորհուրդների բաժինների, սեկցիաների, հանձնաժողովների աշխատանքներին։

Միայն այսպիսի պայմաններում բանվորը և գյուղացի չքավորն ու միջակը գործով կսովորեն պետություն կառավարել և սոցիալիզմ կառուցել։ Իսկ խոսքը հարկավոր է, վոր յուրաքանչյուր բանվոր և յուրաքանչյուր բանվորուհի, ամեն մի աշխատավոր գյուղացի և ամեն մի գեղջկուհի այս սովորի։

Միայն այն ժամանակ մենք մինչև վերջը կհաղթանակենք, վերջնականապես կազատվենք ճնշման, աղքատության ու քայքայման հետքերից, վորոնք ձգացել են կապիտալիստների և կալվածատերերի առաջվա տիրապետությունից։

Խորհուրդների աշխատանքի աշխուժացման ու լավացման միջոցով, աշխատավորների այս դեմոկրատիայի միջոցով, մենք ավելի արագ ենք ընթանում դեպի սոցիալիզմ, դեպի անհավասարության վոչնչացումը։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼԵՆԻՆԸ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Շահագործվողների պետությունը պետք է լինի դեմոկրատիա՝ շահագործվողների համար և ճնշումն՝ շահագործողների

համար. իսկ ճնշել դասակարգը, այդ նշանակում է դարձնել նրան անհավասար, չեզոքացնել նրան «դեմոկրատիայից»...։ Յեթե ըստ լիբերալների դատենք, ապա պետք է ասենք. «ժեծամասնությունը վճռում է, փոքրամասնությունը հնազանդում։ Անհարազատներին պատժում են»։ Ահա, և հարցը փակվեց։ Յեթե խորհուրդները շահագործողներին ընտրական իրավունքից զրկել են, նշանակում է՝ այդ խորհուրդները աշխատավորական մասսայի իսկական կազմակերպություններն են։

Խորհուրդները հենց իրենց՝ աշխատավոր մասսաների անմիջական կազմակերպություններն են, որոնք հեշտացնում են աշխատավորների ձեռքով պետություն ստեղծելու հնարավորությունը և նրան կառավարելը ամեն կերպ, ինչպես որ կարելի չե»։

(Լենին. XV հ. յեր. 461)։

ԼԵՆԻՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ

Ամենաարժատական և ամենաեյական հարցը՝ այդ բանվոր դասակարգի և գյուղացության հարաբերությունն ե. այդ՝ բանվոր դասակարգի դաշինքն է գյուղացության հետ, այդ՝ խոշոր գործարանի յերկար, ծանր, բայց յերախտավոր դպրոցով անցած առաջավոր բանվորների կարողությունն ե գործն այնպես դնելու, որպեսզի իր կողմը գրավի գյուղագործական մասսային, որ ճզմված և կապիտալիզմից, կոխկրտված և կալվածատերերից, վոնտատակ և տրված իր հին, աղքատ ու թշվառ տնտեսությունից, որպեսզի նրանց ապացուցի, որ միայն բանվորների հետ միանալով, ինչպիսի դժվարությունների յել հանդիպելու լինեն այդ ճանապարհին,—իսկ դժվարություններ շատ կան, սրա առաջ աչքներս փակել չենք կարող,—միայն այդ միության մեջ է գյուղացության փրկությունը կալվածատերերի և կապիտալիստների դարավոր լծից։ Բանվորների և գյուղացիների միության ամրապնդման մեջն է մարդկության ազատումը՝ այնպիսի բաներից, ինչպիսին վերջին համաշխարհային սպանդանոցն եր. ազատումը՝ այն վայ-

րենի հակասություններից, որ մենք այժմ տեսնում ենք կապիտալիստական աշխարհում, որտեղ փոքրաթիվ, ամենաչնչին թվով հարստագույն պետություններ խեղդվում են իրենց հարբստության մեջ, իսկ յերկրագնդի հսկայական ազգաբնակությունը տառապում է աղքատության մեջ, հնարավորություն չունենալով ոգտվելու այն կուլտուրայից ու այն հարուստ միջոցներից, որոնք կան այժմ և որոնք չեն կարողանում հանդես գալ շրջանառության պակասության պատճառով։

(Լենին, XVIII հատ. ա. մ. յեր. 432—433)։

ՊԵՏՔ Ե ԳՐԱՎԵԼ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամն ե, որ պատմության մեջ գոյություն ունի մի պետություն, որտեղ միայն այդ յերկու դասակարգերն են, միայն պրոլետարիատն ե ու գյուղացությունը։ Գյուղացությունն ազգաբնակության ահագին մեծամասնությունն ե կազմում։ Նա, ի հարկե, շատ ե յետ մնացել։ Հեղափոխության զարգացման մեջ գործնականորեն ինչպես ե արտահայտվում իշխանության գլուխը կանգնած պրոլետարիատի հարաբերությունը դեպի գյուղացությունը։ Այդ հարաբերության առաջին ձևը դաշինքն ե, սերտ դաշինքը։ Այս շատ դժվար խնդիր ե, բայց, համենայն դեպս, տնտեսականապես և քաղաքականապես հնարավոր ե։

Մենք գործնականորեն ինչպես մոտեցանք այդ հարցին։ Մենք դաշն կապեցինք գյուղացության հետ։ Մենք այդ դաշինքն այսպես ենք հասկանում. պրոլետարիատն ազատում է գյուղացությունը բուրժուազիայի շահագործումից։ Նա նրան դեպի ինքն ե գրավում, որպեսզի նրա հետ միասին հաղթի շահագործողներին։

(Լենին հ. XVIII մ. ա. յեր. 326)։

ԼԵՆԻՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պետությունը ուժի մի հատուկ կազմակերպություն ե, բռնության մի կազմակերպություն՝ որևե դասակարգ ճնշելու համար։ Իսկ ինչ դասակարգին պիտի ճնշի պրոլետարիատը։

Իհարկե, միայն շահագործող դասակարգին՝ բուրժուազիային։ Աշխատավորներին պետությունը հարկավոր է միմիայն շահագործողներին ճնշելու համար. իսկ այդ ճնշումը դեկավարել, այն իրականացնել կյանքում, միայն պրոլետարիատն է կարող, վորպես միակ դասակարգը, վոր մինչև վերջը հեղափոխական է. միակ դասակարգը, վոր ընդունում է բոլոր աշխատավորներին ու շահագործվողներին համախմբել բուրժուազիայի դեմ կռվելու, նրան միանգամայն տապալելու համար։

Շահագործող դասակարգերին քաղաքական տիրապետությունը հարկավոր է շահագործումը պահպանելու համար, այսինքն՝ ինչ վոր պահանջում են ամենաչնչին փոքրամասնության շահերը ժողովրդի հսկայական մեծամասնության շահերի դիմաց։ Շահագործվող դասակարգերին քաղաքական իշխանությունը հարկավոր է ամեն տեսակի շահագործում վոչնչացնելու համար, այսինքն՝ հոգուտ ժողովրդի հսկայական մեծամասնության ընդդեմ ժամանակակից սարկատերերի, ամենաչնչին փոքրամասնության, այսինքն՝ կալվածատերերի ու կապիտալիստների։

Մանր-բուրժուական դեմոկրատները, այս՝ իբրև թե սոցիալիստները, վորոնք դասակարգային պայքարը դասակարգերի հաշտեցության ցերագանքներով են փոխարինում, սոցիալիստական վերակազմությունն էլ ցերազական ձևով երին պատկերացնում, այն է՝ վոչ թե իբրև շահագործող դասակարգի տապալում, այլ՝ վորպես թե փոքրամասնությունը խաղաղ կերպով պիտի հնազանդի իր անելիքները գիտակցած մեծամասնությանը։

Մանր-բուրժուական այս ուտոպիան, վորն անքակտելի կերպով կապված է վերդասակարգային պետության գաղափարն ընդունելու հետ, գործնականում բերեց հասցրեց աշխատավոր դասակարգերի շահերին դավաճանելուն։

(Լենին. «Պետություն և հեղափոխություն»)։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի և գյուղացության աշխատավոր մասսաների դասակարգային դաշինքն է կապիտալը խորտակելու համար, սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար, այն պայմանով, վոր այդ դաշինքի դեկավարող ուժը պրոլետարիատը լինի։

(Ի. Ստալին «Հոկտեմբերի ճանապարհին» Պետհր. 1925 թ. յեր. 17)։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Այստեղից բղխում են պրոլետարիատի դիկտատուրայի յերբեք հիմնական կողմերը.

1. Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը՝ շահագործողներին ճնշելու, յերկիրը պաշտպանելու, կապն ուրիշ յերկիրների պրոլետարների հետ ամրապնդելու համար, բոլոր յերկիրներում հեղափոխությունը զարգացնելու և նրա հաղթանակի համար։

2. Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը աշխատավորներին և շահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես կտրելու, պրոլետարիատի միությունն այդ մասսայի հետ ամրացնելու, այդ մասսաներին դեպի սոցիալիստական շինարարությունը գրավելու, այդ մասսաները պրոլետարիատի միջոցով պետականորեն դեկավարելու համար։

3. Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը՝ սոցիալիզմը կազմակերպելու, դասակարգերը վոչնչացնելու, անդասակարգ և անպետություն հասարակության անցնելու համար։

(Ի. Ստալին «Լենինիզմի հարցերից» յեր. 18—19 1926 թ.)

Միայն մի դասակարգի՝ պրոլետարիատի դիկտատուրան կարող է լուծել այն պայքարի հարցը, վորը տարվում է բուրժուազիայի դեմ հանուն իշխանության։ Պրոլետարիատի դիկտատուրան կարող է հաղթել բուրժուազիային։ Միայն պրոլետարիատի դիկտատուրան կարող է իր յետևից մասսաները տանել բուրժուազիայի դեմ։

(Լենին, XVI հ. յեր. 141. «Գյուղում կատարվող աշխատանքի մասին»)։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՄԻ ՋԵՎ Ե

Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային դաշինքի մի հատուկ ձև է պրոլետարիատի, որ աշխատավորների ավանգարդն է, և աշխատավորների բազմաթիվ ոչ-պրոլետարական շերտերի (մանր բուրժուազիա, մանր անտեսատերեր, գյուղացություն, ինտելիգենցիա և այլն) կամ նրանց մեծամասնության միջև մի դաշինք, որ ուղղված է կապիտալի դեմ, բուրժուազիայի դիմադրության և նրա իշխանությունը վերականգնելու փորձերը ի ջանգամայն խորտակելու համար. մի միություն, որի նպատակը սոցիալիզմի վերջնական հաստատումն ու ամրապնդումն է։

(Լենին. XVI հ. էջ. 241)։

ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար չէ համոզվել, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելիս ամեն դեպքում դիկտատուրան անհրաժեշտ է երկու գլխավոր պատճառով, կամ երկու գլխավոր ուղղությամբ։ Առաջին. անկարելի է կապիտալիզմին հաղթել և նրան արմատախիլ անել, առանց անխնայորեն ճնշելու շահագործողների ընդդիմադրությունը, որոնց միանգամից զրկել չի լինի իրենց հարստատությունից, իրենց արտոնություններից, կազմակերպվածությունից և գիտությունից, ուրեմն և բավական երկար ժամանակամիջոցի ընթացքում նրանք անխուսափելիորեն փորձեր պիտի անեն աղքատների առելի իշխանությունը տապալելու։ Երկրորդ, ամեն մեծ հեղափոխություն, նամանավանդ սոցիալիստական, եթե նույնիսկ արտաքին պատերազմ էլ չը լիներ, չի կարելի պատկերացնել առանց նեղքին պատերազմի, այսինքն՝ քաղաքացիական, որն ավելի ավերիչ է, քան արտաքին պատերազմը, որը հազարավոր ու միլիոնավոր դեպքեր ունի տատանումների և մի կողմից դեպի մյուսը թեքվելու, որն ամենամեծ անորոշության, անհավատարակշռության, խառնաշփոթության մի դրություն է ներկայացնում։ Եվ հասկանալի է, որ հին հասարակության քայքայման բոլոր տարրերը, որոնք անխուսափելիորեն խիստ բազմաթիվ են, և գլխավորապես

մանր բուրժուազիայի հետ կապված, (քանի որ ամեն մի պատերազմ և ամեն մի ճգնաժամ ամենից առաջ սրան է ավերում, կործանում) չեն կարող «իրենց ցույց չտալ» այսպիսի մի խորը հեղաշրջման մեջ, իսկ «իրենց ցույց տալ» կազմակերպման այդ տարրերը այլ կերպ չեն կարող, քան՝ հանցագործությունները, սրիկայությունները, կաշառքը, սպեկուլյացիան և ամեն տեսակի սլանդակություններ բազմացնելով։ Սրանց հետ հաշիվը փակելու համար հարկավոր և ժամանակ, հարկավոր է երկաթե բազուկ։

(Լենին. XV հ. էջ. 214. «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» ապրիլ 1918 թ.)

I. ՊԵՏՐՈԳՐԱԴԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆՈՒՅԹՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. 1926 թվի խորհուրդների վերընտրությունը քաղաքացիական պատերազմի վախճանից և պրոլետարական դիկտատուրայի ամրապնդումից հետո առաջին լայն և բացարձակ ընտրական կամպանիան է։

Քաղաքացիական պատերազմից հետո առաջին անգամ քաղաքի և գյուղի ընտրողների սոցիալական հիմնական դրությունները բացարձակ կերպով հանդես եկան խորհուրդների վերընտրության ժամանակ։ Ընդ ամին խորհուրդների այս վերընտրությունը կատարվում էր աշխատավոր մասսաների հարձակման ակտիվության պայմաններում։

2. Ինչպես և առաջ, բանվոր դասակարգն իր ակտիվությամբ առաջին տեղն էր բռնում։ Անցյալ ընտրական կամպանիայի հետ համեմատած, բանվորների և առհասարակ արհմիությունների մեջ կազմակերպվածների ակտիվությունը նորից աճել է, բայց համեմատաբար անշան չափով (վերընտրությունների մեջ իրապես մասնակցած արհմիութենականների թիվը Ռ. Խ. Ս. Ֆ. Հ.-թյան մեջ 52%-ից բարձրացել է 57%-ի, հաշվի առած պրոֆմիությունների բոլոր անդամները)։ Այս վերջին փաստը պետք է բացատրել՝ ինչպես ներկա պայմաններում պրոլետարական դիկտատուրայի թշնամիների կողմից

անմիջական վտանգի բացակայությամբ, այնպես և բանվորական ռայոններում կուսակցական և պրոլետարական այլ կազմակերպությունների կողմից վոչ բավարար ուշադրությամբ դեպի վերընտրական գործը. ապա՝ նույնպես քաղաքային խորհուրդների աշխատանքների դեռ ևս վոչ բավարար ծավալմամբ, սրա հետ կապված՝ նաև նրանով, վոր բանվորների գլխավոր ուշադրությունը կուսակցության, արհմիությունների և տնտեսական կազմակերպությունների աշխատանքի վրա յե կենտրոնացած յեղել:

4. Գյուղում վերընտրական կամպանիան ընդհանրապես և ամբողջովին քաղաքական կացության բարելավումն է արտացոլել: Այդ արտահայտվեց գյուղի հիմնական մասսայի՝ չքավորների և միջակների կողմից վերընտրություններին ցույց տված մասնակցության բնույթի մեջ (վերընտրություններին իրապես մասնակցած գյուղացիների թիվը Ռ. Խ. Ս. Ֆ. Հ.-յան մեջ գյուղի բոլոր ընտրողների կազմի 41%-ից բարձրացավ մինչև 47%-ը): Ընդ սմին ամենամեծ ակտիվությամբ աչքի յեր ընկնում միջակ գյուղացական մասսան, վորն ընտրությունների ընթացքում հաճախ մերձենում եր չքավոր գյուղացությանը:

Սակայն, գյուղի չքավոր և մանավանդ բատրակային մասը ելի դեռ բավարար չափով ակտիվություն հանդես չի բերում: Աշխատանքը չքավորների մեջ, վոր դեռ ևս աննշան չափով է ուժեղացել, այն էլ միայն սրանց մի մասի մեջ, կարողացել է արտահայտվել գյուղի չքավորների ակտիվության աճման և նրանց յելույթների կազմակերպվածության մեջ: Մյուս կողմից, գյուղի կուլակությունը, վորը հաճախ մեծ ակտիվությամբ եր հանդես գալիս, ստիպված է յեղել շատ դեպքում հրաժարվել իր դասակարգային շահերի բացարձակ պաշտպանությունից և հակախորհրդային քաղաքականությունից և իր կուլակային իղձերը «չքավորության շահերով», «հեղափոխական որինականությամբ» և այլն քողարկելու միջոցին դիմել:

II ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ, ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը, վորպես հերթական քայլ խորհրդային դեմոկրատիզմի (պրոլետարական դեմոկրատիայի) զարգացման գործում պետք է հիմնավորվի այնպես, վոր «ամբողջ պետական ապարատի մշտական և միակ հիմքը» (տես Համկոմկուսի ծրագիրը) պրոլետարները և ամենաչքավոր գյուղացի-կիսապրոլետարները մնան: Այս հանգամանքը, վոչ միայն չի բացասում, այլև ուղղակի յենթադրում է, մանավանդ Խորհրդային իշխանության ամրապնդման պայմաններում, գյուղացության հիմնական ամբողջ մասսային դեպի խորհրդային շինարարությունը իրապես և ավելի ընդարձակ չափերով գրավելու անհրաժեշտությունը: Տվյալ ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական դիկտատուրայի նյութական բազան ամրապնդվում է (յերբ պետական արդյունաբերությունը շարունակ ավելի ու ավելի ղեկավարող սկզբունք է դառնում յերկրի ամբողջ տնտեսական սիստեմի), յերբ պրոլետարիատի քանակը բավարար չափով աճել է և ելի շարունակում է աճել, յերբ խորհրդային ամբողջ սիստեմը և վերջապես, ինքը՝ պրոլետարական դիկտատուրայի ղեկավար կոմմունիստական կուսակցությունը զգալիորեն ամրապնդվել են—տվյալ մոմենտում այս խնդիրը պրոլետարական դիկտատուրայի համար բացառիկ կարևոր նշանակություն ունի: Ուստի այժմ առանձնապես ընդգծվում է պրոլետարիատի և գյուղացության միության ամրացման խնդիրը: «Դիկտատուրայի գերագույն սկզբունքը՝ պրոլետարիատի և գյուղացության դաշինքի պահպանումն է, վորպեսզի պրոլետարիատը կարողանա ղեկավարող դերն ու պետական իշխանությունը պահպանել» (Լենին): Այստեղից բղխում է՝ գյուղում կուսակցության շուրջն անկուսակցական չքավոր ու միջակ գյուղացական լայն ակտիվ ստեղծելու կարևորությունը:

7. Այսու հանդերձ պրոլետարիատի և գյուղացության դաշինքը պրոլետարիատի դիկտատուրայի համար ամուր հենա-

րան կդառնա միայն այն ժամանակ, երբ այդ միության մեջ պրոլետարիատի դեկավար դերը իրապես ապահոված կլինի։

Ուստի, խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը, վորպես դասակարգային իսկական պրոլետարական քաղաքականություն, նախ յենթադրում է պրոլետարիատի ակտիվության, ինքնագործունեության և կազմակերպածության հետագա ամեն կերպ աճում, մասնավորապես նրա վորքան կարելի յե ակտիվ մասնակցությունը՝ խորհուրդների վերընտրության և նրանց բոլոր աշխատանքի մեջ։ Ուստի վերընտրական կամպանիայի քաղաքական դրական նշանակության մասին պետք է դատել վոչ միայն վերընտրություններին մասնակցողների բացարձակ քանակն աչքի առաջ ունենալով, այլև նրանով, թե՝ վորչափով է աճում ու ամրապնդվում այդ մասնակցողների պրոլետարական մասի (քաղաքի և գյուղի) մասնակցությունն ու ազդեցությունը խորհուրդների աշխատանքի մեջ. վորքան է աճում խորհուրդներում ընտրված առաջավոր բանվորների և բանվորուհիների քանակական և վորակական նշանակությունը և նրանց (բանվորների ու բանվորուհիների) ակտիվ ու իրապես դեկավարող ազդեցությունը խորհուրդների ամբողջ աշխատանքի վրա։

8) Խորհուրդների աշխուժացման քաղաքականությունն ուղղված է նաև դեպի բուրժուական տարրերի (նեպմանների, կուլակների, բուրժուական ինտելիգենցիայի) քաղաքական ազդեցության մնացորդների վոչնչացումն աշխատավոր մասսաների վրայից։ Խորհուրդների աշխուժացման քաղաքականության միայն այնպիսի իրականացումը կարող է կուսակցության կողմից ուղիղ ճանաչվել, վորն ուժեղացնում է աշխատավորների կազմակերպված դիմադրությունը՝ բուրժուազիայի այս կամ այն տարրի կողմից մասսայի վրա քաղաքական ներգործություն ունենալու ամեն մի փորձին, վորը, հետևաբար, տանում է դեպի բուրժուական տարրերի քաղաքական չեզոքացումը յերկրում։ Մանր բուրժուական շերտերի ակտիվությունը թե գյուղում և թե քաղաքում արտացոլող վերընտրական կամպանիայի ընթացքի հետ կապված՝ առանձնապես ընդգծվում է, վոր անհրաժեշտ է մասսաների առաջ պարզել և մերկացնել բուրժուական ելեմենտների ինչպես ակնհայտ, այնպես և թագուն (վորն այժմ ավելի հաճախ է լինում) քաղաքական յելույթները և անդրադ կերպով կռվել նրանց կողմից յերևան բերվող՝ իրենց պատալարական և քաղաքական դերը պաշտպանելու համար ամեն մի փորձի դեմ. (որինակ, նրանց փորձերը՝ փակված «Новая Россия»-ի նման սմենովեխովյան (сменовеховский) գրականության հրատարակության միջոցով իրենց հեռադիմական իդեոլոգիայի պրոպագանդն որինականացնելու նրանց փորձերը՝ պրոլետարական դիկտատուրայի չահերի դեմ ոգտագործելու մի քանի մտավորական, կուլտուրական և կրոնական կազմակերպություններ, մասնավորապես այն ազգային հանրապետությունների մեջ, վորտեղ առանձնապես փոքրաթիվ են պրոլետարական խավերը, և այլն)։

9) ՆԵՊ-ի պայմաններում, կապիտալիստական հարաբերությունների մասնակի վերականգնման և տնտեսագործական ու գյուղացիական տնտեսությունների մասսայի մանր բուրժուական հիմքերի վրա դեռևս շարունակվող աճման պարագաներում, անխուսափելի յեն մանր-բուրժուական քաղաքական կուսակցությունների (մենշևիկների, եսերների) մնացորդների կողմից նորանոր փորձեր՝ իրենց կազմակերպությունն ու ազդեցությունը վերականգնելու։ Հավանական է, վոր նրանք իրենց գոյության պաշտպանության իրավունքը վերականգնելու համար փորձեր կանեն այս կամ այն թագուն ձևով ոգտագործել խորհուրդների աշխուժացումը (ինչպես և կոոպերացիայի, և այլն)։ Պետք է այսպիսի փորձեր համարել, որինակ, հակահեղափոխական պրոպագանդն այն մասին, թե՝ անհրաժեշտ են հատուկ գյուղացիական, սակայն փաստորեն կուլակային, կուսակցություններ և միություններ. սրանք անխուսափելիորեն հակադրվելու յեն պրոլետարիատին և կոմունիստական կուսակցության։ Մյուս կողմից, հնարավոր են՝ մանր-բուրժուական թաղարդը գցելու նաև այլ փորձեր (որինակ՝ նոր մենշևիզմը) վորոնք քողարկված են վորպես թե «մաքուր պրոլետարական» արտահայտով, վորպես թե «իսկական պրոլետարական» քաղա-

քականությամբ և կեղծ «ձախ» լոզունգներով, վորոնք հակադրվում են Համ. Կ. կուսի վարած գծին։ Անխուսափելի յեն նույնպես մանր-բուրժուական ազգայնական կուսակցությունների վերածնման փորձերը (պետլյուրայինների, ջադիդների, ալաշորդինյանների և այլն)։ Այս ի նկատի առնելով՝ կուսակցությունն առաջվա պես բանվորական մասսաների ամենաանհրաժեշտ կարիքները իրապես բավարարելու հետ միասին իր ուշադրության կենտրոնում պետք է դնի նաև գյուղացության հիմնական մասսայի տնտեսական վիճակի բարելավումը (վորպեսզի հենց սրանով արմատախիլ անի մանր սեփականատիրական մասսայի քաղաքական տատանումների տնտեսական արմատները). այդ տնտեսական ձեռնարկումների (меры) ուշադրությունը պիտի կենտրոնացնել նաև անհաշտ և սիստեմատիկ պայքարի վրա ամեն տեսակ մանր-բուրժուական քաղաքական տատանումների դեմ, վոր կողմից էլ և ինչ արտաքին ձևով էլ նրանք հանդես գալու լինեն։ Կոմմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունն առաջվա նման պիտի վճռականորեն և անխնայորեն վերջ դնեն մանր-բուրժուական քաղաքական խմբավորությունների ամեն տեսակ վոտնձգություններին. այս խմբավորումների քաղաքականության իմաստն այժմ էլ նույնն է, ինչպես և առաջ, այն է՝ վերադարձ դեպի կապիտալիզմը, ձգտումն՝ յերկիրը դեպի յետ, դեպի բուրժուական իշխանությունը վերադարձնելու. իսկ այս փաստորեն նրանց դարձնում է միջազգային կապիտալի ուղղակի ոգնականներ և անմիջական գործիքներ։

(ՀամԿԿ ԿԿ-ի և ԿՎՀ-ի պլենումի բանաձևից, կայացած՝ 20 հուլիսի 1925 թ)։

ՀԱՐՑԵՐ 2. ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ինչպե՞ս է բուրժուական պետությունը ճնշում բանվորներին և գյուղացիներին։

2. Ինչպիսի՞ յե բուրժուական դեմոկրատիան գործնականում։

3. Ի՞նչ զանազանություն կա բուրժուազիայի դիկտատուրայի և բանվորների դիկտատուրայի միջև։

4. Ինչո՞ւ բանվորների և գյուղացիների դաշինքի մեջ ղեկավարող դերը բանվորներին է պատկանում։

5. Ի՞նչ է պրոլետարիատի դիկտատուրան։

6. Հնարավո՞ր է դեմոկրատիան բանվորների դիկտատուրայի պարագայում։

7. Խորհրդային պետության մեջ ո՞ւմ համար դեմոկրատիա կա։

8. Ի՞նչ էր ասում ընկ. Լենինը բանվորների դիկտատուրայի մասին։

9. Ինչո՞ւ յե մեզ հարկավոր խորհուրդների աշխուժացումը։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ գլուխում պարզեցինք, վոր խորհրդային իշխանության հիմքը, նրա յերկաթե պատվանդանը բանվոր դասակարգի և գյուղացության դաշինքն է՝ բանվոր դասակարգի ղեկավարության տակ։ Այսպիսի միություն, Լենինի խոսքերով, նշանակում է «պրոլետարիատն ազատում է գյուղացությունը բուրժուազիայի շահագործումից, ազատում է նրան բուրժուազիայի ղեկավարությունից և ազդեցությունից, դեպի իրեն է գրավում նրան, վորպեսզի միատեղ հաղթեն շահագործողներին» (Կոմինտերնի III-րդ համագումարում արտասանած ճառից)։

Պրոլետարիատի յեվ գյուղացության ռազմական դաշինքը

Մեր յերկրում կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալումը կատաղի դիմադրության հանդիպեց նրանց կողմից։ Նրանք չեյին ցանկանում իշխանությունը ձեռքից բաց թողնել։ Խորհրդային հանրապետության մեջ բռնկվել եր քաղաքացիական կռիվը, վորը սկսել եյին շահագործողները մենշևիկների և եսերների աջակցությամբ։ Յերկիրը շրջապատվել եր սպիտակ գվարդիական բանակների սեղմ օղակով։ Տասն և չորս օտարերկրյա պետություն ամեն տեսակ օգնություն եյին ցույց տալիս սպիտակ բանակին։ Բանվորների և գյուղացիների առաջ դրված եր մեծ և խիստ դժվարին մի խնդիր. այն է՝ պահպանել և ամրապնդել կապիտալիստների և կալվածատերերի ձեռքից խլած իշխանությունը։ Պահպանել նրան կարելի յեր միայն ուժով, ամրապնդել՝ միայն սպիտակ բանակները խորտակելով և հանրապետությունից արտաքսելով նրանց, ովքեր այդ բանակների թիկունքին եյին կանգնած, այսինքն՝ կապիտալիստներին և կալվածատերերին։ Պայքարը, աշխատավորների իշխանության համար, պայքարը՝ նրանց ինքնուրույն և իրենց սեփական ցանկության համեմատ իրենց կյանքը կարգավորելու իրավունքի համար, գլխավոր խնդիրն եր քաղաքացիական պատերազմի շրջանում։ Հենց այդ խնդիրը, այդ ընդհանուր նպատակն եր, վոր խտացրեց բանվորների և գյուղացիական մասսայի շարքերը և վերածեց միասնական ռազմական դաշինքի՝ բանվորների ղեկավարության ներքո։

Խորհրդային հանրապետությունը սպիտակ բանակների դեմ պաշտպանելու համար հարկավոր եր ստեղծել սեփական բանակ, խորհրդային կարմիր բանվորագյուղացիական բանակ։ Նա ստեղծվեց։ Հարկավոր եր նրան զինել, ռազմամթերք մատակարարել։ Հարկավոր եր նրան կերակրել։ Զենքերն ու ռազմամթերքը տալիս եյին բանվորները, վորը պատրաստում եյին գործարաններում։ Պարենավորումը, թե բանակին և թե գործարաններում աշխատող բանվորներին, տալիս եր գյուղացությունը։

Բայց, վորովհետև այն ժամանակ միջակ գյուղացիների շրջանում դեռ ևս շատ կային տատանվողներ, վստահություն չունեցողներ, վորովհետև հարուստ գյուղացիները տրամադիր եյին քաղաքացիական պատերազմի ամբողջ ծանրությունը չքավորների վրա գցելու, ուստի պետությունը ստիպված յեղավ սննդամթերքներն ու արտադրության համար անհրաժեշտ հումնյութերը մասնատրման միջոցով (по разверстке) ստանալ։ Պետությունը մասնատրում եր առանձին առանձին ռայոնների վրա պարենի և կերի (фураж) վորոշ քանակ, վորն այդ ռայոնները պարտավոր եյին հայթայթել։ Մասնատրումը կատարվում եր այն հաշվով, վոր յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն պետությանը հանձներ հացի և կերի ավելցուկը, թողնելով իրեն համար միայն այնքան, վորքան նրան անհրաժեշտ եր իրեն ընտանիքը կերակրելու և սերմելու համար։

Ինչու պետք է գյուղացին իր բոլոր ավելցուկը տար։

Վորովհետև այն պատերազմը, վոր աշխատավորների իշխանությունը մղում եր հողի համար, ճնշումից փրկվելու հա-

մար, պահանջում եր ոգտագործել ամեն բան, ինչը կարող եր տալ ժողովրդական տնտեսությունը։ Այլապես ճնշողներին հաղթելն անկարելի էր։ Ռազմական կարիքները թե՛ արդյունաբերությունից և թե գյուղական տնտեսությունից պահանջում էին բոլոր ուժերի լարումն և բոլոր պաշարների ոգտագործումն։

Բանի վոր գյուղացին իր բոլոր ավելցուկները պիտի պետությանը հանձներ, ուստի առևտուրը կանգ առավ։ Նրան դադարեցրին։ Բանի վոր ժամնատրում եր կատարվում և գյուղատնտեսական արդյունաբերական մթերքների բոլոր ավելցուկները պետության ձեռքն էին հավաքվում, ուստի գյուղացին այլ տեղից չեր կարող արդյունաբերական իրեղեններ ձեռք բերել, բացի պետությունից։ Պետությունն եր զբաղվում այդ իրեղենների բաշխմամբ. նա էր բաշխում նաև պարենը բանվորների մեջ. Հենց պետությունն էլ ընդհանուր պարտադիր աշխատանք մտցրեց քաղաքներում, հարկադրաբար ստիպելով բուրժուազիային հասարակական աշխատանքներ կատարելու։ Պետությունն ստիպված եր ընդհանուր պարտադիր աշխատանք և հարկադրական փոխադրություններ պարտիք (гужевая повинность) մտցնել նաև գյուղում։ Գործարաններում աշխատանքը պարտադիր եր ամեն մի բանվոր հաժար։ Բանվորները աշխատակոչի էին յենթարկվում (мобилизовались) գործարանների հաժար նույնպիսի պարտադիր կարգով, ինչպես զորակոչի էին յենթարկվում կարմիր բանակի հաժար։

Այսպիսի տնտեսական կարգերը «ռազմական կոմմունիզմ» կոչումն ստացան։

Տնտեսական բարգավաճումը

Սակայն պետությունն այդ ժամանակ բավարար քանակով արդյունաբերության պրոդուկտներ տալ չեր կարող։ Դեռ ևս հեղափոխության սկզբին մեր յերկրում արդյունաբերությունը խիստ ընկել եր։ Իմպերիալիստական պատերազմն արդեն քայքայել եր ժողովրդական տնտեսությունը։ Մինչև պատերազմը չուգունաձուլ գործարաններն ամսական արտադրում էին 16 միլիոն փութ չուգուն. այնինչ՝ պատերազմի յերեք տարին անցած, արտադրում

էին միայն 10 միլիոն։ Յերկաթուղու վրա «հիվանդ» շոգեշարժների քանակը մինչպատերազմյանի համեմատությամբ ավելացել եր 300%-ով։ Գործող շոգեշարժների 52%-ը հին, թուլլ ու մաշված, 25 տարուց վոչ պակաս ծառայածներ էին։ Վրա յեկավ վառելանյութի ճգնաժամը։ Նավթի և քարածխի արդյունահանումը (добыча) կրճատվեց, հասավ մինչպատերազմյանի $^3/_4$-ին։ Մի խոսքով, ամբողջ տնտեսությունը դեպի վար եր գնում, ընկնում եր։ Քաղաքացիական պատերազմը վերջնականապես գցեց արդյունաբերությունը։ 1913 թվին արտադրած յուրաքանչյուր 100 փութ յերկաթի փոխարեն, 1920 թվին արտադրվում եր $1^1/_2$ փութ միայն. 100 փութ շաքարի փոխարեն՝ $5^1/_2$ փութ. 100 փութ աղի փոխարեն՝ 29 փութ. 100 փութ բամբակեղեն մանվածքի փոխարեն՝ 5 փութ. 100 արշին չթի փոխարեն՝ $6^1/_2$ արշին։

Այսպիսով, արդյունաբերությունը չնչին մասն եր տալիս այն բոլորի, ինչ վոր նա կարողանում եր տալ մինչպատերազմյան ժամանակ։ Այս չնչին մասն էլ գնում եր, գլխավորապես, կարմիր բանակի կարիքներին։ Գյուղացական տնտեսությունը համարյա վոչինչ չեր կարողանում ստանալ արդյունաբերության պրոդուկտներից։ Սրա հետևանքով գյուղացական տնտեսության մեջ ինվենտարը մաշվեց, դրան ավելացրեք անասունների խիստ պակասը. ցանքսի տարածությունը կրճատվեց, և այլն։ Գյուղական տնտեսությունն էլ անկման հասավ։

Քաղաքացիական պատերազմի վախճանը

Վերջապես քաղաքացիական պատերազմը դադարեց։ Կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքից իշխանությունը վերջնականապես խլված եր։ Այս յեղավ թանկ գնով, ժողովրդական տնտեսության ուժեղ քայքայման գնով, բայց դրա փոխարեն բանվորներն ու գյուղացիները հնարավորություն ստացան այնպիսի կարգեր ստեղծել, վորոնց մեջ անհնարին է վորևե ճնշում, վորևե կեղեքում մի դասակարգի կողմից մյուսի նկատմամբ։ Բանվոր դասակարգը ղեկավարեց հեղափոխությունն ու կռիվը կապիտալիստների և կալվածատերերի դեմ նրա համար, վոր նրանց վռնդելուց հետո սկսի սոցիալիզմը կառուցել։

Սոցիալիստական իրավակարգի հիմնական գծերը

Իսկ ինչ է սոցիալիզմը։ Սոցիալիզմի ժամանակ արտադրության բոլոր գործիքները ու միջոցները՝ գործարանները, մեքենաները և այլն պատկանում են ոչ թե առանձին անհատներին, այլ ամբողջ հասարակության։ Չկա մնտեսատեր, չկա և բանվոր, չկա կալվածատեր, չկա և գյուղացի, չկա և բատրակ։ Բոլորն էլ և՛ տեր են, և՛ գործավոր։ Իսկական հավասարություն է. քանի որ ոչ տերեր կան, ոչ էլ հպատակներ։ Իսկ քանի որ այսպես է, ուրեմն չկա նաև շահագործելու և ճնշելու հնարավորություն։ Մի մարդ մյուսին կարող է ճնշել և կեղեքել միայն այն ժամանակ, երբ նա ունևոր է, մյուսը՝ չունևոր։ Ունևորն իր ապրուստի միջոցները ձեռք բերելու համար ուրիշի մոտ վարձկան է դառնում, ստրկության տակ է ընկնում։ Ունևորը չունևորին թալանում է, հենվելով նրա վրա, թե՝ ինքը արտադրության միջոցների և գործիքների (հողի, գործարանների և այլն) տերն է։ Բանվորի և աշխատավոր գյուղացու համար սոցիալիզմ նշանակում է՝ ազատություն կապիտալիստների, կալվածատերերի և կուլակների ճնշումից։

Սոցիալիզմի ժամանակ արդյունաբերության մեջ ամբողջ արտադրությունը համախմբվելու է խոշոր գործարաններում։ Նույն կերպ էլ հողագործության մեջ այժմյան բոլոր մանր տնտեսությունները կհամախմբվեն և կվերածվեն խոշորների։ Բայց այդ խոշոր արդյունաբերական և հողագործական տնտեսությունները, ինչպես արդեն ասացինք, պատկանելու են ոչ թե առանձին անհատների, ոչ թե կապիտալիստներին, այլ՝ բոլոր աշխատավորներին, ամբողջ ժողովրդին։ Նրանք գործելու են ոչ թե զուտ զուտ, ոչ թե ինքնագլուխ, այլ մի ընդհանուր ծրագրով, այնպես՝ որ բավարարեն բոլոր աշխատավորների բոլոր պահանջները։ Եվ բոլորը, ինչ որ արտադրվելու է, ընդհանուրի սեփականություն են դառնալու ընդհանուրի կողմից բաշխելուն և ծառայելու։ Այսպիսի կարգերում էլ ոչ վաճառական է հարկավոր, ոչ էլ առ ու ծախ։ Ցերբ է պետք լինում առևտրի։ Ցերբ պրոդուկտներն ու իրեղենները (изделия) մատնավոր մարդկանց (կապիտալիստներին ու մանր արտեսատերերին) պատկանող առանձին տնտեսությունների մեջ են արտադրվում, այն ժամանակ է կարիք լինում առնելու և ծախելու։ Այն ժամանակ պետությանը պատկանող տնտեսություններն էլ (ինչպես մեզ մոտ գործարաններն ու խորհտնտեսությունները) առանց առևտրի չեն կարող։ Ով մի այն կոշիկներ է արտադրում, չի կարող սրանցով մնվել, իսկ ով պարենավորման պրոդուկտներ է արտադրում, չի կարող կոշիկների տեղ կարտոֆիլ գործածել, նրանք պիտի փոխանակություն կատարեն, նրանց առևտուր է հարկավոր, իսկ լիակատար սոցիալիզմի ժամանակ առևտուր հարկավոր չե։ Բոլոր պրոդուկտներն ու շինված իրեղենները հասարակական պահեստներն են մուծվելու։ Այս պահեստներից բոլոր արդյունաբերական ձեռնարկություններն ու չերկրագործական տնտեսությունները ստանում են այն բոլոր, ինչ որ նրանց հարկավոր է տնտեսության սարքավորման համար, այլ և բոլոր անհրաժեշտ հուժ նյութերը։ Ամեն մի իրավունք ունի հասարակական պահեստներից ստանալու նաև այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է իր անձնական կարիքների համար։

Սակայն, որպեսզի այդպիսի կարգերում ամեն ինչ և ամենքի համար բավարար քանակությամբ լինի, պետք է, որ արտադրությունը լավ դրված լինի։ Հարկավոր է մեքենաներ, ամեն տեսակ իրեղեններ և պրոդուկտներ արտադրել մեծ քանակությամբ։ Այսպիսի արտադրությունը չի կարող հենվել հողագործության մեջ արորի, իսկ արդյունաբերության մեջ՝ ձեռքի գործիքների վրա։ Նրանում պետք է լինեն կատարելագործված մեքենաներ, պետք է կիրառվի ելեքտրականությունը։ Նա պետք է լինի՝ լավ կազմակերպված, ամուր կառուցված, նա պիտի աշխատի առանց դադարումների։

Անցումը ռազմական կոմմունիզմից դեպի-ին

Ցերբ մենք քաղաքացիական պատերազմը վերջացրինք, մեզ մոտ տնտեսական մեծ քայքայում կար։ Համարյա բոլոր գործարանները կանգ էին առել, շոգեշարժներն ու վագոնները մաշվել էին, վառելիքը չէր բավականացնում, գյուղական տնտեսությունն ընկած վիճակի մեջ էր։ Ահա այսպիսի պայմաննե-

րում մենք պիտի ձեռնարկեյինք սոցիալիստական կարգեր ըստեղծել, սոցիալիզմ կառուցել մեր յերկրում։ Կարելի՞ յեր արդյոք այդ անել, և յեթե կարելի յեր, ապա ինչպե՞ս։

Տեսնենք, թե ինչ ժառանգություն մնաց մեզ կապիտալիստներին ու կալվածատերերին արտաքսելուց հետո։ Նախ՝ գործարանները, հանքերը և մեծագահանքերը և այլն, որոնք այժմ անցել են բանվորական պետության ձեռքը։ Ապա՝ հողը, բացի խորհրդատեսություններին հատկացրած աննշան տարածությունից, նա ամբողջապես գյուղացիների օգտագործության և անցել և բաշխվել 22 միլիոն գյուղացական տնտեսությունների մեջ։ Արդյունաբերությունը, որ առաջ բաժան-բաժան եր արված առանձին կապիտալիստների մեջ, այժմ միացել և բանվոր դասակարգի ձեռքում։ Գյուղատնտեսությունն էլ կալվածատիրոջից եր ազատվել, բայց մնացել եր 22 միլիոն առանձին տնտեսությունների մեջ։ Կարելի՞ յեր այսպիսի պայմաններում սոցիալիզմի կառուցումն սկսել։ Այո, կարելի յեր։ Սրա համար անհրաժեշտ եր խոշոր արդյունաբերությունը վերականգնել, և նրա օգնությամբ մնացած գյուղացական տնտեսություններն ուղղել դեպի համախմբումն, դեպի սոցիալիզմի ուղին։ Ուղղել, բայց վոչ զորով քաշշ տալ։

Գյուղացուն զորով դեպի սոցիալիզմ քաշել չի լինի։ Պետք է բանն այնպես տանել, վորպեսզի գյուղացին արդյունաբերության օրինակի վրա և իր սեփական փորձով ինքը համոզվի, վոր սոցիալիզմն ավելի լավ է վոչ միայն նախկին կարգերից, այլև ավելի լավ է գյուղի այժմյան տնտեսական կարգերից, ավելի լավ է մանր, ցան ու ցիր տնտեսություններից։ Գյուղացուն պետք է շահագրգռել սոցիալիզմի շինարարության մեջ, շահագրգռել նրան տնտեսապես, փորձով համոզել՝ հասարակական տնտեսության մասնավորի դիմաց ունեցած առավելությունների մասին։

Կոմմունիստական կուսակցությունը քաղաքացիական կռվի վախճանից հետո սոցիալիզմի շինարարության հենց այսպիսի յեղանակ ընդունեց, յերբ վճռեց նոր տնտեսական քաղաքա-

կանության (ՆԵՊ) անցնել, վորը փոխարինեց «ռազմական կոմմունիզմին»։

Պարենժամանակաշրջանից պարենհարկով (ՆԵՊ) փոխարինելը

Նոր տնտեսական քաղաքականությունը սկսվեց պարենժամանակաշրջանը վերացնելով և պարենհարկը մտցնելով։ Պարենհարկը մտցնելով, գյուղացին արդեն պարտավոր չեր իր ամբողջ ավելցուկը պետությանը տալ, այլ՝ ավելցուկի միայն մի մասը պետք է տար հարկի ձևով, իսկ մյուս մասը մնում եր նրա սեփական կարգադրության տակ և կարող եր գործադրվել նրա տնտեսության բարելավման և ընդարձակման վրա։ Նա կարող եր ծախել ավելցուկի այդ մասը և կարող եր փոխանակել այնպիսի ապրանքների հետ, վորոնց կարիքն զգացվում եր նրա տնտեսության մեջ։

Այսպիսով, նոր տնտեսական քաղաքականություն մտցնելով գյուղացիք նորից, ինչպես և հեղափոխությունից առաջ, կարող են պարենավորման պրոդուկտներ և հում նյութեր արտադրել ծախու համար, շուկայի համար։ Այն տնտեսությունը, վորն արտադրում է ծախու համար, կոչվում է ապրանքային։ Նշանակում է, գյուղացու տնտեսությունը նորից դառնում եր ապրանքայինն։ Սակայն, գյուղացին նրա համար է ծախում, վոր գնի այն, ինչ վոր նրա տնտեսությունն արտադրել չի կարող։ Հարկավոր է, վոր շուկայում արդյունաբերության պրոդուկտներ, որինակ՝ մանուֆակտուրա, մեխեր, կոշիկներ, գութաններ լինեն։ Սրա համար պետական արդյունաբերությունն էլ պետք է շուկայի համար արտադրի. իսկ քանի վոր նրա պրոդուկտները շուկային չեյին բավականացնում, և քանի վոր պետությունն ու կոոպերացիան դեռ ևս չեյին կարող իրենց առևտուրը կարգի գցել, ապա ուրեմն պետք եր թուլատրել մասնավոր արդյունաբերություն և մասնավոր առևտուր։ Մենք կտեսնենք հետո, վոր պարենժամանակաշրջանի վերացումը (продразверстка) վերացնելուց հետո, այդպես էլ կատարվեց։

Պարենժամանակաշրջանի վերացումը բերեց հասցրեց ազատ առևտրին։ Ինչո՞ւ յեր այդ հարկավոր։ Լենինն ասում եր այն

ժամանակ. «Իր պիկասատուրան մանր գյուղացական յերկրում իրականացնող պրոլետարիատի ուղիղ քաղաքականությունը՝ հացի փոխանակությունն է գյուղացուն անհրաժեշտ արդյունաբերական պրոդուկտների հետ։ Միայն այսպիսի պարենավորման քաղաքականությունն է համապատասխանում պրոլետարիատի խնդիրներին. միայն սա կարող է սոցիալիզմի հիմքերն ամրապնդել, նրան լիակատար հաղթանակի հասցնել»։ Ազատ առևտուրը հենց նրա համար եր հարմավոր, վոր կարգավորեր փոխանակությունը գյուղի և քաղաքի արդյունաբերության մեջ։

Առևտրի ոգնությամբ կարգի ընկած փոխանակության միջոցով գյուղը պետք է կապվեր պետական արդյունաբերության հետ, իսկ սրա ոգնությամբ մանր, ցան ու ցիր տնտեսություններից պետք է գնար դեպի խոշորը, միացյալը, սոցիալիստականը։ Ինչու միլիոնավոր մանր և մանրագույն գյուղացական տնտեսությունները չի կարելի միանգամից և արագորեն համախմբել, խոշորի վերածել։ Այդ չի կարելի անել յերկու պատճառով. նախ՝ գյուղացիներն իրենք այդ չեն ուզի, մինչև չը հասոզվեն, վոր իրենց համար այս ավելի ձեռնտու, ավելի ոգտակար է. յերկրորդ՝ վորովհետև այդպիսի համախմբումը միանգամից, անմիջապես, արագ՝ անկարելի է նաև տնտեսական տեսակետից։ Միացյալ, խոշոր տնտեսություն վարելու համար հարկավոր է ունենալ՝ լավ մեքենաներ և այլ լինվենտար, լավ անասուններ, պետք է ունենալ պաշարներ (запасы) ամեն մի անակնկալ դեպքի համար, և այլն։ Այս բոլորը դեռ այժմ էլ գյուղացական տնտեսության մեջ բավարար չափով չկա։ Կարելի յեր այդ դրությունից դուրս գալ, յեթե բոլոր համախմբյալ տնտեսություններին մեծ վարկեր բաց թողնվեր մեքենաներ, անասուններ ձեռք բերելու համար, և այլն։ Սակայն պետությունն այդպիսի մեծ միջոցներ չուներ։ Այս պատճառով, գյուղացական տնտեսությունների համախմբումը պետք է կատարվի միայն աստիճանաբար ու դանդաղ։ Նա պիտի կատարվի կոոպերացիայի միջոցով։ Յերբ մանր գյուղացական տնտեսությունը շուկայի համար է արտադրում, նա ինքն է ձգտում դեպի կոոպերացիան։ Ձգտում է, վորովհետև

այդ նրան ձեռնտու յե։ Դիցուք, գյուղացական տնտեսությունը վուշ է ցանել։ Հավաքած վուշը գյուղացին պիտի ծախի։ Վորտե՞ղ և ո՞ւմը պիտի ծախի իր վուշը չքավորը կամ միջակը։ Կամ յեկվոր գնողին (скупщик), կամ ծանոթ գնողին՝ քաղաքում, յեթե քաղաքը մոտ է, կամ թե, յեթե քաղաքը հեռու յե, մոտակա շուկայում (базар)։ Նա պիտի ծախի և վճասվի դրա նում։ Վուշի գները նա չգիտե. գիտե միայն այն գինը, ինչ նրան տալիս է գնողը. ուղարկել վուշն այն շուկան, վորտեղ ավելի թանկ կգնեն, գյուղացին չի կարողանա։ Այսպիսի գյուղացուն, վորը շուկայի հետ կապված է, կոոպերացումը ձեռնտու յե։ Վուշային կոոպերացիայի մեջ մտնելով, նա կարող է իր վուշը ծախել այն շուկաներում, վորտեղ վուշն ավելի թանկ է։ Յեթե յերկրի ներսում վուշը պահանջածից ավելի յե, կոոպերատիվը, իր տրամադրության տակ գտալի միջոցներ ունենալով, կարող է լավ պահեստատեղեր շինել և վուշը անձրևից, ձյուներից, և այլն, պաշտպանել։ Վուշը լավ մշակելու համար գյուղացուն հարկավոր են մեքենաներ. սերմը մաքրելու համար նույնպես մեքենաներ են հարկավոր, և այլն։ Զքավոր կամ միջակ գյուղացական առանձին տնտեսությունը ի վիճակի չի այդ մեքենաները գնելու։ Դարձյալ հարկավոր է համախմբվել կոոպերատիվի շուրջը։ Այսպիսով «Յեթե գյուղացությունն ուզում է իր կյանքում լուրջ և տևական խոշոր բարելավումների հասնել, նա պիտի ընթանա իր համախմբման ուղիով» (Բուխարին)։ Ի՞նչն է, ուրեմն, շարունակ դրդում գյուղացիներին համախմբվելու. նրանց կապը շուկայի հետ։ Շուկայի հետ կապվելով նրանք կոոպերացվում են։ Կոոպերացիայի միջոցով նրանք ավելի սերտ են կապվում պետական արդյունաբերության հետ, վորը նրանցից գնում է հում նյութը և նրանց ծախում իր ապրանքները. նրանք կապվում են պետական բանկերի հետ, վորտեղ վարկավորում են կոոպերացիան, և այլն։ Հաստատվում է, ինչպես մատնանշում եր Վլադիմիր Իլյիչ Լենինը, տնտեսական կապ, շաղկապ գյուղի և քաղաքի միջև, գյուղացական տնտեսության և այն սոցիալիստական արդյունաբերության միջև, վոր կառուցում է պրոլետարիատը. կոոպե-

րացիայի միջոցով գյուղը փոխադրվում է սոցիալիստական ռելսերի վրա։

Ահա թե ինչու պետք է զարգացնել առևտուրը քաղաքի և գյուղի միջև, զարգացնել ապրանքային տնտեսությունը։ Յեթե այդ զարգացումը յետ պահենք, յետ կընկնի նաև կոոպերացումը. մինչդեռ, միայն գյուղացիական կոոպերացած տնտեսությունները կարելի յե սոցիալիստական ռելսերի վրա փոխադրել։ Ուստի, չզարգացնել ապրանքային տնտեսությունը նշանակում է յետ պահել սոցիալիզմի շինարարությունը գյուղում։ Այսպես, ՆԵՊ-ը մտցնելով փոփոխվեց մեր տնտեսական քաղաքականությունը գյուղացիական տնտեսության նկատմամբ։

Արդյունաբերական քաղաքականությունը ՆԵՊ-ի ժամանակ

ՆԵՊ-ը մտցնելու հետ արդյունաբերական քաղաքականությունն էլ փոփոխվեց։ «Ռազմական կոմմունիզմի» ժամանակ պետությունն, ինչպես գիտենք, իր ձեռքին ուներ ամբողջ խոշոր, միջակ և, զգալի չափով, նույնիսկ մանր արդյունաբերությունը։ Արդյունաբերությունը պահվում էր պետության հաշվին. պետությունից էր ստանում հում նյութ, վառելիք, բանվորների համար պարեն և այլն։ Իր հերթին, նա պետությանն էր հանձնում այն ամենն, ինչ վոր ինքն արտադրում էր։ Այսպիսի կարգն անհրաժեշտ էր հանրապետությունը նրա վրա թափած սպիտակ բանակներից պաշտպանելու համար։ Յերբեմն կարիք էր լինում պահպանել և մթերքներ տալ միայն բերող ձեռնարկություններին միմիայն նրա համար, վոր նրանք յերկրի պաշտպանության համար եյին աշխատում։

Յերբ քաղաքացիական պատերազմը վերջացավ և սոցիալիզմի շինարարության շրջանը յեկավ, համեմատաբար ավելի հանգիստ պարագաներում հարկավոր էր վերանայել արդյունաբերական քաղաքականությունը։ Հիմնական խնդիրն այն էր, վոր ամենակարճ ժամանակում վերականգնվի խոշոր արդյունաբերությունը. Առանց խոշոր արդյունաբերությունը վերականգնելու, ավելորդ էր մտածել սոցիալիստական շինարարության մասին։ Առանց խոշոր արդյունաբերությունը վերականգնելու անհնարին էր տնտեսական հաստատուն դաշինք ստեղ-

ծել պրոլետարիատի և գյուղացության միջև, կանոնավոր առ-
ևտուր հաստատել քաղաքի և գյուղի միջև։ Պատերազմից ա-
ռաջ, Ռուսաստանում արդյունաբերությունը 5.400 միլիոն
ռուբլու զանազան տեսակ ապրանքներ էր արտադրում։ Ըստ
վորում, այդ գումարից խոշոր արդյունաբերությանն ընկ-
նում էր 4.500 միլիոն ռուբլի, այսինքն չորս-հինգերորդը։ Հենց
խոշոր արդյունաբերությունն էր ծախում խոշոր մասն այն
ապրանքների, վոր գնում էր գյուղը։ Հետևաբար, առանց խո-
շոր արդյունաբերությունը վերականգնելու անհնարին էր գյու-
ղի և քաղաքի միջև մինչպատերազմյան ապրանքներ փոխա-
նակել, առևտուրը վերականգնել։ Սակայն խոշոր արդյունա-
բերության վերականգնումն այն ժամանակի պայմաններում
խիստ դժվարին գործ էր։ «Կարիքն ու ավերը, գրում էր այն
ժամանակ Լենինը, այնպիսի յեն, վոր խոշոր գործարանային,
պետական սոցիալիստական արդյունաբերությունը մենք չենք
կարող միանգամից վերականգնել։ Դրա համար հարկավոր է
ունենալ հացի և վառելանյութի խոշոր պաշարներ խոշոր ար-
դյունաբերության կենտրոններում, հարկավոր է մաշված մե-
քենաները նորերով փոխարինել, և այլն»։
Յեթե մաշված մեքենաները նորերով փոխարինելու նը-
կատմամբ կարելի յեր դեռ ևս սպասել (այժմ այլ ևս այդ ա-
նել չի կարելի), ապա՝ բանվորների պարենավորման համար
հացի խոշոր պաշարներ և հենց գործարանների համար հում
նյութի մեծ պահեստները հարկավոր եյին հենց այն ժամա-
նակ։ Այս միայն գյուղը կարող էր տալ։ Իսկ վորպեսզի գյու-
ղը այս տար, հարկավոր էր ժողովրդական տնտեսությունը
բարձրացնել։ Բայց, ինչպես տեսանք, միայն խոշոր արդյու-
նաբերությունը կարող էր գյուղական տնտեսությունն առաջ
հրել դեպի վերելք, գյուղացիներին անհրաժեշտ ապրանքներ
տալով։ Ստացվում էր մի «կախարդական շրջան», վորից դուրս
գալու համար պետք էր յելք գտնել։ Մեր կուսակցությունը,
Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, գտավ այդ յելքը։ Լենինը
ցույց տվեց վոր՝ մինչև խոշոր արդյունաբերությունը կարգի
բերելը, գյուղացուն ապրանքներ մատակարարողը միջակ և

մանր արդյունաբերությունները պիտի լինեն։ Ամբողջ արդյունաբերությունը վարելը, միանգամից բոլորը միասին կարդի գցելը մեզ համար դժվար է։ Մեր պետությունն իր գլխավոր ուժերը պիտի կենտրոնացնի ամենագլխավորի, ամենահարժեքավորի վրա, այն է՝ խոշոր արդյունաբերության վրա. իսկ մանր արդյունաբերության մեջ թող աշխատեն արհեստագործները. թող մանր արդյունաբերության և մի-ջակ արդյունաբերության մի մասը, որը պետությունն այժմ ուժ չունի վարելու, կոոպերացիան և մանավոր մարդիկ՝ կապիտալիստները վարձակալեն։ Այսպիսով ամբողջ արդյունաբերությունը կկսի գործել և գյուղացին կստանա իրեն հարկավոր ապրանքները։ Պետությունը, մանր արդյունաբերությունից և միջակի մի մասից թեթևանալով, առաջվանից ավելի ուժ կը տա խոշոր արդյունաբերության վերականգնմանը։ Վերականգնելու և միաժամանակ, գյուղի հետ կապվելու համար, պետական արդյունաբերությունն, ինչպես և գյուղական տնտեսությունը, պետք է շուկայի համար աշխատեն։ Շուկայում նրանք պիտի մրցեն մանավոր արդյունաբերության հետ և երբ բավականաչափ կամրապնդվեն, հետզհետե կվտարեն մանավոր արդյունաբերությունը։ Վորպեսզի իրապես այդ կատարվեր, մեր պետական արդյունաբերությունը պիտի գործեր վոչ միայն առանց վնասի, վոչ միայն իր ծախսերը պիտի ծածկեր, այլ և վաստակ ունենար։ Առանց այս, նա չէր կարող իր վերքենաները նորոգել, չէր կարող ընդարձակվել և մանավոր արդյունաբերության հետ մրցել։ Առանց այս, նա պիտի մեծ ծախսեր պահանջեր պետությունից. հարկ կլիներ գյուղատնտեսության տուրքն ավելացնել, իսկ այդ կվնասեր գյուղատնտեսությանը և արդյունաբերությանը։ Այս պատճառով մեր պետարդյունաբերությունը, նրա ձեռնարկությունները փոխադրվեցին խիստ տնտեսական հաշվի (хозрасчет)։

Այսպիսով, ՆԵՊ-ի մտցնելով արդյունաբերության մեջ մենք այսպիսի գլխավոր փոփոխություն առաջացրինք.

1. Ամբողջ արդյունաբերությունը սկսեց շուկայի համար գործել։

2. Պետությունն իր գլխավոր ուժերը շպրտեց խոշոր արդյունաբերության վերականգնման ու բարձրացման վրա և փոխադրեց նրան տնտեսական հաշվի։

3. Արդյունաբերության մեջ թույլ տրվեց մասնավոր կապիտալը, որին իրավունք տրվեց վարձակալել այն ձեռնարկությունները (մանր և միջակ), որոնք պետությունը՝ ինքը չէր ցանկանում, կամ չէր կարողանում սպասավորել։

Ձեռնարկությունները վարձակալության տալով, պետությունը պայմանագիր էր կապում վարձակալողի հետ, որի մեջ ցույց էր տրվում, թե վերջինս ինչպես և պարտավոր արտադրել, ինչպիսի սարքավորումն պետք է դնի, վարձակալության համար վորքան պիտի վճարի պետությանը և վարձակալության ժամկետն անցնելուց հետո ձեռնարկությունն ինչ վիճակի մեջ պիտի վերադարձնի պետությանը։ Սրան պետք է ավելացնել, վոր դեռ ևս սրանից առաջ վորոշված էր թույլ տալ մեզ մոտ նաև արտասահմանյան կապիտալը. յենթադրվում էր նրան հանձնել այնպիսի ձեռնարկություններ կամ այնպիսի բնական հարստությունների մշակումը, վորոնք պահանջում էին այնպիսի խոշոր միջոցների կիրառումն, վորպիսիք մեր պետությունը չունի։ Այս հանձնումը (կոնցեսիան) պիտի լիներ յերկար ժամանակամիջոցով. սակայն հատուկ պայմաններով, ըստ վորում ձեռնարկությունները, ժամկետն անցնելուց հետո, պիտի վերադարձվեին պետությանը լավ սարքավորված վիճակում, իսկ միջակման ժամանակի ամբողջ ընթացքում մշակութի (выработа) մի մասը, բնանյութով (натурой) կամ փողով, պիտի պետությանը հասներ։

Ձեռնարկությունների վարձակալումը մասնավոր կապիտալի կողմից և կոնցեսիանները լենինն անվանում էր պետական կապիտալիզմ, վորովհետև այստեղ արդյունաբերության մեջ թույլ էին տրվում կապիտալիստները. սակայն սրանք կապված էին պետության հետ պայմանագրով. պե-

սուԹյունը կարող եր նրանց վերահսկել, նրանց գործը կարգավորել և ուղղուԹյուն տալ։

Ըստ ինքյան հասկանալի յե, վոր պետուԹյան կողմից ազատ հայտարարված մանր տնայնագործական արդյունաբերուԹյան մեջ, իրենց հերԹին կարող եյին աճել, պետք և աճելին և սկսեցին աճել և մանր կապիտալիստներ, վորոնք բանվորներ եյին վարձում և իրենց ձեռնարկուԹյունների պատրաստած իրեղենները վաճառելով քաղաքում և գյուղում, կարող եյին շահուՀներ անել։ Ազատ առևտուրը սրան նպաստում եր։

Մասնավոր կապիտալը հենց առևտրի մեջ ել կարող եր զարգանալ։ Յեվ մասնավոր առևտուրն սկսեց արագ Թափով աճել ԹԵ քաղաքում, ԹԵ գյուղում։ Վերջապես, հենց այդ ազատ առևտրի պարագաներում կարող եյին ժրել և ժրեցին գյուղական մանր կապիտալիստներն ու կապիտալիստիկները, ինչպես անվանում եր նրանց Վ. Ի. Լենինը։ Սրանք գյուղական կուլակներն են։ Նրանք կարող եյին շահվել ու հարստանալ, և հարստանում են գյուղացական Թուլլ տնտեսուԹյունների հաշվին։ Գյուղում Թուլլ տնտեսուԹյուններ դեռ ևս շատ կան։ Բացի այս, գյուղացական տնտեսուԹյունը հողի այժմյան մշակուԹյի յեղանակներով, ցանքսի յեղանակով, կենդանի և մեռյալ ինվենտարի այժմյան վիճակով յեՀԹակա յե ամեն տեսակ պատահականուԹյունների։ ԱնբերրուԹյուն, անասունների անկում (падеж) կամ մի այլ դժբախտ դիպված — և գյուղացու տնտեսուԹյան մեջքը կոտրվում է, նա Թուլտնում է։ Սրանից կարող է ոգտվել գյուղի կուլակն ու քաղաքի կապիտալիստը, վորը «ծանոթուԹյամբ» կամ «բարեկամաբար» տարկացուցիչ պայմաններով գյուղացուն ոգնուԹյուն ցույց կտա։ Այսպիսով, գյուղում շահագործման հնարավորուԹյուն է ստեղծվում։ Շահագործման նմանորինակ հնարավորուԹյուններ ստեղծվում են նաև քաղաքում։ Արդյունաբերական ձեռնարկուԹյունների կապիտալիստ-վարձակալողները և կոնցեսիոներները, առևտրականները, վարձու աշխատանքով ոգտվող արհեստանոցների տերերը, հնարավորուԹյուն ունեն ուրիշի աշխատանքը շահագործելու։

Վատնգներ սոցիալիստական շինարարուԹյան առաջ

Առաջին հայացքից ստացվում է անհասկանալի մի բան։ Զորս տարի կատաղի կռիվ մղեցինք շահագործողների դեմ։ ՀաղԹեցինք և դուրս վանեցինք նրանց մեր յերկրից, նրանց զրկեցինք քաղաքական իշխանուԹյունից և ամեն տեսակ քաղաքացիական իրավունքներից։ Այս բոլորն արինք նրա Համար, վորպեսզի ավելի քիչ արգելքներ ունենանք սոցիալիզմի շինարարուԹյան ճամբին և վերջնականապես վոչնչացնենք ամեն տեսակ շահագործում։ Իսկ հետո ինքներս հնարավորուԹյուններ ստեղծեցինք շահագործման Համար։ Նորից հանդես յեկան մանր կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկուԹյունները. նորից հանդես յեկան կապիտալիստներն արդյունաբերուԹյան մեջ. նորից աճեցին մասնավոր խանուԹները, մասնավոր կապիտալիստական առևտրական ձեռնարկուԹյունները։ Վտանգ չկա՞ արդյոք, վոր քաղաքի վերածնված կապիտալիստները միանալով գյուղի բուրժուազիայի հետ, կպայԹեցնեն սոցիալիստական շինարարուԹյունը և հին կապիտալիստական կարգերը կվերահաստատեն։

Չի կարելի ասել, վոր վոչ մի վտանգ չկա։ Նոր տնտեսական քաղաքականուԹյուն մտցնելով Թուլլատրվեց ազատ առևտուր, Թուլլատրվեց մասնավոր կապիտալ առևտրի և արդյունաբերուԹյան մեջ։ Լենինը ցույց եր տալիս, վոր կա վտանգ և այն ել մեծ, բայց հենց ինքն ել ցույց եր տալիս, վոր սրա դեմ բանվոր դասակարգի ձեռքին ուժեղ զենք կա։ Այս զենքը պետական իշխանուԹյունն է. իսկ պետական իշխանուԹյան ձեռքին է խոշոր արդյունաբերուԹյունը, յերկաԹուղիները, բանկերը, հողը, և վերջապես, կոոպերացիան։ Մասնավոր ձեռնարկուԹյունները Թուլատրելով՝ պետուԹյունը ձեռք զարկեց իր խոշոր ադյունաբերուԹյան վերականգնմանը։ Մասնավոր արդյունաբերուԹյուն նա Թուլլտալով՝ միայն չափավոր։ Պետական և մասնավոր արդյունաբերուԹյան ամմանն այնպիսի ուղղուԹյուն է տրվում, վոր գերակշռուԹյունը պե-

տական արդյունաբերության կողմը լինի։ Ա.ո 1924 թիվն այդ գերակշռությունն արդեն կար. արդյունաբերական ապրանքների արժեքի յուրաքանչյուր 100 ռուբլուց՝ 80-ը պետական արդյունաբերությանն էր ընկնում, և միայն 20-ը մասնավորին։

Առևտուրն էլ համարյա նույն վիճակումն էր։ Նեպի առաջին տարիներին, քանի դեռ պետական և կոոպերատիվ առևտուրը կարգավորված չէր, մասնավոր առևտուրը, մանավանդ մանրավաճառը (розничная) գերակշռում էր. իսկ 1925 թվին դրությունն արդեն այլ էր։ Մեծաքանակ առևտրի մեջ պետության և կոոպերացիայի բաժինն արդեն հավասար էր 89%-ի, իսկ մասնավոր առևտրականներինը միայն 11% ի։ Մանր հատավաճառ առևտրի մեջ պետական և կոոպերատիվ առևտրի բաժինը հասնում էր արդեն 56%-ի, իսկ մասնավորինն արդեն կեսից պակաս՝ 44%։ Իսկ քանի որ հատավաճառը յենթարկված է խոշոր մեծաքանակին, ապա ուրեմն չարզ է, որ այստեղ էլ վճռական ձայնը պետությանն է։ Մեծաքանակ առևտուրը, որից հատավաճառ առևտրականը ապրանքներ է առնում, ցանկացած րոպեին կարող է կրճատել կամ նույնիսկ բոլորովին դադարեցնել վերջինիս ապրանք վաճառելը։ Եթե հատավաճառը պետական մեծաքանակ առևտրից ապրանք չստանա, նա ուրիշ տեղ ապրանք ճարել չի կարող և ստիպված կլինի փակել իր խանութը։ Բացի այս, մեզ մոտ գյուղությունի արտաքին առևտրի մենաշնորհն։ Ուրիշ պետությունների հետ մասնավոր առևտրականները և կապիտալիստներն առևտուր անելու իրավունք չունեն։ Ոտար յերկիրների հետ ամբողջ առևտուրը Սովետական պետության ձեռքին է կենտրոնացած։

Մեր յերկրում բանկերը, այսինքն՝ այն հիմնարկությունները, որոնց մեջ դրամական կապիտալներն են հավաքված, իսկապես ժողովրդական են, պատկանում են պետության։ Բանկերն իրենց հավաքած կապիտալը գործադրում են զանազան նպատակների. վարկ են բաց թողնում տոկոսով, մուրհակներ են զեղչում (գնում), ավանդներ (вклад) են ընդունում և այլն։ Շատ դժվար է առևտուր կամ գործարանային ձեռնարկությունը

առաջ տանել առանց վարկի դիմելու (առանց փող պարտք վերցնելու)։ Բանկերի միջոցով պետությունը կարող է ազդել մասնավոր առևտրի և մասնավոր ձեռնարկությունների վրա։ Նա կարող է նույնպես դադարեցնել առևտրականներին և կապիտալիստներին վարկ թողնելը, որով նրանց դժվարին դրության մեջ կդնի, կամ նրանց կատարյալ թողնել իրենց տարած գործը։ Նա կարող է վարկով աջակցություն ցույց տալ պետարդյունաբերությանը, գյուղացական աշխատավորական արտելներին և պետառևտրին։

Մեր յերկրում խորհրդային իշխանության են պատկանում նաև յերկաթուղիները ու ջրային ճանապարհները։ Ապրանքներ և առհասարակ ամեն տեսակ ծանրություններ փոխադրվում են կամ յերկաթուղով, կամ շոգենավերով ու բարժաներով։ Ոգտվելով սրանից, պետությունը, կարող է ազդել մասնավոր առևտրականներին և կապիտալիստներին պատկանող ապրանքների փոխադրության վրա։ Նա կարող է մասնավորի բեռը չընդունել տեղափոխելու, կրճատել նրա փոխադրելի բեռների քանակը, փոխադրությունների ընդունելությունը հետաձգել անորոշ ժամանակով, բարձրացնել փոխադրության գինը և այլն։ Պետությունից է կախված զգալի չափով և այն, թե՝ կհաջողվի արդյոք ձեռնարկուին ապրանքային բեռը հասցնել, թե՝ ոչ։ Եթե հասցնել էլ հաջողվի, ապա այդ միայն այն ժամանակ, յերբ պետությունը կցանկանա, կամ թե այն ժամանակ, յերբ այդ ձեռնտու է պետությանը, և այլն։ Միևնույն ժամանակ նա կարող է զանազան արտոնություններ տալ արդյունաբերության և գյուղական կոոպերացիային ապրանքներ փոխադրելու համար։

Մեր յերկրում հողն էլ պետությանն է պատկանում։ Այս նշանակում է, որ կապիտալիստն ու կուլակը չեն կարող չքավորներից հողը գնել և նոր կալվածատերեր դառնալ։ Սրան խոչընդոտ կդառնա այն, որ մեզ մոտ հողի մասնավոր սեփականություն չկա։ Մյուս կողմից, պետությունը կարող է զանազան միջոցներով նպաստել գյուղացական հողամասերի

խթբավորման և մեծ կոլեկտիվ տնտեսությունների վերածվելուն։

Այսպիսով, տնտեսության «իշխող բարձունքները», այն է՝ խոշոր արդյունաբերությունը, հողը, բանկերը, երկաթուղիները, արտաքին առևտուրը, ահագին տնտեսական ուժ են տալիս խորհրդային պետության ձեռքը։ Հենվելով այս ուժին, պետությունն, առանց վախենալու կարող եր թույլատրել մասնավոր առևտրականների, կապիտալիստների և կապիտալիստիկների գոյությունը քաղաքում և գյուղում՝ թույլ չտալով նրանց անսահմանորեն ընդարձակվել, միաժամանակ, իր պետական առևտրի միջոցով, քաղաքային և գյուղական կոոպերացիայի միջոցով քայլ առ քայլ սեղմելով նրանց ավելի ու ավելի հաժեստ մի անկյունում։ Իհարկե, սրա համար հարկ կլինի մեծ պայքար մղել։ Կապիտալիստներն ու կապիտալիստիկները արդյունաբերության մեջ չանում են կպվել գյուղի հետ, յերը այնտեղ իրենց ապրանքներն են սպառում։ Նրանք աշխատում են քանդել այն տնտեսական կապը, որ կոոպերացիայի և պետական առևտրի միջոցով հաստատվում է գյուղի և պետական արդյունաբերության միջև, գյուղացական մասսայի և բանվոր դասակարգի միջև։ Նրանք ուզում են իրենց կապը հաստատել, ամրապնդել, վորպեսզի նրանով կաշկանդեն գյուղը և շահագործեն նրան։ Այս բանում նրանց ոգնության է հասնում գյուղական կապիտալիստիկը՝ կուլակը։ Լավ գիտակցելով, թե ինչպես կոոպերացիան գյուղական չքավորության և միջակ գյուղացության տնտեսությունը պաշտպանում է կուլակային շահագործումից, կուլակը կռիվ է մղում կոոպերացիայի դեմ, առանց միջոցների մեջ խարխություն դնելու, կամ ձգտում է սիրաշահել կոոպերացիային, նրան շուռ տալ իր և քաղաքի մասնավոր կապիտալի ոգին։

Գուցե, այս պայմաններում ավելի լավ, ավելի ձեռնտու չե հենց այժմյանից արգելել մասնավոր առևտուրը, կապիտալիստներին բոլորովին վտարել արդյունաբերությունից, վոչնչացնել կուլակությունը գյուղում,—վոհմանակ նրանց հետ անընդհատ կռվելու, շարունակ հոգալու, վոր նրանք չվնասեն սոցիալիզմի շինարարության։ Չե՞ վոր մեր պետությունը, մեր իշխանությունը բավականաչափ ուժ ունի այդ միանգամից անելու։ Հապա ինչո՞ւ նա այդ չի անում։

Պետությունը չի վոչնչացնում ՆԵՊ-ի ժամանակ թույլատրված կապիտալիզմը քաղաքում և գյուղում, վորովհետև նա ոգտագործում է այդ կապիտալիզմը, ստիպում է նրան վորոշ աշխատանք կատարել։ Պետական արդյունաբերությունը ՆԵՊ-ը մտցնելիս չեր կարողանում աշխատավոր ազգաբնակության պահանջները բավարարել. նա դեռ այժմ էլ չի կարող լիովին բավարարել այն։ Մոտավոր հաշիվներով գյուղացությունն ընթացիկ տարում հետևյալ պահանջն է ներկայացնում, միլիոն ռուբլիներով հաշված.

Բաժրակեղեն գործվածքների		իսկ արդյունաբ. կարող	
	1.031	է բավարարել	954,3
Մետաղային գործվածքներ	382	» » »	300
Գյուղատնտեսակ. մեքենաների	120	» » »	80,5
Կոշկեղենի և կաշվի	528	» » »	426

Մենք տեսնում ենք, վոր գյուղացու համար չափազանց կարևոր մի շարք ապրանքների պահանջը 1925—26 թվականին դեռ ևս չի կարող բավարարվել պետական արդյունաբերության կողմից։ Ահա թե ինչու պետությունը ցույց է տալիս մասնավոր կապիտալին արտադրելու դեռ ևս պակասող ապրանքները։

Առևտրի տպարիզում։ Առևտրական պետական և կոոպերատիվ ապարատը դեռ այնքան ուժեղ չե, վոր կարողանա սպասավորել խորհրդային հանրապետության ամբողջ ազգաբնակությանը։ Ուր առևտրական ապարատը դեռ բավական թույլ է, ուր նա դեռ ազգաբնակությանը չի ընդգրկել, սակայն ենք մասնավոր առևտուրն ա՛ռ այժմ հանդուրժել։

Սակայն պետարդյունաբերությունը, պետական առևտուրն ու կոոպերացիան քանի գնում աճում են և հետզհետե դուրս են մղում մասնավոր կապիտալը։ Մենք արդեն թվեր բերեցինք 25 թվականի վերաբերյալ մեծավաճառ և հատավաճառ առևտրի մասին։ Այժմ թվեր բերենք թե՛ մեծ և թե՛ մյուս տեսակ առևտրի վերաբերյալ յերեք տարվա ընթացքում.

1922—23 թվ. պետ. և կոոպ. առևտուրը կազմում էր
56,1%, մասնավորը 43,9%
1923—24 թվ. . . 64,1% » 35,9%
1924—25 թվ. . . 75,1% » 24,9%

Այս թվերից յերևում է, թե ինչպես տարեցտարի, քանի աճում է պետարդյունաբերությունը, քանի ընդարձակվում է պետական առևտուրը և կոոպերացիան, այնքան ավելի հարվածներ են հասնում մասնավոր կապիտալին։ Սա, իրապես, վտարվում է տնտեսությունից։

ՆԵՊ-ի ժամանակ յերևան յեկած կապիտալիզմը չի արգելվում. նա պիտի վորոշ դեր կատարի։ Նրան թուլատրում են, բայց թուլատրելով հանդերձ նրա դեմ անընդհատ պայքար են մղում։ Նրա դեմ չկռվել չի կարելի, քանի վոր նա ձգտում է բեկանել բանվոր դասակարգի միությունը գյուղացության հետ, խորտակել սոցիալիստական շինարարության գործը։ Թե սոցիալիստական շինարարությունը, թե կոոպերացիան քայլ առ քայլ հարվածում և վտարում են կապիտալիզմը։ ՆԵՊ-ի ժամանակ շարունակ այդ կռիվը կա։ Սրանումն է նոր տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրը։ «ՆԵՊ-ը կուսակցության այն քաղաքականությունն է, վոր թուլ է տալիս սոցիալիստական և կապիտալիստական տարրերի կռիվը, այն հաշվով, վոր սոցիալիստական տարրերը կհաղթեն կապիտալիստականներին։ Արդեն մի քանի տարի յե, վոր մենք հարձակվում ենք, և հարձակվում ենք հաջողությամբ, զարգացնելով մեր ինդուստրիան, զարգացնելով խորհրդային առևտուրը, նեղելով մասնավոր կապիտալին» (Ստալին)։

Այսպիսով, կապիտալիզմի դեմ անընդհատ կռվի ընթացքում մեր յերկրում նոր սոցիալիստական հասարակակարգ է կառուցվում։ Հնարավորություն ունենք արդյոք այդ աշխատանքը լիովին ավարտելու։ Անպայման այդ հնարավորությունները կան։ Մեր յերկիրն ունի անսպառ պաշարներ այն ամենի, ինչ վոր հարկավոր է տնտեսության ամենահզոր զարգացման համար (յերկաթ, քարածուխ, նավթ, բերրի հողի հսկայական տարածություն և այլն)։ Իշխանությունը յերկրի մեջ

բանվոր դասակարգի ձեռքին է, վորը հաստատորեն շարժվում է դեպի այդ նպատակը՝ դեպի սոցիալիզմի կառուցումը։ Մենք ՆԵՊ-ը մացրինք, վորպես պրոլետարիատի և գյուղացության ձեռքով սոցիալիզմը կառուցելու մի յեղանակ։ Պրոլետարական պետության ձեռքին են գտնվում բոլոր ժողովրդական տնտեսության «իշխող բարձունքները», վորոնց ոգնությամբ նա յերկրում հաղթական կռիվ է վարում կապիտալիզմի դեմ։ «Սարսափելի՞ յե, արդյոք, այդ կապիտալիզմը մեզ համար, ասում էր Լենինը, յերբ մեր ձեռքին են գործարանները, տրանսպորտը և արտաքսահմանյան առևտուրը։ Ցավ ահա յես ասում եմ այն ժամանակ, և պիտի կրկնեմ այժմ էլ, և անհերքելի յեմ համարում, վոր այդ կապիտալիզմը մեզ համար սարսափելի չե»։

Բանվոր դասակարգի և գյուղացության միության անընդհատ ամրապնդումը, մինչև վոր մեր տնտեսությունից կապիտալիզմը կվտարվի, ամրապնդելու յե սոցիալիստական շինարարության հիմքը։ Բանվորների և գյուղացիների միահամուռ ջանքերը, նրանց հաստատուն ցանկությունն այնպիսի նոր կարգեր հիմնելու, վորոնց մեջ շահագործում չլինի, սրանք՝ լավագույն գրավականն են սկսած աշխատանքի հաջողության համար։ Իզուր չեր ասում Լենինը, թե մեր յերկիրը բոլոր հնարավորություններն ունի լիակատար սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռազմական դաշինքն առանց տնտեսական միության գոյություն ունենալ չի կարող։ Ձե՞ վոր մենք միայն ոդով չենք ապրում. մեր դաշինքը գյուղացության հետ վոչ մի կերպ չեր կարող յերկարաև լինել առանց տնտեսական հիմունքի, վորը բուրժուազիայի դեմ մեր տարած հաղթանակի հիմքը հանդիսացավ։ Ձե՞ վոր մեր բուրժուազիան ամբողջ միջազգային բուրժուազիայի հետ եր միացած։

Մեր և գյուղացության մեջ այդ անտեսական հիմքն ի հարկե շատ հասարակ եր, նույնիսկ կոպիտ (грубый)։ Գյուղացին ժեղնից ստացավ ամբողջ հողը և ոգնություն՝ խոշոր հողատիրության դեմ։ Դրա փոխարեն ժենք պիտի նրանից պահեն ստանանք։ Այս դաշինքը բոլորովին նոր բան եր և չեր հիմնված ապրանք արտադրողների և սպառողների սովորական փոխհարաբերությունների վրա։

(Լենին, XVIII հ. I մ., 327 յեր. Զեկուցում ՌԿԿ տակտիկայի մասին Կոմինտերնի III կոնգրեսում)։

ՈՒԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ՑԵՎ ՖՐԴՑՈՒՆԱՓՈՒՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ռազմական կոմմունիզմը» պատերազմի և քայքայման հարկադրության արդյունք եր։ Նա պրոլետարիատի անտեսական խնդիրներին համապատասխան մի քաղաքականություն չեր և այդպիսին չեր ել կարող լինել։ Նա մի ժամանակավոր միջոց եր։ Մանր գյուղացական յերկրում իր դիկտատուրան իրականացնող պրոլետարիատի ուղիղ քաղաքականությունը՝ հացը գյուղացուն անհրաժեշտ արդյունաբերության արդյունքներով փոխանակելն ե։ Պարենավորման այսպիսի քաղաքականությունն ե միայն համապատասխանում պրոլետարիատի խնդիրներին. միայն սա ե ընդունակ սոցիալիզմի հիմքերն ամրացնելու և նրան լիակատար հաղթանակի հասցնելու։

(Լենին XVIII հ. I մ. 214 յեր. «Պարենատուրքի մասին»)։

ԻՆՉՈ՞Ւ ՊԱՏԵՐԱՄԱՏՆԱՏՐՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՈՒՐԿՈՎ ՓՈԽԱՐԻՆՎԵՑ

Յեթե մի յերկրում, վորտեղ գյուղացի ազդաբնակությունը գերակշռող ե, բանվորական հեղափոխություն ե տեղի ունենում, գործարաններն ել, յերկաթուղիներն ել բանվոր դասակարգի ձեռքն են անցնում, հապա ինչն ե բանվոր դասակարգի և գյուղացության անտեսական հարաբերությունների ելությունը։ Ակներև ե՝ վոր բանվորները, այնուհետև իրենց պահպանող գործարաններում յերկրի համար (ապա ուրեմն՝

ազգաբնակության մեծամասնությունը կազմող գյուղացության համար) պրոդուկտներ են արտադրում. այդ պրոդուկտներն իրենց յերկաթուղիներով, իրենց գետանավերով փոխադրում, հասցնում են գյուղացությանը և նրանից ստանում գյուղատնտեսական պրոդուկտների մնացորդները։ Այս միանգամայն արդարացի յե և հազիվ թե լրացուցիչ բացատրություններ կարիք ունենա։ Սակայն, յերբ գործում են պարենտուրքի մասին, շարունակ այս մոռանում են։ Այն ինչ, այս անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ. վորովհետև պարենտուրքի, վորը միայն մի միջոց ե, նշանակությունը լուսաբանելու համար, պետք ե պարզ ըմբռնել, թե ինչ բանի յենք ձգտում հասնել։ Յեվ ահա, ասածիցս պարզ ե, վոր մենք ուզում ենք և պիտի հասնենք այն դրության, վոր գյուղացու պրոդուկտները բանվորական պետության անցնեն վոչ թե վորպես ավելցուկ, ժամանակման միջոցով և վոչ թե վորպես տուրք, այլ՝ վորպես հատուցումն տրանսպորտի միջոցով փոխադրվող և գյուղացությանը ժամակարարվող անհրաժեշտ պրոդուկտների փոխարեն։ Սոցիալիզմին անցած մի յերկրի անտեսությունն այս հիմունքների վրա կարող ե կառուցվել։ Յեթե գյուղացական անտեսությունը կարող ե շարունակել զարգանալ, ապա՝ անհրաժեշտ ե անվիճելապես ապահովել նաև հետագա ժամանակաշրջանը. իսկ հետագա ժամանակաշրջանն անխուսափելիորեն կապանում ե նրանում, վորպեսզի նվազագույն շահավետ և առավելագույն յետաճնաց գյուղացական անտեսությունը հետզհետե համախմբվի, կազմակերպվի և հասարակական, խոշոր յերկրագործական անտեսության վերածվի։ Միշտ ել այսպես եյին ըմբռնում բոլոր սոցիալիստները։

(Լենին, XVIII հ. I մ. 188 յեր. «Զեկուցում պարենտուրքի մասին»)։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

Մեր տնտեսությունը մենք կառուցում ենք գյուղացության հետ միացած։ Մենք պիտի նրան բազմից փոփո-

խուլթյան յենթարկենք և այնպես անենք, որ զոդումն լինի խոշոր արդյունաբերության ու գյուղատնտեսության ասպարեզներում տարվող մեր սոցիալիստական աշխատանքի և այն աշխատանքի միջև, որով գյուղացին է զբաղված և որ նա տանում է այնպես, ինչպես կարող է, կարիքի տակից դուրս գալով, մի կերպ դուրս գալով, առանց յերկար ու բարակ մտածելու (որովհետև, նրա ի՞նչ բանն է մտածելը, ամենատանջալի սովամահության վտանգից դուրս պրծնելու և փրկվելու համար)։ Պետք է այդ զոդումը ցուցադրել, որպեսզի նա պարզ տեսնի, որ կապ կա իր այժմյան ծանր, անասելի քայքայված, չլսված աղքատ, տառապալից կյանքի և հանուն հեռավոր սոցիալիստական իդեալների տարվող աշխատանքի միջև։ Պետք է այնպես անել, որ հասարակ, շարքային աշխատավոր մարդու համար պարզ լինի, որ նա որևէ բարելավումն ձեռք է բերել ու ստացել է ոչ այնպես, ինչպես ստանում էյին գյուղացիներից ոչ շատերը կալվածատիրական իշխանության և կապիտալիզմի շրջանում, յերբ բարելավման յուրաքանչյուր քայլ (լինում էյին անշուշտ, բարելավումներ, և շատ էլ մեծ) կապված էր ծաղրի, ստորացման հետ, գյուղացուն այնպիսի ծաղրանքի յենթարկելով, մասսային այնպիսի բռնության յենթարկելով, որպիսին գյուղացիներից ոչ մեկը չի մոռացել և տասնյակ տարիներ չի մոռանա Ռուսաստանում։ Մեր նպատակն է զոդումը վերականգնել, գյուղացուն գործով ապացուցել, որ մենք սկսում ենք այն բանից, ինչ որ նրան հասկանալի յե, ծանոթ է և չնայած նրա խիստ աղքատության, նրա համար մատչելի յե, որ մենք չենք սկսում գյուղացու տեսակետից հեռավոր, յերևակայական բաներից։ Մեր նպատակն է ապացուցել, որ մենք կարողանում ենք նրան ոգնել, որ կոմմունիստները քայքայված, աղքատացած, սովից տառապող մանր գյուղացու ծանր վիճակի րոպեյին իսկույն նրան ոգնում են գործով...։

Միանալ գյուղացիական մասսային, շարքային աշխատավոր գյուղացիությանը և սկսել, մեր յերազածին հակառակ, անչափ, անսահման դանդաղորեն առաջ շարժվել, բայց դրա

փոխարեն շարժվել այնպես, որ իրապես ամբողջ մասսան մեզ հետ կշարժվի։ Այն ժամանակ, այդ շարժման արագացումը կլինի իր ժամանակին և այն էլ այնպես արագ, որ մենք այժմ յերազել իսկ չենք կարող։

(Լենին, ՌԿԿ (բ.) XI համագումարում արտասանած ճառը. XVIII հ. 2 մաս, 28—30 յեր.)։

ՆԵՊ-ի ՄԱՍԻՆ

ՆԵՊ ը կուսակցության այն քաղաքականությունն է, որ թույլատրում է սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարն այն հաշվով, որ սոցիալիստական տարրերը կհաղթեն կապիտալիստական տարրերին։ Իրապես նա միայն սկսել է նահանջով, բայց ծրագրված է այնպես, որ նահանջի ընթացքում ուժերի վերախմբավորում կատարի և հարձակման անցնի։ Մենք իրոք, արդեն մի քանի տարի յե, որ հարձակվում ենք, և հարձակում ենք հաջող՝ զարգացնելով մեր արդյունաբերությունը, զարգացնելով խորհրդային առևտուրը, նեղելով մասնավոր կապիտալը։

(Ստալին. «Բոլշևիկ» № 3, յեր. 39)

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱ՛ՆԱԿԻ ՄԱՍԻ՛Ն

Ի՞նչ բան է սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մի յերկրում։

Այս՝ պրոլետարիատի և գյուղացիության միջև յեղած հակասությունները լուծելու հնարավորությունն է՝ մեր յերկրի ներքին ուժերի միջոցով։ Հնարավորություն՝ պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու և այդ իշխանությունն ոգտագործելու մեր յերկրում լիակատար սոցիալիստական հասարակակարգի կառուցման համար, ուրիշ յերկրների պրոլետարների համակրության և աջակցության պարագաներում, և ոչ թե այդ յերկրներում պրոլետարական հեղափոխության նախապես հաղթանակելուց հետո։

Առանց այսպիսի հնարավորության սոցիալիզմի կառուցումը մի կառուցումն է՝ առանց հեռանկարի, առանց վստա-

հութ յան, թե՝ սոցիալիզմը կկառուցվի։ Չի կարելի սոցիալիզմ կառուցել, առանց վստահ լինելու, որ մեր յերկրի տեխնիքական յետամնացությունն անհաղթահարելի մի արգելք չի հանդիսանում լիակատար սոցիալիստական հասարակակարգ ստեղծելուն։ Այսպիսի մի հնարավորության բացառումն անհավատություն է սոցիալիզմի շինարարության գործի նկատմամբ, հեռացումն է լենինիզմից։

(Ստալին. «Բոլշևիկ» № 3, յեր. 30)

XIV ԿՈՒՍԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՑԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻՑ

Անհրաժեշտ է հիշել ընկ. Լենինի կոոպերացիայի մասին գրած վերջին հոդվածում այն ծրագրային հայտարարությունը, որ ներկա պայմանների համար առանձնահատուկ նշանակություն ունի և ասում է. «Իսկապես, պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին, այս պրոլետարիատի դաշինքը միլիոնավոր մանր ու մանրագույն գյուղացիների հետ, պրոլետարիատի դեկավարման ապահովությունը գյուղացության նկատմամբ և այլն—այս ամենը մինթե բոլորը չեն, ինչ որ հարկավոր է, որպեսզի կոոպերացիայից, հենց միայն կոոպերացիայից, որը մենք առաջ բանի տեղ չեյինք դնում, նրան չարչիական համարելով, և որը որոշ կողմից իրավունք ունենք արհամարելու և այժմ՝ ՆԵՊ-ի ժամանակ, միթե այս բոլորը չե այն, որ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար։ Սա դեռ ևս սոցիալիստական հասարակարգի կառուցումն չե, բայց սա այն ամենն է, ինչ անհրաժեշտ ու բավական է այդ կառուցման համար...։ Յես պատրաստ եմ ասելու, որ մեզ համար ծանրության կենտրոնը տեղափոխվում է կուլտուրական աշխատանքի վրա, յեթե չլինեին միջազգային հարաբերությունները, չլիներ միջազգային մասշտաբով մեր դիրքը պահելու համար կռվելու անհրաժեշտությունը...»։

Սրանից հետևում է, որ միջազգային հեղափոխության հիմնական պատվանդանը հանդիսացող բանվորական դիկտատուրայի յերկիրը պետք է իր վրա նայի, որպես նրա հզորագույն լծակի ու նեցուկի. մյուս կողմից այդ յերկրում, պրոլետարիատի տիրող կուսակցությունը պիտի ամեն ջանք գործ դնի սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու համար, համոզված լինելով, որ այդ շինարարությունը կարող է լինի և հաստատապես լինելու յե հաղթական, յեթե հաջողվի յերկիրը պաշտպանել հին կարգերի վերականգնման ամեն տեսակ փորձերից։ Ուրիշ խոսքով, ՌԿԿ թե յերկրի ներսում գյուղացության նկատմամբ և թե միջազգային հարաբերությունների ասպարիզում իր տարած ճիշտ քաղաքականությամբ կհաղթահարի բոլոր այն դժվարությունները, որոնք բղխում են հասկանալի հեղափոխության թափի հապաղումից։

(ՌԿԿ (բ.) XIV կոնֆերենցիայի սղագիր հաշվետվության ռուսերեն բնագրի յեր. 312—313)

XIV ԿՈՒՍԱՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻՑ

Տնտեսական շինարարության ասպարիզում համագումարը յելակետ ունի այն, որ մեր յերկիրը՝ պրոլետարիատի դիկտատուրայի յերկիրը, ունի «այն բոլորը, որ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար» (Լենին)։ Համագումարը գտնում է, որ ՄՍՀՄ-ության մեջ սոցիալիստական շինարարության հաղթանակի համար մղվող պայքարը մեր կուսակցության հիմնական խնդիրն է։ Հաշվետու տարին լիովին ապացուցեց այս տեսակետների ճշտությունը։ Մինչև որ պրոլետարիատն ուրիշ յերկիրներում իշխանությունն իր ձեռք կառնի, սակայն նրա անպայման ժամանակությամբ և առանց ոտարերկրյա կապիտալի այսպես կոչված «աջակցության», մեր յերկրում մանավոր կապիտալի դեմ անընդհատ կռիվ մղելով՝ բանվոր դասակարգը գյուղացության հիմնական մասսայի հետ միացած՝ արդեն հասել է առաջին լուրջ հաջողություններին սոցիալիստական շինարարության ասպարիզում։

Անցած տարին բնորոշվեց վողջ ժողովրդական տնտեսության բուռն աճմամբ. նա մոտեցավ նախապատերազմյան մա-

կարդակին. ահեցին նրա առանձին ճյուղերը՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը, արտաքին առևտուրը, ներքին առևտուրը, բանկերը և վարկային սիստեմը, պետական ֆինանսները և այլն։ Ժողովրդական տնտեսության ներսում, նրա բաղկացուցիչ մասերի բազմազանությամբ հանդերձ (բնական-գյուղացական տնտեսություն, մանր ապրանքային արտադրություն, մասնատիրական կապիտալիզմ, պետական կապիտալիզմ) խիստ կերպով բարձրանում է սոցիալիստական արդյունաբերության, պետական և կոոպերատիվ առևտրի, ազգայնացրած վարկի և պրոլետարական պետության այլ իշխող բարձունքների տեսակարար կշիռը։

Այսպիսով ակներև է պրոլետարիատի տնտեսական հարձակումը նոր տնտեսական քաղաքականության հիմունքներով և Ա. Ս. Հ. Մ-ության եկոնոմիկայի առաջխաղացումը դեպի սոցիալիզմ։ Պետական սոցիալիստական արդյունաբերությունը հետզհետե ավելի յե դառնում ժողովրդական տնտեսության այն ավանգարդը, որն իր յետևից է տանում ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

ՀԱՐՑԵՐ 3. ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի՞նչ է «ռազմական կոմմունիզմը»։

2. Ինչո՞ւ պարենի ժանսատրումը պարենատուրքով փոխարինվեց։

3. Ինչո՞ւ պիտի զարգացնել գյուղացական տնտեսության ապրանքայնությունը։

4. Ի՞նչ փոփոխություններ առաջացան արդյունաբերական քաղաքականության մեջ՝ ՆԵՊ-ը մտցնելուց հետո։

5. Ինչի՞ վրա յե հենվում բանվորական պետությունը ՆԵՊ-ի կապիտալիստական տարրերի հետ պայքարելիս։

6. Ի՞նչ ուղիով և ո՞ւր պետք է գնա գյուղացական տնտեսության զարգացումը ՆԵՊ-ի ժամանակ։

7. Ի՞նչ է ՆԵՊ-ը։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ III ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պարզեցեք (ոգտագործելով տուրքերի ցուցակները) ձեր գյուղում գյուղացիք ինչքա՞ն են վճարում միասնական գյուղատնտեսական տուրքի հաշվով, որքա՞ն են իրենք գործածում և բերքի ո՞ր մասն են գործադրում իրենց տնտեսության բարելավման ու ընդարձակման վրա։

2. Պարզեցեք՝ ինչքա՞ն ապրանք է ստանում ձեր գյուղը քաղաքից՝ տեղական կոոպերացիայի միջոցով, գյուղի մանավոր առևտրականների միջոցով և ինչքա՞ն՝ (մոտավորապես) գյուղացիների պատահականորեն քաղաք գնալու ժամանակ։ Միաժամանակ պարզեցեք, թե ձեր գյուղն ինչքա՞ն պրոդուկտներ է ծախում քաղաքին կոոպերացիայի միջոցով և մանավոր առևտրականների միջոցով)։ Կազմեցեք ձեր ստացած արդյունքների դիագրամմանն։

3. Յեթե ձեր գյուղում կոոպերատիվ կա, հետազոտեցե՛ք նրա աշխատանքը, յեթե՝ չկա, համառոտ, մի յերեսանոց զեկուցում գրեցե՛ք, թե՝ ինչո՞ւ ձեր գյուղի գյուղացիները մինչև այժմ կոոպերատիվ չեն կազմակերպել։

ԶՐՈՒՅՑ ՉՈՐՐՈՐԴ

ՊԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ Խ. Ս. Հ. Մ. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախորդ զրույցում պարզեցինք, որ ՆԵՊ-ն այնպիսի տնտեսական քաղաքականություն է, որի միջոցով բանվոր դասակարգը, պահպանելով և ամրապնդելով իր դաշինքը չքավոր ու միջակ գյուղացության հետ, նրանց հետ միասին սոցիալիստական տնտեսություն է կառուցում մեր երկրում։ Սոցիալիզմի շինարարությունն ընթանում է կապիտալիզմի դեմ անդադար մղվող կռվի մեջ։ Հանուն սոցիալիստական տնտեսության կապիտալիզմի դեմ տարվող այս կռվում բանվոր դասակարգի գլխավոր հենարանն է հանդիսանում խոշոր արդյունաբերությունը։

Պրոլետարիատը հանձին խորհրդային պետության պետարդյունաբերության տերն է

Մեր երկրում խոշոր արդյունաբերությունը բանվոր դասակարգին է պատկանում։ Սակայն, այս չի նշանակում, թե «Կարմիր Պուտիլովեց» գործարանը, «Դվինա» ֆաբրիկան, և այլն, այն բանվորներին են պատկանում, որոնք հենց այդ գործարաններում են աշխատում։ Արդյունաբերությունը պատկանում է խորհրդային պետությանը՝ Խ. Ս. Հ. Մ-թյան։ Բանվոր դասակարգն է իր ամբողջությամբ արդյունաբերությանը տիրապետում խորհրդային պետության միջոցով։ Դրա համար էլ արդյունաբերությունը մեր երկրում պետական արդյունաբերություն (պետարդյունաբերություն) է կոչվում։

Հենց այդ խորհրդային պետության միջոցով էլ բանվոր դասակարգը կառավարում է արդյունաբերությունը։ Արդյունաբերությունը կառավարել՝ նշանակում է տնտեսությունը կառավարել։ Որևիցե ամեն մի գյուղացի կառավարում է իր տնտեսությունը։ Նա հող է տանում, որ հողն իր ժամանակին հերկվի, որ նա պարարտացվի, որ բավարար չափով սերմ ուղեղա ցանելու համար, որ հունձն ու բերքահավաքը ժամանակին կատարվեն, որ՝ գործի ժամանակը գալիս, ինվենտարը (գութան, ցաքան և այլն) սարք ու պատրաստ լինեն, որ ձիերը լավ կերակրված լենեն ու գութանը լավ քաշեն, և այլն։

Դրանից այս բոլորը հասարակ բան են թվում, բայց ամեն մի գյուղացի գիտե, որ նրա փոքրիկ տնտեսությունը կառավարելն էլ հեշտ չի։ Պետք է աչքաթող չանել, կարողանալ, տակից դուրս գալ, թերը տնտեսության մեջ վորևե բան պակասում է. պետք է նախորոք հաշիվ տեսնել՝ կարող է տնտեսությունը վորևե վերափոխման (перестроика) համար անելիք ծախսերին դիմանալ, թե՝ վոչ, և այլն։ Յեվ այս բոլորը՝ մի փոքրիկ տնտեսության մեջ, վորտեղ ամեն ինչ կարելի է մի հայացքով տեսնել։ Շատ ավելի բարդ ու դժվար է, իհարկե, մեծ գործարան կառավարելը։ Ե՛լ ավելի դժվար ու բարդ բան է պետության բոլոր արդյունաբերությունն ամբողջովին կառավարելը։ Մենք տեսանք արդեն, (տես ա. զրույցը) պետարդյունաբերությունը ցրված է մեր երկրի ամբողջ ահագին տարածության վրա։ Նույնիսկ հիմնական արդյունաբերությունը տարածվել է չորս ռայոններում, իսկ այդ ռայոնները հարյուրավոր վերստեր հեռու չեն մեկ մեկուց։

Հապա բանվոր դասակարգն ինչպե՞ս կազմակերպեց արդյունաբերության կառավարումը։ Այնպես կազմակերպեց, որ պետությունն է կառավարում՝ թե՛ ամեն մի գործարան, առանձին վերցրած, և թե՛ բոլոր արդյունաբերությունն ամբողջովին, միասին վերցրած։ Ընդ սմին առանձին ֆաբրիկայի, առանձին գործարանի կառավարումն արդյունաբերության ընդհանուր կառավարման և չենթարկված։ Յեթե առանձին արդյունաբերական ձեռնարկություններն ընդհանուր կառավարման չենթարկվեին, կստացվեր մի մասնատված (раздроблен-

ное) տնտեսություն։ Իսկ մասնատված տնտեսությունն, ինչպես արդեն գիտենք, սոցիալիստական չէ։

Արդյունաբերության հավաքետական կառավարման գլուխ է կանգնած Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը (ԺՏԳԽ), որն իր որգաններն ունի տեղերում։ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին յենթակա յեն՝ արհեստները և սինդիկատները. այսինքն՝ առանձին ֆաբրիկաների և գործարանների հավասարումներն ըստ արտադրության։ Նրան են յենթարկվում նույնպես այն խոշորագույն ֆաբրիկաներն ու գործարանները, որոնք տրեստները չեն մտած, բայց համամիութենական նշանակություն ունեն։ Ժողովրդական տնտեսության Գերագույն Խորհրդի տեղական որգաններին յենթակա յեն այն տրեստներն ու առանձին ձեռնարկությունները, որոնք տեղական նշանակություն ունեն։ Բոլոր արհեստների գլուխն են անցած վարչություններ, իսկ առանձին ֆաբրիկաների և գավոդների գլուխը՝ դիրեկտորները (վերատեսուչները), որոնք գործում են համաձայն արդյունաբերության ծավալման պլանների։ Այդ պլաններն էլ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը և նրա տեղական որգաններն են մշակում, իսկ ստուգվում, ժողովրդական տնտեսության ընդհանուր պլանին համաձայնեցվում և հաստատվում են խորհրդային պետության պլանային հատուկ որգանների (տեղական, նահանգային, յերկրային պլանային հանձնաժողովներ, առանձին հանրապետությունների Պետպլաններ, Ս. Ս. Հ. Մ-թյան Պետպլան, Ս. Ս. Հ. Մ-թյան Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդ) կողմից։ Այսպես, մեր բոլոր պետական արդյունաբերությունը Ս. Ս. Հ. Մ-թյան ամբողջ տնտեսություններում համախմբված է մի ամբողջության մեջ և գործում է մի ընդհանուր պլանով։

Պետարդյունաբերությունը հետեվողական սոցիալիստական տիպի մի արդյունաբերություն է

Մեր պետական արդյունաբերությունն արմատապես տարբերվում է կապիտալիստական յերկիրների արդյունաբերությունից։ Կապիտալիստական արտադրության մեջ կան տնտեսատեր և բանվոր։ Տիրոջը

պատկանում են՝ ֆաբրիկան իր բոլոր մեքենաներով, հում նյութը և այլն։ Բանվորը վոչինչ չունի, բացի իր բանվորական ուժը։ Կապիտալիստ-տնտեսատերը բանվորից գնում է նրա բանվորական ուժը և աշխատանքի դնում։ Այն ամենը, ինչ վոր բանվորն արտադրում է ֆաբրիկայում, պատկանում է կապիտալիստ-տիրոջը։ Կապիտալիստը ֆաբրիկա յե պահում իր վաստակի խաթեր։ Վաստակը նա ստանում է բանվորին շահագործելուց։ Բանն այսպես է։ Բանվորը ֆաբրիկայում մի որում կարող է արտադրել յերկու ռուբլու իր, այն ինչ կապիտալիստը նրան աշխատանքի յե վարձում մի ռուբլով։ Մի ռուբլին բանվորն ստանում է, իսկ մյուս ռուբլին մնում է կապիտալիստին վորպես վաստակ։ Կապիտալիստն այս վաստակի մի մասն իր վրա յե ծախսում, այսինքն՝ նա ապրում է ուրիշի աշխատանքի հաշվին. մի մասն էլ ծախսում է արտադրության ընդարձակման վրա։ Իսկ ինչ է նշանակում, թե կապիտալիստն ընդարձակում է արտադրությունը։ Այս նշանակում է՝ նոր ֆաբրիկա յե շինում, կամ հնի մեջ մեքենաների թիվը և ավելացնում, ավելի մեծ թվով բանվորներ է վարձում, այսինքն՝ ավելի մեծ վաստակ է ստանում, նորից արտադրությունն ընդարձակում է և այլն։ Ընդարձակելով արտադրությունը, կապիտալիստը շարունակ ավելի ու ավելի մեծ քանակությամբ բանվորներ է շահագործում։ *Կապիտալիստական արտադրության ընդարձակումը՝ շահագործման ընդարձակումն է։*

Միանգամայն այլ կերպ է դրված գործը մեր պետական արդյունաբերության մեջ։ Պետարդյունաբերության մեջ տեր և բանվոր չկա։ Պետարդյունաբերության տերն *ինքը՝ բանվոր դասակարգն է։* Պետարդյունաբերության մեջ տեր ու բանվոր՝ միևնույն անձն է։ Հանձինս խորհրդային պետության, բանվոր դասակարգին են պատկանում բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները։ Բանվոր դասակարգին է պատկանում նաև իր բանվորական ուժը։ Իսկ ում է բանվորին ընդունում յուրաքանչյուր առանձին ֆաբրիկայում և ում է նրա աշխատավարձը վճարում։ Պետությունն է ընդունում իր ներկայացուցիչների՝ ֆաբրիկանների վերատեսուչների (директор) միջոցով։ Պետու-

թյունն է աշխատավարձը սահմանում արհեստակցական միություններին հետ միասին։ Այս կարգը նրա համար է, որ աշխատավարձի չափը համապատասխանի արտադրության վիճակին և ամբողջ բանվոր դասակարգի շահերին։ Միմ կարելի չէ աշխատավարձը սահմանել այնպես, որ մի տարուց հետո ֆաբրիկայում վոչինչ չմնա. կարելի չէ և սահմանել այնպես, որ արտադրությունը տարեցտարի ընդարձակվի։ Պետությունն այնպես է սահմանում աշխատավարձը, որ արդյունաբերությունը կարողանա աճել, ընդարձակվել և ամրապնդվել։ Արդյունաբերության ընդարձակման մեջ ինքը՝ բանվոր դասակարգն ամենից ավելի չէ շահագրգռված։ Մենք արդեն տեսանք, որ խոշոր արդյունաբերությունը նրա դիկտատուրայի հենակետն է հանդիսանում։ Սրա համար էլ բանվոր դասակարգն իր ամբողջությամբ (կազմակերպված՝ վորպես պետական իշխանություն) ամեն մի բանվորին աշխատավարձ է սահմանում այն հաշվով, որ արդյունաբերության աճումն ապահովված լինի։

Կապիտալիստական արդյունաբերությունն ընդարձակվում է ի հաշիվ կապիտալիստի ստացած վաստակի։ Իսկ ինչի՞ հաշվին է ընդարձակվում մեր պետարդյունաբերությունը։ Սա լել նուլնպես արդյունաբերության մեջ կուտակված վաստակի։ Բայց, կապիտալիստի վաստակն, ինչպես գիտենք, ստորաբաժանվում է յերկու գլխավոր մասի։ Մի մասը գնում է իրեն՝ կապիտալիստի ու նրա ընտանիքի վրա, սրանց հարստացման վրա. մյուս մասը՝ արտադրության ընդարձակման վրա։ Արտադրությունն էլ կապիտալիստներն ընդարձակում են դարձյալ նրա համար, վորպեսզի հարստանան։ Մեր պետարդյունաբերության վաստակն այլ կերպ է բաշխվում։ Նա բաժանվում է չորս մասի։ Մի մասը գնում է վորպես պետական դանձարանի յեկամուտ։ Պետությունն այդ մասը ծախսում է՝ ժողովրդական լուսավորության վրա, հիվանդանոցներ պահելու, կարմիր բանակի վրա, գյուղում ագրոնոմիական պունկտեր պահելու, գյուղատնտեսական փորձակայաններ կազմակերպելու և այլն։ Վաստակի այս մասով, ինչպես տեսնում ենք, արդյունաբերությունն ոգնում է նաև գյուղատնտեսությանը։ Մյուս մասը գնում է հենց իրեն՝ ձեռնարկության ընդարձակման վրա. մեքենաներ գնելու, գործարանային նոր շենքախմբեր (корпус) շինելու, սրանց սարքավորելու, և այլն։ Յերրորդ մասը գնում է՝ այսպես կոչված պահեստային ֆոնդին (резервный фонд). սա պահեստի մի ֆոնդ է՝ նոր շինարարության համար և ամեն տեսակ անակնկալ դեպքերի համար, վորոնք կարող են պատահել (անբերրություն և այլն)։ Վերջապես, չորրորդ մասը գնում է հենց իրենց՝ բանվորների կենցաղի բարելավման վրա. բանվորների համար բնակարաններ շինելու, բանվորների յերեխաների համար մսուրներ շինելու, բանվորական ակումբների համար և այլն։

Այսպիսով, պետարդյունաբերությունից ստացված վաստակը վոչ թե մասնավոր գրպաններն է ընկնում, այլ գործադրվում է՝ մասամբ պետական կարիքների վրա, այսինքն՝ բանվորների և գյուղացիների կարիքների վրա, մասամբ էլ՝ արդյունաբերության ընդարձակման վրա, վորը հենց նույն բանվորների ու գյուղացիների կարիքներին է ծառայում։

Արդյունաբերության աճումը կապիտալիստական յերկիրներում շահագործման աճումն է նշանակում։ Կապիտալիստական նոր ֆաբրիկայի հանդես գալը շահագործման յենթարկվող բանվորների թվի ավելացումն է նշանակում, կապիտալիստների հարստության և տնտեսական ուժի աճումն է նշանակում։

Մեր պետարդյունաբերության աճումը, յուրաքանչյուր նոր պետական ֆաբրիկայի յերևան գալը ԽՍՀՄ մեջ նշանակում է, ընդհակառակը, աղքատության և քայքայման նվազումը մեր յերկրում, նշանակում է՝ մի նոր քայլ դեպի սոցիալիզմ։ Դիցուք, ավելացել են մի քանի նոր պետական ֆաբրիկաներ։ Պետության գրպանն ավելի միջոցներ կմտնեն, պետությունը կարող կլինի ավելի միջոցներ բաց թողնել դպրոցների, հիվանդանոցների համար, գյուղատնտեսությունը բարելավելու համար, և այլն։ Պետական նոր ձեռնարկությունները ավելացան, այս նշանակում է՝ շատացան այն բանվորների թի-

վը, վորոնք աշխատում են առանց անտեսատեր-կապիտալիստի։

Այս բոլորը կատարվում է ոչ այնպես, ինչպես՝ կապիտալիստական յերկիրներում, վորովհետև ինքը՝ պետարդյունաբերությունը կապիտալիստական չե, այլ սոցիալիստական։ Նրա մեջ չկան բանվորներին շահագործող կապիտալիստներ։ Պետական ձեռնարկությունների մեջ չկան յերկու թշնամի դասակարգեր՝ շահագործողներ և շահագործվողներ։ Նշանակում է, այդ ձեռնարկությունները բոլորովին ուրիշ բնույթի, կամ ինչպես ասում են, ուրիշ տիպի յեն, քան կապիտալիստական յերկրների արդյունաբերական ձեռնարկությունները։ «Կա, ինչպես ասում է ընկ. Ստալինը, արտադրության յերկու տիպ. կապիտալիստական տիպ, սրա թվումն է նաև պետական-կապիտալիստականը, վորտեղ արտադրությունը գործում է կապիտալիստի վաստակի համար. կա և ուրիշ տիպ՝ սոցիալիստականը, վորտեղ շահագործում չկա, վորտեղ արտադրության միջոցները բանվոր դասակարգին են պատկանում, և վորտեղ ձեռնարկությունը գործում է ոչ թե ոտար դասակարգի վաստակի համար, այլ ամբողջ բանվորության համար, արտադրությունն ընդարձակելու համար։ Ահա թե ինչու Լենինն էլ մեր պետական արդյունաբերական ձեռնարկությունները հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ էր անվանում։ Ահա թե ինչու մեր պետական արդյունաբերության ընդարձակումն ու աճումը մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական մասի մեծացումն ու աճումն է հանդիսանում։

Պետարդյունաբերության աճման ամենամեծ ազդակը և առեղծվում նաև գյուղատնտեսության աճման համար, նրա զարգացման համար՝ դեպի սոցիալիզմ։ Գյուղատնտեսությունը միայն այն ժամանակ կարող է աճել ու զարգանալ, յերբ կաճի նրա արդյունքների պահանջը։ Ո՞վ է գնում հաց, բանջարեղեն, յուղ և այլ գյուղատնտեսական արդյունքներ։ Ակներև է, վոր նրանք, ով այդ արդյունքները չի արտադրում։ Գյուղացին այդ արդյունքները չի գնում, այլ՝ բանվորն է գնում։ Քանի շատ լինեն բանվորները, այնքան էլ անհրաժեշտ պահանջը շատ կլինի։ Ինքն՝ արդյունաբերությունը պահանջ ունի

կանեփի, վուշի, ծխախոտի, ճակնդեղի, գետնախնձորի և այլն։ Այսպիսով, քանի շատ ֆաբրիկաներ ու գործարաններ են հանդես գալիս, քանի շատ բանվորներ են աշխատում նրանց մեջ, այնքան էլ ավելի պահանջ է ղգացվում գյուղատնտեսության արդյունքների։ Գյուղացուն ձեռնտու յե տնտեսությունն ընդարձակելն ու բարելավելը։ Վոչինչ չի մնա նրա շուկայի ընկած։ Սպառումը (сбыт) նրա համար ապահովված է։ Նա շարունակ ավելի ու ավելի կարտադրի շուկայի համար։

Իսկ մենք արդեն յերրորդ դրույցից գիտենք, թե ինչպես արտադրությունը շուկայի համար գյուղացուն՝ չքավորին ու միջակին դրդում է վաճառային (сбытовый) կոոպերատիվներ ստեղծել, իրեն արդյունքներն ավելի ձեռնտու գներով ծախելու և ապա մեքենաներ ձեռք բերելու համար։ Մեքենային ընկերությունները կազմակերպել՝ ավելի լավ և ավելի շատ արտադրելու համար։ Արտադրությունը շուկայի համար քայլ առ քայլ կոոպերացիայի մեջ է քաշում միջակին ու չքավորին, իսկ կոոպերացիայի միջոցով սրանց ավելի ու ավելի յե կապում պետական, սոցիալիստական արդյունաբերության հետ։ Դրա հետ միասին, այդ արդյունաբերության արտադրած մեքենաների գործածումը, ինչպես գիտենք դարձյալ յերրորդ դրույցից, մանր գյուղացական տնտեսությունները հետզհետե միացյալ, խոշոր, կոոպերատիվ տնտեսությունների յե վերածում։ Իսկ այսպիսի տնտեսությունները ավելի ու ավելի կմոտենան քաղաքային տիպի տնտեսություններին։ Կվերանա քաղաքի ու գյուղի մեջ յեղած զանազանությունը, և, հետևաբար, նաև տարբերությունը բանվորի ու գյուղացու միջև։ Յերբ այդ տարբերությունը կանհետանա, այն ժամանակ մեզ մոտ միանական սոցիալիստական տնտեսություն կլինի։

Այսպիսով, յեթե կապիտալիստական արդյունաբերության աճումը շահագործման աճումն է նշանակում, ապա պետարդյունաբերության աճումը նշանակում է՝ աճումն այն ուժի, վորն ամբողջ տնտեսության զարգացումն ուղղում է դեպի սոցիալիզմ։

Անհրաժեշտ է, որ արդյունաբերությունը գյուղատնտեսության զարգացման համապատասխան զարգանա

Պետարդյունաբերության աճումը և ընդարձակումը մի խիստ կարևոր հանգամանքի չի չենթակա։ Մեր արդյունաբերության արտադրած ապրանքներն արտահանման են արտահանվում խիստ աննշան քանակությամբ։ Այդ ապրանքների հիմնական մասնան ծախսվում է մեր չերկրի ներսում։ Իսկ ով է մեր չերկրում արդյունաբերական ապրանքների գլխավոր գնորդը հանդիսանում։ Գյուղացությունը։ Մեր չերկրում գյուղացի ազգաբնակությունը թվով գերակշիռ է։ Հենց սա չել արդյունաբերական ապրանքների գլխավոր գնորդն է հանդիսանում։ Սրա համար էլ մեր արդյունաբերությունն իր աճման մեջ պետք է համակերպվի գյուղացու գնողունակությանը։ Ինչ բան է գնողունակությունը։ Գյուղացին և առհասարակ ամեն մի քաղաքացի, գնելու ընդունակ է ամեն ժամանակ, չերբ նա փող ունի կամ փող ստանալու հնարավորություն։ Քանի շատ է ծախում գյուղացին ինքը, այնքան ավելի նա գնել է կարողանում ուրիշներից։ Քաղաքի բանվորներին պարենամթերք և արդյունաբերությանը հում նյութ ծախելով՝ գյուղացին ստացած փողով արդյունաբերական ապրանքներ է գնում։ Հենց այս ապրանքաշրջանառության մեջ է կայանում արդյունաբերության շաղկապը գյուղատնտեսության հետ։ Վորպեսզի այդ շաղկապը չքակավի, չխանգարվի և չթուլանա, անհրաժեշտ են չերկու գլխավոր պայմաններ. առաջին՝ վորպեսզի գյուղատնտեսությունը (գյուղը) արտադրի բավարար քանակի պարեն և հում նյութ արդյունաբերության համար (քաղաքի համար). և չերկրորդ՝ վորպեսզի արդյունաբերությունը բավարար քանակի ապրանքներ արտադրի գյուղացու համար (գյուղի համար)։ Բացի այս չերկու գլխավոր պայմաններից, անհրաժեշտ է նույնպես, վոր՝ թե գյուղատնտեսության արդյունքները, վորոնք քաղաք են գնում, թե արդյունաբերության արդյունքները, վորոնք գյուղ են գնում, լավ վորակի լինեն։ Ինչ զոռումն կլինի քաղաքի և գյուղի մեջ, չեթե գյուղը քաղաքին փչացած յուղ ծախի և ստացած փողով փտած կաշվից կոշիկներ գնի։ Վատ վորակի ապրանքների վրա զոռումն հաստատել չի կարելի։ Արդյունաբերության և գյուղատնտեսության ապրանքները լավ վորակի պետք է լինեն։

Չերկրորդ պայմանն էլ գներն են։ Չեթե գյուղատնտեսական արդյունքների գները բարձր են, իսկ արդյունաբերականներինը՝ ցած, կամ ընդհակառակը,—շաղկապը կխզվի։ Պարզության համար ասենք թե՝ քաղաքային ամբողջ արդյունաբերությունը զուրս է բերել 100 միլիոն։ Այս 100 միլիոնը ծախելով, արդյունաբերությունը կարողացավ գնել գյուղում 500 փութ հացահատիկ. հետո հացահատիկի գները բարձրացան չերկու անգամ. արդյունաբերությունն այժմ կարող է գնել միայն 250 փութ, այսինքն առաջվանի կեսը։ Ինչ է նշանակում այս։ Այն, վոր արդյունաբերության գնողունակությունը պակասեց չերկու անգամ։ Նա այլևս չի կարող գնել այնքան, վորքան՝ առաջ։ Հացի մի մասը մնում է գյուղում չծախված։ Քաղաքին պարենը չի հերիքում, իսկ արդյունաբերության էլ ձեռնտու չի լինի իր ապրանքները գյուղում վաճառելը։ Սա կարող է իր ապրանքները նույնիսկ արտասահման ուղարկել, չեթե այնտեղ պարենամթերքն ավելի էժան է։ Չեվ ընդհակառակը, արդյունաբերական ապրանքների գների կրկնապատիկ բարձրացումը, նույնպես կրկնապատիկ իջեցնում է գյուղի գնողունակությունը։ Գյուղը քաղաքի ապրանքների կարիքն զգալով հանդերձ, չի կարող գնել այն։ Ապրանքները չեն ծախվի։ Նրանց պահպանման համար, այն տեղի համար, վորտեղ նրանք պահվում են, և այլն, արդյունաբերությունը պիտի վճարի, այսինքն՝ վնասներ կրի։ Սրանից հետևում է, վոր թե արդյունաբերության ապրանքների և թե գյուղատնտեսության ապրանքների գները պետք է հարմարեցվեն միմյանց։ Չեթե այս չկա, շաղկապը թուլանում է։

Այժմ տեսնենք, թե մեր չերկրում արդյունաբերությունն ինչպես է սպասավորում գյուղատնտեսությանը։ Քաղաքը գյուղին բավարար քանակով ապրանք է մատակարարում, ինչ վորակի ապրանքներ և ինչ գներով է մատակարարում։

Սկսենք գներից։ Համեմատենք այժմյան գները մինչպա-

տերազմյան գների հետ։ Ասենք թե գյուղատնտեսությունը, պատերազմից առաջ 100 ռուբլու զանազան տեսակի արդյունքներ ծախելով, կարող եր այդ 100 ռուբլով 100 գերանդի գնել։ Փոխենք այժմյան գները նախապատերազմյաններով և տեսնենք, թե հիմա ինչպես է դրությունը։ 1922—23 թվին նույն նախապատերազմյան 100 ռուբլով գյուղացիք կարող էլին գնել վոչ թե 100, այլ՝ 32 գերանդի։ 1923—24 թվին արդեն՝ 44 գերանդի, իսկ անցյալ՝ 1924—25 թվին ել ավելին՝ 56 գերանդի։ Տարեցտարի, արդյունաբերության վերականգնման և աճման հետ զուգընթաց, արդյունաբերական ապրանքների գներն իջնում են։ Նրանք դեռ ևս (ապրանքների բոլոր տեսակների նկատմամբ) չեն իջել մինչև նախապատերազմյան գների մակարդակը։ Ուստի, արդյունաբերության առջև դրված է գների հետագա իջեցման խնդիրը։ Ընդ սմին, խիստ կարևոր է, վոր թե առևտրական կազմակերպություններն ու թե կոոպերացիան մեծ հավելումներ չանեն ապրանքների գների վրա, քչացնեն վերադիր ծախսերը, միջոցները խնայեն։ Այս բոլորը կնպաստեն գների իջեցման։

Այժմ ապրանքների վորակի մասին։ Արդյունաբերական ապրանքների վորակը տարեցտարի լավանում է։ Շատ արդյունաբերական ձեռնարկություններ իրենց ներկայացուցիչներն են ուղարկում այն տեղերը, վորտեղ իրենց ապրանքներն են գնում, վորպեսզի ստուգեն, թե ապրանքների վորակն ինչպես է։ Գյուղատնտեսական մեքենաշինական գործարաններն իրենց տեխնիկներն են ուղարկում գյուղերը՝ ստուգելու համար, թե լավ են աշխատում, արդյոք, իրենց բաց թողած հնձիչները, կասիչները և այլն։ Նկատած բոլոր թերությունները նոր մեքենաներ, ապրանքների նոր պաշարներ բաց թողնելիս ուղղվում են։ Ժ. Տ. Գ. Խ-ին կից վորակի հատուկ հանձնաժողով է կազմված, վորը հետևում է արդյունաբերության բաց թողած ապրանքների վորակի վրա, հուպ է տալիս այդ կողմից յեռ ճնացած ձեռնարկություններին, քննում է ամեն տեսակ բողոքներ՝ ապրանքների վատ վորակի վերաբերյալ։ Արդյունաբերության առաջ դրված է՝ բարձր վորակի ապրանքների նմուշներ (ստանդարտներ) մշակելու, ապա և այդ նմուշներով ապրանքների մասսայական արտադրության խնդիրները։

Վերջապես, քաղաքից գյուղ գնացող ապրանքների քանակի մասին։ Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի արած հաշիվների համաձայն, ներկա 1926 թվին*) գյուղն արդյունաբերական ապրանքներ ավելի կստանա, քան անցյալ տարիները, բայց, այնուամենայնիվ առայժմ ավելի քիչ, քան մինչպատերազմյան ժամանակը։

Յեթե մենք ընդունենք, վոր մինչպատերազմյան ժամանակ գյուղն արդյունաբերությունից ստանում եր ամեն տեսակի ապրանքներ 100%, ապա այս տարի (1926 թ.) նա կստանա.

Բամբակեղեն գործվածքներ	67%	Մինչպատերազմյան 100%-ի փոխարեն։
Շաքար . . .	75%	
Կաշի . . .	100%	
Աղ . . .	96%	
Նավթ (կերոսին) . .	75%	

Այս աղյուսակից մենք տեսնում ենք, վոր արդյունաբերությունը դեռ այս տարի յել չի բավարարում գյուղի պահանջներն արդյունաբերական ապրանքների նկատմամբ. ավելացրեք սրան և այն, վոր պահանջներն ել շատացել են։

Ապրանքային սովը Այս տարի առանձնապես ուժեղ է զգացվում արդյունաբերական ապրանքների պակասը։ Ինչով է բացատրվում այս։ Ջե՞ վոր արդյունաբերությունը շարունակ աճում ու ընդարձակվում է։

1922/23 թ. արդյունաբ. ավելացրել է ապր. քանակը 30%-ով
1923/24 » » » » » 45%-ով
1924/25 » » » » » 64%-ով։

Այս թվերը խոսում են արդյունաբերության արագ աճման մասին։ Հապա ինչու յե արդյունաբերական ապրանքների սուր պակասություն զգացվում։ Ինչու մեր յերկիրը իսկական ապրանքային սով է ապրում։

*) Այս գիրքը ռուսերեն հրատարակվել է 1926 թվին։

Թարգմ.

Ամենահասարակ բացատրությունն այս կլիներ. ապրանքային սով գոյություն ունի այն պատճառով, որ արդյունաբերական ապրանքների պահանջն զգալի չափով ավելի չէ, քան այդ ապրանքների քանակը։ Բայց այս վատ բացատրություն է։ Բավական չէ գիտենալ, թե պահանջը շատացավ, պետք է բացատրել և պատճառները. ինչու՞ պահանջը շատացավ, և ոչ քչացավ, կամ նույն չափով մնաց։

Ապրանքային սովի պատճառները

Աշխատենք այս հարցը պարզել։ Մինչ պատերազմն արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն անհամաչափ էին զարգացած։ Գյուղատնտեսությունն ավելի ուժեղ էր զարգացած, քան արդյունաբերությունը։ Հետևաբար, պատերազմից առաջ արդյունաբերական ապրանքները չպիտի բավարարեին։ Բայց մենք գիտենք, որ մինչպատերազմյան արդյունաբերությունը բավարարում էր գյուղատնտեսության պահանջն արդյունաբերական ապրանքների նկատմամբ։ Իսկ ինչպե՞ս կարող էր նվազ զարգացած արդյունաբերությունը բավարարել ավելի զարգացած գյուղատնտեսության պահանջները։ Այդ այսպես էր լինում։ Արդյունաբերության գլխավոր գնորդին՝ գյուղացուն անխնա կեղեքում էին կապիտալիստներն ու կալվածատերերը։ Գյուղացիությունը պատերազմից առաջ կալվածատերերին հողի կապալավարձ էր տալիս տարեկան մոտ 500 միլիոն ռուբլի. գյուղացիների անվան պարտքը գյուղացական բանկում հաշվվում էր 838 միլիոն ռուբլի. մասնավոր բանկերում՝ 260 միլիոն ռուբլի։ Այս պարտքերը պետք էր տարեկան մաս-մաս հանգցնել և տոկոսներ վճարել։ Սրան պիտի ավելացնել հարկերը և հարկերի, զեմսկի տուրքերի չվճարված մնացորդները և այլն։ Եթե հաշվելու լինենք այն բոլորը, ինչ որ գյուղացիները պիտի վճարեին տարեկան, ապա՝ կստացվի մի միլիարդ 400 միլիոն չերվոն ռուբլի։ Այդ հսկայական փողերը գյուղից հոսում էին դեպի գանձարան, դեպի կալվածատերերի և կապիտալիստների գրպանը։ Գյուղը չէր կարող այդ գումարները գործադրել արդյունաբերական ապրանքներ գնելու համար։ Նա գնում էր միայն նրանով, ինչ որ իրեն էր

մնում այդ թալանից հետո։ Կալվածատերերն ու կապիտալիստները եվ գյուղացու քսակից դուրս քաշած այդ փողերով արդյունաբերական ապրանքներ նույնպես չէին գնում, այլ նրանցով ձեռք էին բերում ճոխության առարկաներ, արտասահմանում քեֆեր սարքում։ Արդյունաբերությունը գյուղին ապրանքներ մատակարարելով այս թալանից հետո, կարող էր լիովին բավարարել վերջինիս։ Գյուղը պահանջում էր ավելի քիչ քանակի ապրանք, քան նա կարող կլիներ պահանջել, եթե նրան չթալանեին։

Բռնկեց պատերազմը. չեկավ փետրվարյան հեղափոխությունը, նրա յետևից Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ավլեց, սրբեց կապիտալիստներին ու կալվածատերերին յերկրից և հենց դրանով գյուղացիների վրից վերցրեց հսկայական վճարումները։ Թալանը դադրեց։ Այն փողերը, որ առաջ գյուղացու տնտեսությունից շահագործողների գրպանն էին հոսում, այժմ մնում էին գյուղացական տնտեսության մեջ։

Քաղաքացիական պատերազմը քայքայեց ժողովրդական տնտեսությունը, ըստ որում արդյունաբերությունն ավելի խիստ էր քայքայված, քան գյուղատնտեսությունը։ Թե որքան էր քայքայվել արդյունաբերությունը, այդ յերևում է հետևյալ թվերից. նախքան պատերազմն արդյունաբերությունը արտադրում էր ազգաբնակության մեն մի հոգուն միջին հաշվով 31 ռ. 79 կոպեկի ապրանք. իսկ 1920 թվին՝ 4 ռ. 63 կոպեկի, այսինքն՝ մոտավորապես 7 անգամ պակաս։ Մինչդեռ հացահատիկների և գետնախնձորի արտադրությունը կրճատվել էր միայն $^1/_3$ով ($35^0/_0$ով)։ Արդյունաբերության և գյուղատնտեսության միջև ապրանքաշրջանառություն չկար։

ՆԵՊ-ի մուտք գործելով և խաղաղ սոցիալիստական շինարարության անցնելով, սկսվեց ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը հեռահար դուրս եկին գալիս ավերի միջից։ Արդյունաբերությունը, որ ավելի ուժեղ էր քայքայված, քան գյուղատնտեսությունը, ավելի արագ էր վերականգնվում։

1921/22 թվ. հա կազմում եր 23%-ը մինչպատերազմյանի
1922/23 » » » » 31,7%-ը »
1923/24 » » » » 40,4%-ը »
1924/25 » » » » 71%-ը »

Հինգ տարվա ընթացքում արդյունաբերությունը հասավ մինչպատերազմյանի 71%-ին։ Այդ միջոցին գյուղատնտեսությունն ել բարձրացավ նույնպես մինչև մինչպատերազմյան մակարդակի 71%-ը։ Գյուղատնտեսությունն ավելի թույլ եր զարգանում, քան արդյունաբերությունը։ Ինչո՞ւ։ Մենք արդեն տեսանք, որ գյուղատնտեսական արդյունքների գլխավոր գնորդը արդյունաբերությունն է։ Արդյունաբերության թուլությունը կասեցնում եր գյուղատնտեսության աճումը։ Գյուղատնտեսության ավելցուկ արդյունքները գնող չկար։ Արդյունաբերության ծավալումը գյուղատնտեսության արդյունքների համար գնորդներ եր ստեղծում. ուստի սա յել կարող եր հետզհետե ծավալվել և աճել։

Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն աճեցին, հասան մինչպատերազմյան մակարդակի 71%-ին։ Յեթե գյուղում հին կարգերը լինեյին, լիներ գյուղացու այն թալանը, որ կատարում եյին կապիտալիստները, կալվածատերերը և նրանց կառավարությունը, այն ժամանակ արդյունաբերությունը կարող կլիներ գյուղատնտեսությանը բավարարել։ Սակայն, հեղափոխությունը գյուղի այդ թալանը վերացրեց։ Այն 1400 միլիոնը, որ գյուղացական տնտեսությունից աղանների գրպանն եր հոսում, ինում է գյուղում։ Յեվ գյուղն արդյունաբերության առաջ ուժեղացրած պահանջ է դնում, որպիսին արդյունաբերությունը ներկա րոպեյիս բավարարել չի կարող։ Ահա ապրանքային սովի պատճառը մեր յերկրում։

Պետք է կռվել ապրանքային սովի դեմ Ինչ կատացվեր, յեթե մենք չկարողանայինք կռվել ապրանքային սովի դեմ։ Կատացվեր մի այսպիսի պատկեր։ Ավելցուկի մի մասը, որ կուտակվում եր զարգացող գյուղատնտեսության մեջ, չեր կարող սպառում գտնել։ Արտադրությունը ձեռք կբերեր ավելցուկի միայն մի մասը, այն մասը,

որի համար նա ի վիճակի յե վճարելու։ Այս մասից բացի ավելցուկը (избыток) կմնար գյուղում։ Ասենք թե գյուղատնտեսությունն արդյունահանում է 1000 փութ արդյունք։ 200 փութը հարկավոր է գյուղացիներին ցանքի և իրենց անձնական գործածության համար, մնում է 800 փութ։ Սրանից՝ արդյունաբերությունն իր ապրանքների հետ կարող է փոխանակել 500 փ. մնացորդ 300 փութը գյուղացիներն ստիպված կլինեն շտեմարաններում պահել։ Հետևյալ տարին նույնը կկրկնվի։ Հետևանքն այն կլինի, որ գյուղական տնտեսությունը յետ-յետ կգնա, կկրճատի ցանքի տարածությունը։

Յերկրորդ, յեթե արդյունաբերությունը չաճեր և ապրանքային սովը շարունակվեր, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև կանոնավոր ապրանքաշրջանառության խանգարումն առաջ կգար։ Կխանգարվեր տնտեսական շաղկապը քաղաքի և գյուղի միջև, կվնասվեր սոցիալիստական շինարարությունը։

Վերջապես, յեթե ապրանքային սովի դեմ չկռվենք, արդյունաբերությունը կդադարի զարգանալ։ Ի՞նչ կատացվի սրա հետևանքով։ Կարող է առաջանալ և կառաջանա մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների աճումն։ Կապիտալիստը իր ձեռքը կառնի գյուղացական տնտեսություններն արդյունաբերական ապրանքներով բավարարելու գործը։ Սոցիալիստական արդյունաբերության նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ կսկսի նվազել, կսկսի աճել կապիտալիստական արդյունաբերության նշանակությունը։ Սոցիալիստական շինարարությունը կսկսի տեղի տալ կապիտալիզմի աճման առաջ։ Իսկ սրա մեջ մեծ վտանգ կա։ Այն ժամանակ մեր յերկիրը կվերադառնան նախկին տերերը։ Գյուղացական տնտեսության հետ սերտորեն միացած և կոոպերացիայի միջոցով գյուղացական տնտեսությունը դեպի սոցիալիզմը տանող սոցիալիստական արդյունաբերությունը՝ մեր գլխավոր ուժն է կապիտալիզմի դեմ։ Այս ուժի թուլացումը տանում է դեպի սոցիալիստական շինարարության պայթումը։

Ցերկրի ինդուստրացումը

XIV կուսակցական համագումարը տեսնում էր այդ բոլոր վոտանգները և համապատասխան վորոշում ընդունեց։ Կուսակցական համագումարի վորոշումն ասում է, վոր անհրաժեշտ է «մեր սոցիալիստական արդյունաբերության հետագա ծավալումը՝ խստորեն համաձայնեցնել ազգաբնակության գնողունակության և պետության ֆինանսական հնարավորությունների հետ»։

Սակայն, արդյունաբերության ծավալումն այնքան էլ հասարակ բան չէ։ Ծավալելը համեմատաբար հեշտ էր, յերբ ամեն ինչ հանդուրժ էր նրան, վոր վերականգնենք և գործի գցենք այն ֆաբրիկաները ու գործարանները, վորոնք մեզ ժառանգություն են մնացել կապիտալիստներից։ Այն ժամանակ մենք արագ թափով էինք առաջ գնում։ Այս տարի էլ մենք շարունակում ենք նույնպես արագ առաջ ընթանալ։ Այս անտեսական տարում (1925—26) մեր պետական արդյունաբերությունը, անցյալ տարվա հետ համեմատած, տալիս է 30—40% աճումն։ Նա դեռ ևս ոգտագործում է այն, ինչ վոր կապիտալիզմից էր մնացել մեզ։ Բայց տարվա վերջին այլևս բան չի մնա ոգտագործելու։ Մինչև տարվա վերջը մենք կվերականգնենք մեզ հասած հաժարյա բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, բոլոր պիտանի մեքենաները գործի կգցենք։ Բայց այս քիչ կլինի։ Պետք է շարունակել արդյունաբերության ծավալումը։ Ինչ յեղանակով։ Սրա ճանապարհը մեկն է։ Յեթե հին ֆաբրիկաներն ու գործարանները լիովին ծանրանաբեռնված են, հարկավոր է նորերը շինել։

Բայց շինելու համար միջոցներ են պետք։ Վորտեղից վերցնենք։ Կարելի յեր արտահանմանից փոխարինաբար առնել։ Բայց կապիտալիստները մեզ վարկ չեն տալիս։ Հետևաբար, պետք է միջոցները փնտռել մեզ մոտ, մեր յերկրում։ Կարող ենք մեր յերկրում գտնել այդ միջոցները։ Այս (1926) տարվա ապրիլին այս հարցով զբաղվեց կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումը։ Նա այն յեզրակացության յեկավ, վոր այդ միջոցները մենք մեզ մոտ գտնել կարող ենք։ Մենք խլեցինք կապիտալիստներից ֆաբրիկաները ու գործարանները,

կալվածատերերից՝ հողը. խլեցինք նրանցից այն դրամագլուխները, վորոնք բանկերում էլին գտնվում. այս բոլորը կենտրոնացրինք պետության ձեռքում։ Մենք հրաժարվեցինք Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստներին վճարելու այն պարտքերը, վոր մեզ ժառանգություն էր թողել ցարական կառավարությունը։ Մեր յերկրում բոլոր յեկամուտները (доход) պետարդյունաբերությունից և պետառևտրից (ներքին և արտաքին), բանկերից, նույնպես կենտրոնացած են պետության ձեռքին։

Անհրաժեշտ է միայն կիրարկել «յերկրում խնայողության, տնտեսողության խիստ ռեժիմ և անողոք պայքար ամեն տեսակ ավելորդ անարտադրողական ծախքերի դեմ»։ Այս մատնանշեց ՀԿԿ-ի (բ.) կենտրոնական կոմիտեի պլենումը։ Ինչպես նույնիսկ ժլատ վերաբերմունքը դեպի խորհրդային կոպեկը մեզ կոզնի միջոցներ խնայել սոցիալիստական արդյունաբերությունն ընդարձակելու համար։ «Ամենախիստ, ամենախիստ խնայողության գնով մեր տնտեսության մեջ պետք է հասնել այն բանին, վոր ամեն մի փոքրագույն խնայողությունը պահպանվի մեր խոշոր, մեքենային ինդուստրիալ զարգացման համար»— ասում էր Լենինը։ Յեվ Լենինի ու ՀԿԿ (բ.)-ի կենտրոնական կոմիտեի պլենումի այս հրահանգը պետք է ղեկավարող լինի ամեն մի կոմմունիստի, ամեն մի բանվորի և ամեն մի գյուղացու աշխատանքի մեջ։

Վորպեսզի իրապես խնայենք և վոչ թե խնայողության մասին խոսենք միայն, պետք է ամենից առաջ աշխատանքը վարենք ներդաշնակորեն, պլանով։ Մեզ մոտ յերբեմն այնպես է լինում, վոր բարձրագույն որգանները թույլ չեն տալիս մի վորևե ծախս անել, հաշվի առնելով այդ միջոցները ուրիշ կարիքների համար, իսկ ֆաբրիկան կամ ֆաբրիկաների միությունն (տրեստը) այս վորոշումը վորևե կերպ զանց է առնում և ծախսն անում է։ Այսպիսի բաները պետք է ամենախիստ կերպով արգելել։

Ապա՝ մենք պիտի պաշարներ հավաքենք։ Չե՞ վոր փոքրիկ տնտեսությունն անգամ առանց պաշարների վա-

րել չի լինի։ Գնաց գյուղացին հերկելու, և խոփը կոտրեց։ Յեթե նա պահունի փող կամ վորևե բան չունի ծախելու, նրա գութանն ընկած կմնա, և աշխատանքը կանգ կառնի։ Առավել ևս նկատելի յե առանց պաշարների յոլա գնալ այնպիսի մեծ տնտեսության մեջ, ինչպիսին մեր ժողովրդական տնտեսությունն է։ Մի անբերրիություն պատահի, բոլոր հաշիվները էլ կխառնվեն։ Հաշվի չեն առել, ասենք թե, կուտակվող միջոցներով մի քանի ֆաբրիկա շինել. ինչդեռ այդ փողերը ստիպված են ծախսել անբերրիությունից վնասվածներին ոգնելու։ Իսկ յեթե պաշար կա, հաշիվները չեն խառնվի, աշխատանքը կգնա առանց ընդհատումների։ Պաշարներ կուտակելու և յուրաքանչյուր կոպեկը խնայելու մասին պետք է հոգ տանեն և պետտուռուն ու կոոպերացիան։ Բոլոր վերադիր ծախսերը նրանք պիտի ամենափոքր չափերի հասցնեն։ Արդյունաբերական ապրանքների գների վրա մեծ հավելում անելով այն հետևանքին են բերում, վոր գյուղատնտեսական ապրանքներն էլ են թանկանում։ Թանկ գնված գյուղատնտեսական ապրանքներն էլ արտասահմանում առանց մեծ ծախսի չի լինի. այնտեղ նրանց համար ավելի քիչ կտան, քան նրանք մեզ վրա նստել են։ Արտասահմանում մեր վաճառքները կնվազեն, կը նվազի և մեր գնումների քանակն այնտեղ։ Մինչդեռ մենք այնտեղ պետք է գնենք, քանի վոր մեզ մոտ դեռ ևս բոլոր ապրանքներն արտադրել չենք կարողանում։

Խնայողության մասին պետք է հոգ տանեն նաև բանվորները։ Յեթե ֆաբրիկաներում աշխատանքը վատ գնա, յեթե շատ պարապանցներ (прогул) լինեն, մեքենաների շատ կանգեր (простой) լինեն, այն ժամանակ ավելի քիչ ապրանքներ բաց կթողնվեն, ապրանքային սովը կշարունակվի, շաղկապը կխանգրվի, պաշարների կուտակումը վատ կգնա, կարող են նույնիսկ ճնաններ ստացվել։ Խնայել պարտավոր է նաև գյուղացին, վորը նույնպես շահագրգռված է արդյունաբերության աճման մեջ։ Գյուղացու մոտ էլ վորոշ ռուբլիներ են կուտակվում, վոր մեռնում են անգործուկում ընկած։ Յեթե այդ ռուբլիները անգործուկից խնայողական դրամարկղն ընկնեն,

վարկային ընկերությունները ընկնեն վորպես ավանդ, ապա այդ միջոցներն էլ կարող են ոգտագործվել արդյունաբերության ընդարձակման համար. հենց գյուղացին էլ ձեռնտու տոկոս կստանա նրանցից։

Յեթե կուտակման գործն այնպես գնա, ինչպես XIV-րդ համագումարն ու կենտրոնական կոմիտեյի պլենումն են նշել, մենք ապրանքային սովից դուրս կպրծնենք և էլ ավելի կծավալենք մեր սոցիալիստական շինարարությունը։

Սակայն, նոր ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու հետ միասին, մենք պետք է պահենք ու պահպանենք հին ձեռնարկությունները։ Այլապես վատ բան դուրս կգա։ Նորերը կշինենք, իսկ հները կմաշվեն, և մենք շարունակ նույն տեղում կմնանք։ Այսպես կառուցել չի կարելի։ Պետք է վոչ միայն նոր ֆաբրիկաներն ու գործարանները նոր մեքենաներով սարքավորել, այլ և հին ձեռնարկությունների հին մեքենաներն ու հին սարքավորումը նորերով փոխարինել։ Մեր հին ֆաբրիկաներում էլ սարքավորումը կարգին մաշված է և հաճախ բոլորովին հրաժարվում է աշխատելուց. բացի դրանից, այս սարքավորումը չեթ ընկած է ավելի լավ ու արտադրության համար ավելի ձեռնտու, ավելի եժան ու լավ ապրանքներ արտադրող ամերիկական և այլ յերկիրների սարքավորումից։ Հարավ-ռեռնարդյունաբերական շրջանում, որինակ, պողպատաձուլարաններում «ավելացել է այն ս վարիանների*) թիվը, վորոնք առաջանում են ներկայումս արտադրության մեջ մուծվող սարքավորման լիակատար անպետքության հողի վրա» (Կուրբիշև)։ Հին ֆաբրիկանների համար մեզ մեքենաներ են պետք, նորերի համար՝ նույնպես։ Մի խոսքով, անկարելի յե պահպանել ու ընդարձակել արդյունաբերությունն առանց նրան անընդհատ նոր մեքենաներ և նոր սարքավորումներ մատակարարելու։

Վորտեղի՞ց վերցնենք մեքենաներն ու սարքավորումը։ Մենք շատ քիչ այնպիսի գործարաններ ունենք, վորոնք նոր մեքենաներ են պատրաստում։ Սրանք բոլոր ֆաբրիկաներին

*) Ավարիա նշանակում է փչացումներ։

ու գործարաններին մեքենաներ մատակարարել չեն կարող։ Կան մեքենաներ, որ մեր երկրում այլևս բոլորովին չեն պատրաստվում։ Ինչպե՞ս լեզնել այս դրությունից։ Արտասահմանում գնել մեքենաներ։ Արտասահմանում մեքենաներ գնել մեզ համար ձեռնտու չի, և ահա թե ինչու։

Յեթե մենք մեքենաներ մեզ մոտ չշինենք և շարունակ Արևտյան-Յեվրոպայի կապիտալիստներից գնելու լինենք, ապա՝ մենք կընկնենք նրանցից կախման մեջ։ Վորպեսզի մեր արդյունաբերությունն առանց ընդհատումների աշխատի, վորպեսզի նա շարունակի զարգանալ, մեքենաներ ձեռք բերելու համար պիտի ավելի հաճախակի դիմի գերմանական, անգլիական և ուրիշ կապիտալիստների։ Իսկ մենք հիշում ենք այն ժամանակը, յերբ կապիտալիստական յերկիրները մեզ բոյկոտ էյին հայտարարել, այսինքն մեզ մոտ վոչինչ չէյին բերում և մեզ մոտից էլ վոչինչ չէյին թույլատրում անցկացնելու։ Այդպիսի բոյկոտյից մենք այժմ էլ ապահովված չենք։ Կապիտալիստները մեզ ատում են։ Նրանց աչքը ծակում է, վոր բանվորներն ու գյուղացիները այնպիսի նոր կարգեր են հաստատում, վորոնց մեջ կապիտալիստները, և առհասարակ ամեն մի շահագործող տեղ չպիտի ունենա։ Իսկ յեթե նրանց հաջողվի մեզ բոյկոտի յենթարկել, մենք շատ ծանր վիճակի մեջ կընկնենք։ Արդյունաբերությունը վոչ մի տեղից մեքենաներ ձեռք բերել չի կարող։ Տնտեսությունը խիստ մեծ ճգնաժամ կկրի։ Սրա համար էլ մենք պետք է մեքենաները մեր յերկրում արտադրենք։ Հենց սրա մասին է ասել կուսակցության XIV համագումարը։ Համագումարի այս վորոշումը կոչվում է՝ վորոշումն յերկրի ինդուստրիալիզացիայի մասին։ Նա խոսում է այն մասին, թե մենք պետք է առաջին հերթին այնպիսի գործարաններ շինենք, վորտեղ պատրաստվում են արտադրության միջոցներ, մեքենաներ թե՛ արդյունաբերության յեվ թե՛ գյուղատնտեսության համար։ Առանց մեքենաների մեր տնտեսության զարգացումը կդանդաղի։ Շարունակ արտասահմանից մեքենաներ ներմուծելը մեզ կախման մեջ կդնի արտասահմանյան կապիտալիստներից։

Բացի այս, մեզ մոտ մեքենաների արտադրությունը մեզ

ավելի եժան կնստի։ Սրա վրա յել մենք կարող կլինենք խնայողություն անել։ Անշուշտ, սկզբներում ստիպված կլինենք արտասահմանից գնել այնպիսի մեքենաներ՝ վորոնցով մեքենաներ են շինում։ Ապա մենք կկարողանք այդպիսի մեքենաներն էլ մեզ մոտ պատրաստել։ Մեր տնտեսության համար ավելի եժան կնստի, յեթե ներմուծենք, ասենք թե, հազար մեքենա, վորոնք մեքենաներ են շինում, և ապա արդեն նրանցով մեզ մոտ արտադրենք տասնյակ հազար մեքենաներ մեր ֆաբրիկաների ու գործարանների և գյուղատնտեսության համար։

Սրա համար հնարավորություններ մենք ունենք։ Մեր յերկրում յերկաթի, ածուխի, պղնձի և ուրիշ մետաղների ահագին պաշարներ կան։ Այն ամենը, ինչ վոր հարկավոր է այդպիսի գործարաններ կառուցելու և աշխատեցնելու համար, մենք ունենք։ Ուստի պետք է կառուցել այդ գործարանները։ Ընկեր Ստալինն ասում է. «պրոլետարիատի դիկտատուրայի յերկիրը, վորը կապիտալիստական ողակի մեջ է գտնվում, չի կարող տնտեսապես ինքնուրույն ճիալ, յեթե նա արտադրության գործիքներն ինքը, իր տան մեջ չարտադրի, յեթե նա կանգնում է ու ճիում զարգացման այն աստիճանի վրա, վոր ստիպված է իր ժողովրդական տնտեսության սանձը կապիտալիստորեն զարգացած այն յերկիրների ձեռքում պահել, վորոնք արտադրության միջոցներ ու գործիքներ են արտադրում և արտահանում։ Այս աստիճանի վրա կանգնել-ճիալ նշանակում է իրեն հավաշխարհային կապիտալին յենթարկել»։

Յերկրի ինդուստրիալիզացիայի մասին արած վորոշումը նաև գյուղացու շահերին է ծառայում։ Սրանով գյուղական տնտեսությունն ապահովված կլինի գյուղատնտեսական մեքենաներով։ Արդյունաբերության հետագա աճումը դրդապատճառ կհանդիսանա գյուղատնտեսության հետագա աճման։ Ապրանքային սովը վերջնականապես կվերանա։ Մեր տնտեսության սոցիալիստական մասն այնքան կուժեղանա և կամրապնդվի, վոր՝ կալվածատիրոջ գյուղ և կապիտալիստի՝ քաղաք վերադառնալու վոչ մի վտանգ չի լինի։

Յերկրի ինդուստրիալիզացիան գուգադիպում է նաև գյուղացու շահերին: Մենք արդեն տեսանք, որ գյուղատնտեսությունը չետ է ընկնում իր զարգացման մեջ, յերբ բավարար չափով զարգացած արդյունաբերություն չկա, որ գյուղատնտեսությունից պարեն և հում նյութ դնի: Բացի այս, գյուղատնտեսության անկանգ զարգացման համար անհրաժեշտ է, որ նա բավարար չափով ուժավի գյուղատնտեսական մեքենաներով: Իսկ գյուղատնտեսությանն այդ տալ կարող է միայն այն արդյունաբերությունը, որ մեքենաներ է արտադրում: Մեր գյուղատնտեսությունը, հասարյա, լիովին ոգտագործել է մինչպատերազմյան ցանքային տարածությունը: Գյուղացու համար այժմ գլխավոր հարցն այս է՝ բերրությունը (урожайность) բարձրացնել, ճահիճները չորացնել, ջրային նոր (ջրատեխնիքական) սարքեր կառուցել յերաշտի դեմ կռվելու համար և այլն: Իսկ այս բոլորի համար զարձյալ մեքենաներ են պետք: Ուրեմն, գյուղատնտեսությանն էլ մեքենաներ են հարկավոր: «Ժողովրդական տնտեսությանն (իր ամբողջությամբ վերցրած)» զարգացման գործը, ասում է ընկ. Ստալինը, հենվում է և արդեն հենվել է ինդուստրիայի ուղղակի ծավալման վրա»:

Յերկրի ինդուստրիացումը մի անհետաձգելի և խիստ անհրաժեշտ գործ է: Սակայն, կան առանձին ընկերներ, որոնք այդ չեն հասկանում: Նրանք ասում են, թե՝ մեզ բոլորովին հարկավոր չե ինդուստրիալիզացիան ուժեղացնել: Այդ ընկերները հասկանալ չեն ուզում այն, որ ՆԵՊ-ի առաջին տարիներին մենք արդյունաբերությունը մլայն վերականգնում էինք և սրանով հիմք էինք գցում սոցիալիստական շինարարության: Այժմ այդ սոցիալիստական հիմքը գցած է: Մենք հասել ենք մինչպատերազմյան մակարդակին և սկսել ենք շարժվել դեպի սոցիալիզմը: Իսկ մենք այլևս ավելի առաջ շարժվել չենք կարող առանց ընդարձակելու մեքենաների մեր արտադրությունը, առանց ծավալելու մեքենաշինական արդյունաբերությունը և տնտեսության այն ճյուղերը, որոնք սրա հետ կապ ունեն (յերկաթի և քարածխի արդյունահանումը), առանց մեծացնելու արդյունաբերության ընդհանուր բաժինը մեր ժողովրդական տնտեսության մեջ:

Կան ընկերներ, որոնք ասում են, թե ինդուստրիալիզացիան կարելի յե անցկացնել մոչ թե մեքենաների արտադրությունը զարգացնելով, այլ՝ մյուս ծայրից սկսելով: Հարկավոր է առաջին հերթին զարգացնել արդյունաբերության այն ճյուղերը, որոնք գյուղատնտեսության հետ են կապված: Գյուղատնտեսությունը վուշ է արտադրում, ուրեմն պետք է հիմնել վուշահինական (льноткацкие) ֆաբրիկաներ. գյուղատնտեսությունը բամբակ է արտադրում (Թուրքեստան) ուրեմն, պետք է հիմնել բամբակեղենի ֆաբրիկաներ. գյուղատնտեսությունն արևածաղիկ է արտադրում, ուրեմն պետք է ձիթհան գործարան հիմնել արևածաղկի ձեթ ստանալու համար և այլն: Այս դատողության մեջ մեծ սխալ կա: Ինդուստրիալիզացիան ասում է ընկ. Ստալինը, խնդիրը է ոչ միայն այն, որպեսզի մեր ժողովրդական տնտեսությունն իր ամբողջությամբ տանի այնպես, որ նրա մեջ արդյունաբերության բաժինն ավելանա, այլ՝ նա մի ուրիշ խնդիր էլ է դնում, այն է՝ որպեսզի այդ զարգացման մեջ կապիտալիստներով շրջապատված մեր յերկրի տնտեսական ինքնուրույնությունը ապահովի, պահպանի նրան համաշխարհային կապիտալիզմի մի ավելցուկը դառնալուց: Ցավ յեթե մենք արդյունաբերություն զարգացնելու լինենք այն ծայրից, ինչպես խորհուրդ են տալիս այդ խելոքները, ապա՝ մեքենաներն այդ արդյունաբերության համար արևմտա-յեվրոպական և ամերիկական կապիտալիստներից պետք է գնենք: Մեր տնտեսության սանձը նրանց ձեռքին կլինի: Մենք կկորցնենք տնտեսական ինքնուրույնությունը. իսկ այս շատ վտանգավոր բան է սոցիալիստական շինարարության համար: Այնինչ մեքենաները մեզ մոտ շինելով, մենք կարող կլինենք զարգացնել թե վուշի, թե բամբակեղենի և թե ձիթհան արդյունաբերությունը, առանց կապիտալիստներից կախում ունենալու:

Կան, վերջապես, ընկերներ, որոնք հետևյալն են ասում վորովհետև ինդուստրիալիզացիան մեզ չափազանց հարկավոր

և, քանի վոր առանց ինդուստրիալիզացիայի մեր տնտեսությունը բթանցքի մեջ է ընկնում, ապա ուրեմն հարկավոր է այն ամենաշտապ կարգով անցկացնենք, նրան քշենք, ինչպես քշում են ձիուն «չորս վոտ». այս դեպքում մեծ միջոցներ պիտի ունենանք։ Այս ընկերներն առաջարկում են միջոցները գյուղացիներից վերցնել։ Ավելի մեծ տուրքեր նշանակել, արդյունաբերության ապրանքների գները բարձրացնել և այլն։ Նրանց, ովքեր այսպես են մտածում, ընկ. Ստալինը «վտանգավոր մարդիկ» է անվանել։ Եվ իրապես, այն ինչ վոր նրանք առաջարկում են, շատ վտանգավոր է։ Եթե նրանց լսենք և գյուղացիներին հուպ տանք, այն ժամանակ կպայթի բանվոր դասակարգի և գյուղացության դաշինքը։ Մինչդեռ բանվորների և գյուղացիների դաշինքը խորհրդային իշխանության վոչնչացումն է, հեղափոխության վախճանը, սոցիալիստական շինարարության կործանումը. «իսկ մենք ցանկանում ենք ամրապնդել, և վոչ թե պառակտել բանվոր դասակարգի և գյուղացության միությունը»։ Եթե մեզնից գյուղացական տնտեսությունը, նա կսկսի թուլանալ. ընկնել, կսկսի ավելի քիչ գնել արդյունաբերական ապրանքներ (արդյունաբերությունը ստիպված կլինի կրճատվել), կսկսի յետ ընկնել նաև գյուղացական տնտեսությունների կոոպերացումը։ Արդյունաբերությունը կրճատվելով, կթուլանա և գյուղատնտեսությունը կգնա դեպի վար։ Արագ ինդուստրացման այդպիսի «կողմնակիցներին» լսելով մենք կկործանենք սոցիալիստական շինարարությունը։

Այն ուղին, վոր ցույց է տվել XIV կուսհամագումարը և կ. կ.-ի ապրիլյան պլենումը միակ ճիշտ ուղին է հանդիսանում։ Միայն սա կհասցնի այն բանին, վոր մեր տնտեսության սոցիալիստական մասը, բանվորների և գյուղացիների միահամուռ ջանքերով, կուսակցության ղեկավարությամբ, կուժեղանա և կամրապնդվի այնքան, վոր արդեն վեչ մի վտանգ չի լինի այն մասին թե կուլակները՝ գյուղ և կապիտալիստը քաղաք կարող են վերադառնալ։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԻՊԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր այժմյան տնտեսական իրականության պարագաներում, յերբ մենք մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունները միացրել ենք հետևողական սոցիալիստական տիպի ձեռնարկությունների հետ (այստեղ պետությանն են պատկանում թե արտադրության միջոցները, թե հողը, վորի վրա ձեռնարկությունն է գտնվում, թե ամբողջ ձեռնարկությունը), բայց վոչ այլ կերպ, քան հասարակական հողի վրա, և վոչ այլ կերպ, քան բանվոր դասակարգին պատկանող պետական իշխանության վերահսկողության տակ, ապա այստեղ հարց է ծագում նաև մի յերրորդ տեսակի ձեռնարկությունների մասին, վորոնք առաջ սկզբունքային տեսակետից ինքնուրույնություն չունեին. դրանք՝ կոոպերատիվ ձեռնարկություններն են։

(Լենին. XVIII հ. II. մաս, յեր. 143, ռուսերեն բնագրի)։

ՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Առևտուրը միակ հնարավոր տնտեսական կապն է տասնյակ միլիոնավոր մանր հողագործների և խոշոր արդյունաբերության միջև, յեթե... յեթե այդ հողագործների կողքին չկա խոշոր, հոյակապ մեքենային ինդուստրիա, ելեքտրական թեքացանց. չկա այնպիսի ինդուստրիա, վոր թե իր տեխնիքական հզորությամբ, թե իր կազմակերպչական «վերնաշենքով» և իրեն հարակից յերևույթներով ընդունակ լիներ մանր հողատերերին մատակարարել լավագույն պրոդուկտներ, ավելի մեծ քանակությամբ, ավելի արագ և եժան, քան առաջ։

...Գյուղացին գիտե շուկան և գիտե առևտուրը։ Ուղղակի կոմմունիստական բաշխումն մենք մտցնել չկարողացանք։ Սրա համար չունեինք բավական ֆաբրիկաներ և սրանց սարքավորումը։ Ուստի մենք այս պիտի անենք առևտրի միջոցով. բայց

այս պետք է անել վոչ ավելի վատ, քան անում եր կապիտալիստը, այլապես ժողովուրդն այդպիսի կառավարումն տանել չի կարող։ Սրանումն է դրության ամբողջ եյությունը։

(Լենին XVIII հ. մաս. I, յեր. 197)

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՍՈՎԻ ՊԱՏՃԱՌԸ

Ի՞նչ է այս ապրանքային սովի պատճառը, վոր այժմ ապրում է մեր յերկիրը։ Այս յերևույթի պատճառը պետք է վորոնել արդյունաբերության անբավարար կշռի մեջ, վոր նա ունի ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում։ Միամիտ բան կլիներ, յեթե մտածեյինք, վոր 2 կամ 3 տարվա մեջ կարելի յեր յերկրի յերկրագործական բնույթը արմատապես փոխել։ Չե՞ վոր այստեղ խոսքը վերաբերում է մեր յերկրի տնտեսական բնույթի արմատական փոփոխությանը, այսինքն՝ յերկարատև. մի շարք տարիների վրա նախահաշված մի պրոցեսի, վորի ընթացքում մեր յերկիրը յերկրագործական-արդյունաբերականից պիտի վերածվի արդյունաբերական-յերկրագործականի։

Մինչ պատերազմը գյուղատնտեսության արտադրականության հարաբերությունն առ արդյունաբերականը մոտավորապես 13:7 եր։ Յետամնաց գյուղատնտեսական արտադրության այս գերակշռող դերի ընդհանուր արտահայտությունը հանդիսանում եր այն, վոր ցարական Ռուսաստանում ամենաեժանը հացն եր, իսկ ամենաթանկը չիթն եր։ Յեթե ցորենի միջին գինը Յեվրոպայում և Ամերիկայում 1 ռ. 33 կոպ. եր, ապա Ռուսաստանում նա հավասար եր 1 ռ. 05 կոպ.։ Չթի արշինը միջին հաշվով արժեր Յեվրոպայում 8,6 կոպ. իսկ Ռուսաստանում 13 կոպ.։

Չնայած՝ վերջին յերեք տարիներին արդյունաբերությունը մեծ թռիչք արավ դեպի առաջ, այնուամենայնիվ յերկիրը, կրկնում եմ, ապրանքային սովի մեծ ճգնաժամ է ապրում։ Վորոնք են սրա մերձավորագույն պատճառները։ Այդ պատճառները թաքնված են թե քաղաքի և թե գյուղի այն վճարունակ պահանջի արագ աճման մեջ, վոր գերառաջել է արդյունաբերական ապրանքների առաջարկի աճմանը։ Հոկտեմբերյան հեղափոխությունն արմատական փոփոխություններ առաջացրեց գյուղացական բյուջեյի կառուցվածքի մեջ։ Վերջինից բոլորովին դուրս ընկան այն ծախքերը, վորոնք կապված եյին հողի գնման կամ վարձակալման հետ։ Գյուղացիներից վերցվող մի շարք տուրքային և վոչ-տուրքային հարկումներ, վորոնք բղխում եյին ազնվական-կալվածատիրական կարգերի եյությունից, այժմ վերացվել են։ Սրա հետևանքով, գյուղատնտեսության վերելքի հիման վրա գյուղացության յեկամտի աճման հետ միասին գյուղացիների մոտ ազատ են մնում միջոցների մի մասը, վորոնք առաջ նրանից վերցվում եյին. ուստի և, ավելանում է նրանց պահանջն արդյունաբերական ապրանքների նկատմամբ։

(Ա. Ռիկով. Հ. Կ. Կ. (բ.) Կ. Կ.-ի պլենումի արդյունքները)

XIV ԿՈՒՍՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յելնելով սրանից, համագումարը հանձնարարում է Կ. Կ.-ին տնտեսական քաղաքականության ասպարեզում ղեկավարվել հետևյալ հրահանգներով.

ա) Ամենահիմնական խնդիրը դարձնել՝ սոցիալիստական տնտեսական ձևերի հաղթանակի ապահովումը՝ մասնավոր կապիտալի դեմ, արտաքին առևտրի մենաշնորհը, սոցիալիստական պետարդյունաբերության աճումը և սրա ղեկավարությամբ ու կոոպերացիայի ոգնությամբ գյուղացական տնտեսությունների ավելի ու ավելի մեծ զանգվածների գրավումը սոցիալիստական շինարարության հունի մեջ։

բ) Ապահովել Խ. Ս. Հ. Միության տնտեսական ինքնուրույնությունը, վորը պահպանում է Խ. Ս. Հ. Մ.-ը համաշխարհային կապիտալի կցորդը դառնալուց. սրա համար ընթացքն ուղղել դեպի յերկրի ինդուստրացումը, արտադրության միջոցների արտադրության զարգացումը և տնտեսական զորաշարժման համար պահեստի ֆոնդեր ստեղծելու։

գ) Հիմնվելով XIV կուսկոնֆերենցիայի վորոշումների վրա,

ամեն կերպ նպաստել յերկրում արտադրության և ապրանքաշրջանառության աճմանը։

դ) Ոգտագործել բոլոր միջոցները, ամենախիստ խնայողություն անելու պետական միջոցների ծախսման մեջ, պետարդյունաբերության, առևտրի և կոոպերացիայի շրջանառության արագությունը մեծացնել՝ սոցիալիստական կուտակման թափն ուժեղացնելու համար։

ե) Ծավալել մեր սոցիալիստական արդյունաբերությունը՝ դնելով այն տեխնիկական բարձր մակարդակի վրա, խստորեն համաձայնեցնելով ինչպես շուկայի տարողության, նույնպես և պետության ֆինանսական հնարավորությունների հետ։

զ) Ամեն կերպ աջակցել տեղական արյունաբերության (ռայոն, շրջան, նահանգ, յերկիր, հանրապետություն) զարգացմանը, ամեն կերպ հրահրելով տեղական ձեռներեցությունն այդ արդյունաբերության կազմակերպման մեջ, վորը նախահաշվաված է առհասարակ ազգաբնակության և առանձնապես գյուղացության բազմազան կարիքների բավարարման համար։

ՆԵՊ-Ի ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Մենք այժմ մտել ենք ՆԵՊ-ի յերկրորդ շրջանը։ Մեր տնտեսության դրության մեջ ամենակարևորն ու ամենաբնորոշն այն է, վոր ծանրության կենտրոնն այժմ տեղափոխվել է ինդուստրիայի կողմը։ Յեթե այն ժամանակ՝ նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, մենք պետք է գյուղատնտեսությունից սկսեինք, քանի վոր ժողովրդական ամբողջ տնտեսության զարգացումը գյուղատնտեսության վրա յեր հենված, ապա՝ այժմ, մեր տնտեսության սոցիալիստական պատվանդանի կառուցումը շարունակելու համար անհրաժեշտ է ուշադրությունը հենց ինդուստրիայի վրա կենտրոնացնել։ Հիմա, լինքը՝ գյուղատնտեսությունն առաջ շարժվել չի կարող, յեթե իր ժամանակին նրան չմատակարարես գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, արդյունաբերության արտադրած իրեղեններ, և այլն։ Ուստի, յեթե այն ժամանակ, նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, ժողովրդական տնտեսության գործն ամբողջովին գյուղատնտեսության վրա յեր հենված, ապա, այժմ նա հենվում է և արդեն հենված է ինդուստրիայի ուղղակի ծավալման վրա։

(Ի. Ստալին. «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին» յեր. 5)

Ի՞ՆՉ ՌԱՆ Ե ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Արդյունաբերության ամեն մի զարգացում ինդուստրացումն չի ներկայացնում։ Ինդուստրացման կենտրոնը, նրա պատվանդանը, ծանր արդյունաբերության (վառելիք, մետաղ և այլն) զարգացման, ի վերջո, արտադրության միջոցների արտադրության զարգացման, իր սեփական մեքենաշինության զարգացման մեջ է կայանում։ Ինդուստրացումը նպատակ ունի վոչ միայն այն, վոր ժողովրդական տնտեսությունն ամբողջությամբ տանի դեպի նրա՝ արդյունաբերության բաժնի մեծացումը, այլ և նա ունի մի այլ խնդիր ևս, այն է՝ վոր այդ զարգացման մեջ կապիտալիստներով շրջապատված մեր յերկրի տնտեսական ինքնուրույնությունն ապահովի, նրան պահպանի հաժաշխարհային կապիտալիզմի մի կցորդը դառնալուց։ Կապիտալիստական ողակման մեջ գտնվող՝ պրոլետարիատի դիկտատուրայի յերկիրը չի կարող տնտեսապես ինքնուրույն մնալ, յեթե ինքն իր տան մեջ արտադրության գործիքներ ու միջոցներ չի արտադրում. յեթե նա կառչած է մրնում զարգացման այն աստիճանին, յերբ նա ստիպված է ժողովրդական տնտեսության սանձը կապիտալիստորեն զարգացած այն յերկիրների ձեռքը տալ, վորոնք արտադրության միջոցներ ու գործիքներ են արտադրում ու արտահանում։ Կառչած մնալ այս աստիճանին նշանակում է՝ ինքն իրեն յենթարկել տալ միջազգային կապիտալին...։

Սրանից հետևում է, վոր ինդուստրացումը պիտի հասկանալ, ամենից առաջ, վորպես զարգացումն մեզ մոտ ծանր արդյունաբերության և առանձնապես, վորպես զարգացումն սեփական մեքենաշինության՝ առհասարակ ինդուստրիայի այս հիմնական ներվի։ Առանց սրան, ավելորդ է խոսել մեր յերկ-

րի տնտեսական ինքնուրույնության ապահովության մասին։

(Ի. Ստալին. «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին» յեր. 7)։

ԿՈՒՏԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ունենք մենք արդյոք կուտակման այնպիսի աղբյուրներ, վորոնք բավարարելին մեր յերկիրն ինդուստրացնելու համար։ Այո, մենք ունենք այդպիսի աղբյուրներ։

Յես կարող եյի ժամանակը նշել այնպիսի փաստ, ինչպիսին է՝ մեր յերկրում Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով կապիտալիստների ու կալվածատերերի եքսպրոպրիացիան, հողի, ֆաբրիկանների, գործարանների և այլն ժամանակը սեփականության վերացումը և նրանց համաժողովրդական սեփականություն դառնալը։ Հազիվ թե կարիք լինի ապացուցել, վոր այդ փաստը կուտակման բավական հաստատուն աղբյուր է ներկայացնում։

Ապա յես կարող եյի ժամանակը նշել այնպիսի փաստերի վրա, ինչպիսին է՝ ցարական պարտքերի վոչնչացումը, վոր մեր ժողովրդական տնտեսության ուսերից միլիարդների պարտք վերցրեց։ Զպետք է մոռանալ, վոր այդ պարտքերը պահպանելու պարագայում մենք պիտի տարեկան մի քանի հարյուր միլիոն ռուբլի միայն տոկոսներ վճարեյինք ի վնաս արդյունաբերության, ի վնաս ամբողջ ժողովրդական տնտեսության։ Եվ ասել չարժե, վոր այս հանգամանքը մեծ թեթևություն ստեղծեց մեր կուտակման գործի մեջ։

Յես կարող եյի նշանակել մեր ազգայնացրած արդյունաբերության վրա, վորը վերականգնել է, վորը զարգանում է և վորը արդյունաբերության հետագա զարգացման համար անհրաժեշտ վորոշ վաստակ է բերում։ Սա յեր կուտակման աղբյուր է։

Յես կարող եյի նշանակել մեր պետականացրած արտաքին առևտրի վրա, վորը մի վորոշ վաստակ է տալիս և, ուրեմն, կուտակման աղբյուր է հանդիսանում։

Կարելի յեր մեջ բերել մեր շատ թե քիչ կազմակերպված ներքին առևտուրը, վորը նույնպես վորոշ վաստակ է տալիս և, ուրեմն, կուտակման վորևե աղբյուր հանդիսանում։

Կարելի յեր նշանակել կուտակման մի այնպիսի լծակի վրա, ինչպիսին մեր բանկային սիստեմն է, վորը վորոշ վաստակ է տալիս և, ուժը ներածին չափ, անուղղակի է տալիս մեր արդյունաբերությանը։

Վերջապես, մենք ունենք մի այնպիսի զենք, վորպիսին է մեր պետական իշխանությունը, վորը կարգադրում է մեր պետական բյուջեն և վորը հավաքում է, իր ուժը ներածին չափ, գումարներ առհասարակ ժողովրդական տնտեսության և նամանավանդ ինդուստրիայի հետագա զարգացման համար։

Սրանք են, հիմնականում, մեր կուտակման գլխավոր աղբյուրները։

(Ի. Ստալին—«Խորհրդային Միության տնտեսական դրության մասին»)։

ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀԻՇՑ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ. ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ

Բայց միայն կուտակումով բանը չի պրծնում և չի յել կարող պրծնել։ Պետք է նախ կարողանալ կուտակված հետևանքները խոհեմաբար, հաշվով ծախսել, այնպես վոր ժողովրդական բարիքի մի կոպեկն անգամ ի զուր չկորչի. վորպեսզի կուտակման ոգտագործումը մեր յերկրի ինդուստրացման կարևորագույն պահանջների բավարարման հիմնական գծով գնա։ Առանց այս պայմանների մենք վտանգվում ենք նրանով, վոր մեր կուտակած միջոցները կարող են հափշտակվել, կարող են գան ու ցրիվ լինել ինդուստրիայի զարգացման հետ վոչ մի առնչություն չունեցող զանազան մանր ու մեծ ծախքերի ճանապարհով։ Միջոցները խոհեմաբար, հաշվով ծախսել կարողանալը՝ սա մի շատ կարևոր շնորհք է, վորը միանգամից չի տրվում։ Չի կարելի ասել, թե մենք, այսինքն մեր խորհրդային և կոոպերատիվ որգաններդ, այս բանում մեծ շնորհքով աչքի յենք ընկնում։ Ընդհակառակը, բոլոր ավյալներն այն են ասում, վոր այս տեսակետից մեր գործերը շատ անբարեհա-

ջող են։ Ծանր է այս խոստովանելը, ընկերներ, բայց այս փաստ է, վորը վոչ մի բանաձևով ծածկել չես կարող։ Դեպքեր են լինում, յերբ մեր կառավարող որգաններն ընկնում են այն գյուղացու վիճակի մեջ, վորը մի փոքր գումար փող եր կուտակել և, այդ փողով փոխանակ իր գումանը սարքելու, իր տնտեսությունը նորոգելու, մի մեծ գրամոֆոն է գնել և... կոտրն է ընկել։ Յես ել չեմ խոսում կուտակված պահեստների ուղղակի թալանման փաստերի մասին, մեր պետական ապպարատի մի շարք որգանների վորկրամոլության փաստերի, գողության փաստերի մասին, և այլն։

Ուստի, անհրաժեշտ է մի շարք այնպիսի միջոցներ ձեռք առնել, վորոնք ընդունակ լինեյին մեր կուտակումը պահպանել փոշիացումից, թալանումից, անհարկավոր անցքերով քաշքշելուց, նրան մեր ինդուստրիայի շինարարության հիմնական գծից շեղելուց։

(Ի. Ստալին — «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին»)։

ՋԻ ԿԱՐԵԼԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՒՊ ՏԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Մեզ մոտ, մեր կուսակցության մեջ կան մարդիկ, վորոնք գյուղացության աշխատավոր զանգվածների վրա նայում են՝ վորպես ոտարածին մի մարմնի, վորպես՝ արդյունաբերության համար շահագործելի մի առարկայի, վորպես՝ մեր ինդուստրիայի համար գաղութի նման մի բանի։ Այս մարդիկ վտանգավոր մարդիկ են, ընկերներ։

Գյուղացությունը չի կարող բանվոր դասակարգի համար վոչ շահագործման առարկա և վոչ ել գաղութ լինել։ Գյուղացական տնտեսությունը մի շուկա յե արդյունաբերության համար, ճիշտ այնպես, ինչպես վոր արդյունաբերությունն ել մի շուկա յե հանդիսանում գյուղատնտեսության համար։ Սակայն, գյուղացությունը մեզ համար վոչ միայն շուկա յե, նա բանվոր դասակարգի դաշնակիցն ել է։ Հենց այդ պատճառով ել գյուղացական տնտեսության բարձրացումը, գյուղացության

մասսայական կոոպերացումը, նրա նյութական վիճակի բարելավումն այն նախադրյալն է հանդիսանում, առանց վորի չի կարելի ապահովել մեր արդյունաբերության փոքր ի շատե լուրջ զարգացումը։ Յեվ ընդհակառակը, արդյունաբերության զարգացումը, գյուղատնտեսական մեքենաների և տրակտորների արտադրությունը, գյուղացությանն արդյունաբերության պրոդուկտներ մասսայորեն մատակարարելը — սրանք են հանդիսանում այն նախադրյալը, առանց վորի գյուղատնտեսությունն առաջ շարժել չի կարելի։ Սա բանվոր դասակարգի և գյուղացության միության ամենալուրջ հիմունքներից մեկն է։ Այս պատճառով ել մենք չենք կարող համաձայնել այն ընկերների հետ, վորոնք շարունակ պահանջում են ուժեղացնել գյուղացիներին սեղմելը՝ տուրքերը ծայրահեղորեն ավելացնելով, արդյունաբերության ապրանքների գները բարձրացնելով և այլն։ Մենք չենք կարող նրանց հետ համաձայնել, քանի վոր դեռ նրանք իրենց հաժար աննկատելի կերպով քանդում են բանվոր դասակարգի և գյուղացության դաշինքը, տատանում են պրոլետարիատի դիկտատուրան։ Դեհ, իսկ մենք ցանկանում ենք ամրապնդել, և վոչ թե քակտել բանվոր դասակարգի և գյուղացության միությունը։

(Ի. Ստալին — «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին»)։

ՀԱՐՑԵՐ 4. ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ինչպե՞ս է դրված պետարդյունաբերության կառավարումը։
2. Ի՞նչ է նշանակում հետևողական-սոցիալիստական տիպի արդյունաբերություն։
3. Արդյունաբերության ինչ յերկու տիպեր կան մեր յերկրում։
4. Ինչու՞ պետարդյունաբերությունը պետք է զարգանա գյուղատնտեսության զարգացման համապատասխան։
5. Ինչից է, վոր մեր յերկրում ապրանքային սով կա։
6. Ի՞նչ է նշանակում XIV կուսհամագումարի վորոշումը՝ յերկրի ինդուստրացման մասին։

7. Ի՞նչ միջոցներ են նպաստում խնայողությանը և պահեստներ կուտակելուն։

8. Ինչո՞ւ ինդուստրացումը ձեռնտու չե գյուղատնտեսությանը։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ IV ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պարզեցեք, ինչպես և աճել մեր գյուղում ցանքսի տարածությունը 1921 թվից սկսած (տվյալներ կարելի չե վերցնել Շրջգործկոմի արխիվից) և դիագրաֆներ կազմեցեք։

2. Կազմեցեք ձեր գյուղում մինչև հեղափոխությունը և 1926 թվին փաստորեն գոյություն ունեցող գյուղատնտեսական մեքենաների ադյուսակը։

3. Վորոշեցեք ձեր գյուղի չերեք տնտեսությունների՝ մի չքավորի, մի միջակի և մի կուլակի գնողունակությունը. (կարելի չե ոգտագործել տուրքաթղթերը։

4. Հաշվեցեք, վորքան չվճարված պարտքեր և վոչնչացրել ձեր գյուղում հեղափոխությունը (պետական գանձարանին, զեմստվոյին, բանկերին, կալվածատերերին և այլն)։

ԶՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գյուղատնտեսության վիճակը չեվ նրա վերակազմումը ՆԵՊ-ի ժամանակ

Մեր գյուղատնտեսությունը, ինչպես առաջ՝ ցարիզմի ժամանակ, նույնպես և հիմա՝ խորհրդային իշխանության ժամանակ եվ բերքի կողմից ավելի ցածր և արտասահմանից։

Մեր հացահատիկ մշակողների մինչև բերքը մի դեսյատինից 40—45 փութ է, այնինչ Հոլլանդիայի լավ գրագետ գյուղացուները՝ մոտ 170 փութ։ Իհարկե, մեր գյուղատնտեսության մեջ եվ կան այնպիսի տնտեսատեր գյուղացիներ, նամանավանդ գյուղատնտեսական կոմմունաները և խորհրդային տնտեսություններ, վորոնց մի դեսյատինը 180—200 փութ հացահատիկ է բերում։ Բայց, մեր գյուղացական տնտեսությունների ահագին մեծամասնության մինչև բերքը շատ ցածրը է։ Այդ բերքն եվ գյուղական տնտեսության մեջ միշտ չի լինում։ Անցյալում ռուսական գյուղը հաճախ սովում եր և ավելի հաճախ նվազաբերք (недород) ուներում։ Այսպես, 1891 թվից մինչև 1911 թիվը (21 տարվա ընթացքում) մենք ապրել ենք չերեք սովի տարի և 13 նվազաբերքի տարի։ 21 տարուց համեմատաբար ավելի բերքով տարի չեղել են միայն 5-ը։ Վերջին տարիներս, արդեն խորհրդային իշխանության որոք, մենք եվ չենթարկվեցինք չբերքի և նվազաբերքի, վորից շատ միլիոնավոր մարդիկ և գյուղացական տնտեսություններ ջնասներ կրեցին։

Մեր անասնապահական տնտեսությունն էլ նվազ չեկաժտաբեր է։ Գյուղացու անասունները մանր են, սակավաքաշ և սակավակաթ։ Մեզ մոտ մսացու անասունի քաշը 7—18 փութ է, իսկ Ամերիկայում 25—33 փութ միայն մաքուր քաշը։ Մեր գյուղացին իր կովից ստանում է տարեկան 60—100 վեդրո կաթ, իսկ Դանիայի գյուղացին՝ ավելի քան 200 վեդրո։

Անասունների քանակը և ցանքսերի քանակը մեզ մոտ խիստ կրճատվեց պատերազմի (իմպերիալիստական և քաղաքացիական) տարիներին և սովի ու սակավաբերության ծանր տարիներին։

Այսպես, 1922 թվին բանվոր անասուններ (ձի և չեզ) մեկ և կես անգամ ավելի քիչ էին, քան 1916 թվին։ Յոթե 1916 թվին կար 100 ձի, ապա՝ 1922 թվին կար 60. մեծ չեղջերավոր անասուններ կային 63 գլուխ, 1916 թվի 100 գլխի դիմաց։

Ցանքսերը կրճատվեցին. հացի բերքն էլ խիստ նվազեց։ Պատերազմից առաջ մինչև հաշվով հավաքում էին $4^1/_2$ միլիարդ փութ հաց. այնինչ՝ 1921 թվին հավաքվել եր $2^1/_2$ անգամ պակաս, այն է՝ 1 միլիարդ 800 միլիոն փութ։

Գյուղացու տնտեսությունը տարեցտարի ավերվում եր ցարական կառավարության և կալվածատերերի ձեռքով, իսկ իմպերիալիստական և ապա քաղաքացիական պատերազմի միջոցին նա ավելի ևս ավերվեց։

Պատերազմից հետո միայն, նոր տնտեսական քաղաքականության՝ ՆԵՊ-ի որոք մեր խորհրդային Միության քայքայված տնտեսությունը վերականգնում է, իսկ դրա հետ միասին բարձրանում, աճում, լավանում է նաև գյուղացական տնտեսությունը։

Վոր գյուղացական տնտեսությունը ՆԵՊ-ի ժամանակ ավելի լավացել է, այդ ամենքին հայտնի չե։ Նա մինչպատերազմյան վիճակին է հասնում, իսկ նրա մի քանի ճյուղերը, ինչպես խոզաբուծությունը, արդեն գերազանցել է մինչպատերազմյան մակարդակը։ Վերցնենք այս թվերը.

Տարեթիվ	Ցանքի տարածությունը դեսյատին-ներով	Գյուղատնտ. պրոդուկտի խառն հասույթը փթերով	Ձիերի քանակը	Ցեղջերավոր անասունների քանակը
1917	79.800.000	3.987.000	30.200.000	48.200.000
1923	69.500.000	3.170.000	20.800.000	40.000.000
1925	79.400.000	4.000.000	24.600.000	49.300.000

Ավելի պարզ պատկերացնելու համար դիտենք նաև հետևյալ թվերը.

Ցանքսերի տարածության աճումը տալիս է մեզ հետևյալ պատկերը.

1917 թիվ . . 79,800,000 դեսյատին
1923 » . . 69,500,000 »
1925 » . . 79,400,000 »

Ձիերի քանակը 1925 թվին դեռևս չի հասել 1917 թ. քանակին.

1917 թ. ձիերի ընդհանուր քանակը հավասար եր 30,200,000-ի
1923 » 20,800,000-ի
1925 » 24,600,000-ի

Բայց դրա փոխարեն մեծ չեղջերավոր անասունների թիվը նույն 1925 թվին որդեն ավելի չե, քան 1917 թիվը։

1917 թ. չեղջերավոր անասուն. ընդհ. քանակն եր 48,200,000
1923 » » » » » 40,000,000
1925 » » » » » 49,300,000

Նոր տնտեսական քաղաքականության, ՆԵՊ-ի ժամանակ, պրոլետարիատն ու գյուղացությունը մրահամուռ ուժերով հաղթահարում են տնտեսական քայքայումը չեվ միատեղ կարգավորում խորհրդային նոր սոցիալիստական տնտեսությունը։

Գյուղացության շերտավորումը

ՆԵՊ-ի տարիներին մեր կուսակցության ղեկավարությամբ, գյուղատնտեսությունն աճեց, ամրապնդվեց, ուժ հավաքեց և միջոցներ կուտակեց։

Ցեվ այդ հասկանալի չե։ Դեհ, վոր ցանքերը շատացան և մինչպատերազմյանին հասան, հացահատիկների բերքը մինչև

4 միլիարդ 200 միլիոն փթի հասավ, անասունների և ձիերի թիվը քիչ է մնացել մինչպատերազմյանին հասնի, ապա ուրեմն բոլոր գյուղատնտեսության արդյունքների արժեքն էլ նույնպես մեծացել է և հասնում է 90%-ին 1913 թվի համեմատությամբ։ Սակայն, գյուղատնտեսությունը միատեսակ և միահավասար չի աճում. տարբեր են ապրում ու զարգանում չքավոր, միջակ և կուլակային տնտեսությունները։

Գյուղի բաժանումը, կամ ինչպես ուրիշ խոսքով ասում են, շերտավորումը՝ չքավորների, միջակների և կուլակների, սկսվել է շատ վաղուց. դեռ ևս ճորտատիրության ժամանակ այս նկատված եր. և, յերբ կապիտալիզմն սկսեց աճել, այս բաժանումն սկսեց ավելի ուժեղ թափով զարգանալ։ Կուլակների թիվը շատացավ, նրանք ավելի ու ավելի եյին հարստանում, իսկ միջակ գյուղացին աղքատանում է դառնում եր չունևոր, չունևորն էլ քայքայվում և դառնում գյուղական բատրակ կամ քաղաքի բանվոր։ Կուլակն ամուր պահում եր իր ձեռքին թե՛ չքավորին և թե՛ միջակին. կոպեկներով գնելով «ընդ միշտ» նրանց հողը, իրեն հատար ձեռնտու ձևով ոգտվում եր և եժան գործավորներով։ Այսպիսի գրությունը գյուղում ձեռնտու յեր կալվածատերերին. ցարական կառավարությունը պաշտպանում եր այս կարգը և ամեն միջոցներով կուլակին ու կալվածատերերին ոգնում եր կեղեքելու, հողագուրկ դարձնելու աշխատավոր գյուղացության մեծամասնությանը։

Վլադիմիր Իլիչը ցարիզմի որով յիրկար ժամանակ ուսումնասիրում եր գյուղացիների դրությունը և հաշվեց («Развитие капитализма в России» գրքում), վոր 1903 թվին, 10 միլիոն տնտեսությունից.

չքավորներ եյին՝ $6^1/_2$ միլ. տուն, վորոնք ունեյին $3^1/_2$ միլ. ձի
միջակներ » 2 » » » » $4^1/_2$ » »
իսկ կուլակներ՝ $1^1/_2$ » տնտեսութ.» » $7^1/_2$ » »

Այս նշանակում է, վոր կուլակային տնտեսությունները կազմում եյին միայն $^1/_6$ մասը, բայց գյուղում յեղած ձիերի $^1/_2$-ը նրանց ձեռքին եր։ Թվով ամենից մեծը չքավորների խմբավորումն եր՝ $6^1/_2$ միլիոն տնտեսություն, այսինքն՝ բոլոր

տնտեսությունների մոտ յերկու-յերրորդը, այնինչ՝ սրանք ունեյին բոլոր ձիերի $^1/_3$-ից մի քիչ ավելին միայն։ Այսպես եր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Հոկտեմբերը կապիտալիստների և կալվածատերերի իշխանության փոխարեն հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա՝ Խորհրդային իշխանություն։ Պրոլետարիատը չքավոր և միջակ գյուղացության հետ միասին պաշտպանեց խորհրդային իշխանությունը կապիտալիստներից, կալվածատեր-կուլակներից և արտասահմանյան բուրժուազիայից։ Առաջին տարիներն անցան ինքնապաշտպանության, քաղաքացիական կռվի մեջ։ Սրանք շատ ծանր տարիներ եյին բանվորների ու գյուղացիների համար։ Սակայն, այս տարիներին տեղի ունեցավ ամբողջ հողի վերաբաժանումը, վոչ միայն այն հողի, վոր խլված եր կալվածատերերից, այլ և այն հողի, վորը գտնվում եր կուլակների ձեռքին։ Սրանցից խլվեցին ավելորդ անասունները, գյուղատնտեսական ինվենտարը և բաշխվեցին չքավորների մեջ։ Գյուղի ապակուլակայնացումն տեղի ունեցավ. կուլակները շատ նվազեցին, նվազեց և չքավորների քանակը, աճեց միջակների թիվը։ Խորհրդային գյուղը միջակայնացավ, միջակը դարձավ գյուղացության գլխավոր գրուպպան, կամ, ինչպես վ. Ի. Լենինն եր ասում՝ մեր հողագործության «կենտրոնական դեմքը»։ ՆԵՊ-ի ժամանակ, ազատ առևտրի պարագաներում, վորը, ինչպես մենք գիտենք նախորդ զրույցից, մուծված և գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը բարձրացնելու նպատակով,—տնտեսության ընդհանուր վերելքից ոգտվեց նաև կուլակը։ Նա նորից ժրեց։ 1924–1925 թվին գյուղացական տնտեսությունների յուրաքանչյուր հարյուրին, ամբողջ խորհրդային Միության մեջ միջին հաշվով մենք ունեյինք մոտավորապես՝ 41 չքավոր, 56 միջակ, 2 միջակից բարձր և 1 կուլակ։ Այսպիսով, կուլակային տնտեսությունների թիվը, ունևորների հետ միասին, աճել հասել է յերեք՝ յուրաքանչյուր հարյուր գյուղացական տնտեսության մեջ։ Իսկ նախ քան պատերազմը կուլակային տնտեսությունները 15% եյին հաշվում։ Չքավոր տնտեսություններն այժմ հարյուրից

41-ն են, կամ 41 տոկոսը, իսկ պատերազմից առաջ նրանք հարյուրից՝ 65-ն էին, կամ 65 տոկոսը։ Միջակներն այժմ մոտ 56 տոկոսն են, իսկ պատերազմից առաջ նրանք ընդամենը 20 տոկոս էին, կամ հազարյա յերեք անգամ պակաս այժմյանից։

Պրոլետարիատի դիկտատուրան, խորհրդային իշխանությունը կատեցնում է գյուղի շերտավորումը։ Խորհրդային իշխանությունը սահմանափակում է կուլակների աճումը, չի թույլ տալիս նրանց անսահման կերպով հարստանալ չքավորների և միջակների հաշվին, աջակցում է չքավորներին և միջակներին՝ կուլակների դեմ։

Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ինչպես են վերաբերվում գյուղացությանը

Դեռ ևս 1905 թվի՝ առաջին հեղափոխությունից առաջ ընկ. Լենինը և բոլշևիկների կուսակցությունը վորոշեցին իրենց վերաբերմունքը դեպի գյուղացությունը։

Կուսակցությունն ինչպես միշտ, այժմ էլ գտնում է, վոր գյուղացությունը միատարը չէ, վոր նրանում պետք է տարբերել՝ չքավորությունը, միջակ տարրը և կուլակությունը։

Կուլակը միայն կալվածատերերի և ցարական ինքնակալության դեմ մղվող կռվի մեջ դեռ ևս կարող էր, թեև վատ, բայց այնուամենայնիվ դաշնակից լինել գյուղի չքավորներին ու միջակներին և բանվորներին։ Կուլակին ձեռնտու չէր ազատվել կալվածատերերից, գյուղում սրա անսահման տիրապետությունից, քանի վոր կուլակն ինքն էր մատղվում կալվածատիրոջ հողով հարստանալ և սրանով ավելի պինդ նստել գյուղացու մեջքին։ Բայց հենց այդ հաշվով էլ կալվածատերերի և ցարական ինքնակալության դեմ կուլակը գնում էր շատ զգույշ և շարունակ կռնատակին քար պահելով բանվորների ու գյուղի չքավորության դեմ։ Նա վախենում էր, թե՝ մի գուցե կալվածատերերի հետ միասին իրեն էլ չվռնդեն։ Իսկ յերբ բանվոր դասակարգը՝ գյուղական չքավոր դասի հետ միացած՝ տապալեց վոչ միայն կալվածատերերին, այլև կապիտալիստներին և իշխանությունն իր ձեռքն առավ, այն ժամանակ կուլակը

միանգամից այս նոր խորհրդային իշխանության ամենակատաղի թշնամին դարձավ։ Քաղաքացիական կռվում նա արդեն կալվածատերերին և ցարական գեներալներին միացած, քաղաքի կապիտալիստների հետ միասին բանվորների ու գյուղական չքավորների դեմ էր գնում և միջակին էլ ամեն կերպ դրդում էր նրանց դեմ։ Իսկ, յերբ արդեն խորհրդային իշխանությանը ապալել չհաջողվեց, և սա ամրապնդվեց, կուլակն ամեն կերպ աշխատում է խանգարել բանվոր դասակարգի ազդեցությանն ու դեկավարությանը գյուղում, վորպեսզի բանվորներից և գյուղի չքավորներից անջատի գյուղի գլխավոր միջակ մասսան, նրան իր դեկավարությանը յենթարկի և գյուղը քաշ տա դեպի յետ՝ դեպի կապիտալիզմը։

Ուրիշ է գյուղի չքավորի, այն է՝ տնտեսությունից զուրկ բատրակի և մանր գյուղական տնտեսատեր-չքավորի բանը։ Գյուղացի բատրակը նույնպիսի բանվոր է, ինչպես և քաղաքինը։ Միայն թե բատրակները ցրված են անջատ տնտեսությունների մեջ, ավելի քիչ են կազմակերպված, ավելի քիչ ամբողջացած, խտացած։ Նրանց միշտ էլ ավելի դժվար, քան քաղաքի բանվորներին հավաքել և համախմբվել կուլակների և կալվածատերերի դեմ պայքարելու համար։ Այս պատճառով էլ նրանք ավելի քիչ են յեփված այս կռվում, նվազ փորձված ու դիտակից են, քան քաղաքի բանվորները։ Բայց նրանք միշտ էլ շահագրգռված են յեղել վարձու ստրկությունը վերացնելու։ Սոցիալիզմը նրանց համար, նրանց շահերի տեսակետից, նույնքան հարազատ է, վորքան և քաղաքի բանվորի համար, ուստի նրանք քաղաքի պրոլետարիատի և կոմունիստական կուսակցության առաջին հենակետն են գյուղում։

Մանր, չքավոր գյուղացին կապիտալիստների և կալվածատերերի տիրապետության մեջոցին միշտ էլ կիսատնտեսատեր-կիսաբանվոր էր։ Այս քիչ է. նա շարունակ ավելի շատ վարձու աշխատանքով էր ապրում կուլակի, կալվածատիրոջ, քաղաքի կապիտալիստի մոտ, քան՝ իր տնտեսությունից ստացված յեկամտով։ Այս պատճառով նա յել շարունակ շահագրգռված էր ուրիշի աշխատանքը շահագործողների մոտ վարձու

սարկութիւնը վոչնչացնելու։ Սրա համար էլ բանվոր դասակարգի հետ ձեռք-ձեռքի տված եր գնում կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետութիւնը վոչնչացնելու համար ժղվող կռվի մեջ. իսկ քաղաքացիական պատերազմի ժամանակ բանվոր դասակարգի հետ ընդհանուր շարքերում նա պաշտպանում եր խորհրդային իշխանութիւնը։ Սակայն, չքավոր գյուղացին այնուամենայնիվ մնում եր տնտեսատեր է։ Վարձով աշխատելով կապիտալիզմի ժամանակ և դեռ այժմս էլ, նա միևնույն ժամանակ կապված եր մնում և մնում է իր մանր տնտեսութեանը։ Նրա համար ավելի, քան տնտեսութիւն չունեցող բանվորի համար, դժվար է հրաժարվել իր սեփականութիւնը, իր դաշտը կամ բանջարանոցը, իր ագարակը և խրճիթն ունենալու մտքից։ Նրա համար ավելի դժվար է ըմբռնել, վոր նրա իսկական փրկութիւնը սոցիալիզմն է։ Նա ավելի դժվար և ավելի վատ է յուրացնում այն, թե՝ ինչ է սոցիալիզմը։ Բայց նա, այնուամենայնիվ, յուրացնում է այդ հիմա, խորհրդային իշխանութեան որոք, յուրացնում է ավելի արագ, քան այն գյուղացիները, վորոնց տնտեսութիւնը միշտ էլ ավելի ամուր է յեղել և վորոնք քիչ կամ բոլորովին վարձով չեն աշխատել գյուղում և մանավանդ՝ քաղաքում։ Այժմ նա ավելի ու ավելի յե համոզվում, վոր միայն բանվոր դասակարգի հետ, սրա ղեկավարութեամբ, միայն սոցիալիզմի մեջ լիապես ապահով կլինի աղքատութեան և կուլակի ձեռքում սարկանալու ամեն տեսակի հնարավորութիւններից։

Վ. Ի. Լենինը և մեր կուսակցութիւնը գյուղի չքավորներին շարունակ կոչ էլին անում գնալ բանվոր դասակարգի հետ ձեռք-ձեռքի տալով և շարունակ նրան համարում էլին պրոլետարիատի հուսալի դաշնակից և նեցուկը գյուղում։ Այսպես եր առաջ, ցարական ինքնակալութեան դեմ պայքարելիս և պրոլետարիատի հանուն իշխանութեան մղած պայքարի ժամանակ. այսպես էլ մնում է այժմ՝ սոցիալիզմի շինարարութեան ժամանակ։

Միջակ գյուղացու համար ավելի ևս դժվար է, քան չքավոր-գյուղացու համար, յուրացնելը, վոր սոցիալիզմը նրա հա-

մար միակ յելքն է այն բոլոր փորձանքներից և դժվարութիւններից, վորոնք կապված են նրա՝ վորպես մանր գյուղատնտեսատիրոջ, դրութեան հետ։ Նրա տնտեսութիւնը մի քիչ ավելի խոշոր ու ամուր է, քան չքավորի տնտեսութիւնը. ուստի նա ավելի ևս ամուր է կապած այդ տնտեսութեանը։ Առաջ, ինչպես և հիմա, միջակների շրջանից առանձին գյուղացիներ ջանք են թափում ուրիշի աշխատանքով գյուղական հարուստ դառնալու։ Այս հանգամանքը թե՛ առաջ և թե այժմ միջակ գյուղացութեանը խարում, նրան հուսա է ներշնչում, թե առանց սոցիալիզմի յել ամեն մեկը կարող է բարձրանալ և լիակատար ապահով ապրուստի աղբ դառնալ։ Այն ինչ իրոք, ինչպես մենք արդեն դիտենք նախորդ զրույցներից, այս լինել չի կարող։

Կապիտալիստների և կալվածատերերի տիրապետութեան միջոցին միջակ գյուղացին ստիպված իր յերկուսից մեկն ընտրել՝ կամ գնալ կապիտալիստների և կալվածատերերի հետ սրանց դեմ կռվող բանվոր դասակարգի դեմ. այս դեպքում ավելի պինդ սղվել այն լուծը, վոր կալվածատերն ու կապիտալիստը գյուղացու վզին են դրել. կամ՝ բանվոր դասակարգի հետ միասին կալվածատերերի ու կապիտալիստների դեմ գնալ։ Միջակ գյուղացութիւնը յերկրորդ ուղին ընտրեց։ Նա բանվորների հետ, սրանց ղեկավարութեամբ, տապալեց կալվածատերերին։ Այս հարկավոր եր միջակ գյուղացիներին, վորպեսզի կալվածատերերի լուծը թոթափեն և նրանցից հողը խլեն։ Սակայն, այս կարելի յեր անել միայն այն ժամանակ, յերբ գյուղացութեան կռիվը կալվածատերերի դեմ միացված եր բանվոր դասակարգի կռվին՝ կապիտալիստների դեմ. կարելի յե անել միայն իշխանութիւնը թե՛ մեկից և թե մյուսից խլելով։ Սրա համար էլ միջակ գյուղացութիւնը վոչ միայն չեր խանգարում, վոր բանվորները և սրանց հետ միացած գյուղական չքավորները իշխանութիւնը խլեն, այլ և հատակրութեամբ եր վերաբերվում դեպի այս։

Քաղաքացիական պատերազմի ժամանակ էլ միջակ գյուղացու առջև յերկու ճանապարհ կար. մեկը՝ ծանր, զոհաբերութեամբ լի մի ճանապարհ՝ ընդդեմ հակահեղափոխութեան. մյու-

սը՝ հեղափոխության դեմ, խորհրդային իշխանության դեմ կըռվի ճանապարհը։ Կռվի և զոհերի ծանրությունը շփոթեցնում եր միջակ գյուղացությանը։ Նա շատ անգամ տատանվում եր. հաճախ պատահում եր, որ շատ տեղերում նրա մի մասը դուրս եր գալիս բանվորների դեմ, անցնելով կապիտալիստների և հենց իրենց վոխերիմ թշնամի կալվածատերերի կողմը։ Այս փորձը նրան հաժոդեց, թե վորտեղ են նրա իսկական բարեկամները ու թշնամիները. և նա շուտով անցավ բանվորների ու գյուղի չքավորների շարքերը։ Ընդհանուր ուժերով, բանվոր դասակարգի ղեկավարությամբ թշնամուն հաղթեցին։ Միջակ գյուղացությունը սրանից ևս շահվեց այնպես, ինչպես և Հոկտեմբերյան հեղափոխությունից. 1917 թվի Հոկտեմբերին բանվորների ու գյուղացիների ուսից դեն գցած լուծը կալվածատերերն ու կապիտալիստները կրկին դնել չկարողացան վոչ բանվորի, վոչ գյուղացու վրին։

Հիմա յել, ՆԵՊ-ի ժամանակ, միջակ գյուղացության առաջ յերկու ճանապարհ կա։ Մի ճանապարհն՝ կուլակի և քաղաքի նեպմանի հետ ե, սրանց ղեկավարությամբ։ Այս ճանապարհը յետ ե տանում դեպի կապիտալիզմը, նորից կալվածատերերի տակ։ Մյուս ճանապարհը՝ կրկին բանվոր դասակարգի հետ, նրա ղեկավարությամբ։ Սա կոոպերացիայի միջոցով տանում է դեպի սոցիալիզմ. այս ճանապարհը ընդհանուր ե գյուղի չքավորության հետ։ Միջակ գյուղացին այժմ այլևս չի տատանվում իշխանությունն ընտրելիս։ Նա փորձով արդեն դիտե, վոր խորհրդային իշխանությունը նրա համար ամենալավ իշխանությունն ե։ Ամենորյա փորձով, որ ըստ որե, նա համոզվում ե, վոր այդ ե ուղիղ ճանապարհը, վոր գյուղը տանում դեպի սոցիալիզմ։ Նա ավելի դանդաղ ե համոզվում, քան գյուղի չքավոր մասը. բայց համոզվում ե նույնպես հաստատ, վորովհետև կոոպերացիան և սրա շուրջը համախմբվելը, նրան ել նոյնքան ձեռնտու յե և հարկավոր, վորքան և չքավոր գյուղացուն։

Այս պատճառով Վ. Ի. Լենինը և նրա հետ միասին ամբողջ մեր կուսակցությունը դեռ ևս VIII կուսհամագումարում, 1919 թվին, ասել են, վոր միջակ գյուղացին, վորը պրո-

լետարիատի և գյուղի չքավոր դասի դաշնակիցն եր ցարական ինքնակալության և կալվածատերերի դեմ վարած կռվի մեջ, նույնպիսի դաշնակից ել կմնա սոցիալիզմի շինարարության ժամանակ։ Կուսակցության և խորհրդային իշխանության ամբողջ քաղաքականությունն, այս ժամանակից սկսած, այս միտքյան վրա յե նախագծված։ Սրա վրա յեր նախագծված, ինչպես դիտենք նախորդ զրույցից, նաև նոր տնտեսական քաղաքականությունը։ Կուսակցության XIV համագումարը, այս հարցը քննելով նոր հանգամանքներում, այն ե՝ մեր տնտեսության վերելքը ՆԵՊ-ի հինգ տարում, կկ-ի հաշվետվության առթիվ իր բանաձևում VIII համագումարի այս ցուցմունքը հաստատեց հետևյալ խոսքերով.

«Եթե չքավոր դասը յեվ, առենից առաջ, բատրակները պրոլետարիատի նեցուկն են գյուղում, ապա՝ միջակը հանդիսանում ե յեվ պետք ե հանդիսանա նրա հաստատուն դաշնակիցը»։

Այս խոսքերով XIV համագումարը պատասխանեց ոպպոզիցիային, վորոնք համագումարում հանդես ելին յեկել մեծամասնության դեմ իրենց գլուխն ունենալով ընկ. ընկ. Զինովյեվին և Կամենևին։ Ընկ. Զինովյեվը համագումարից քիչ առաջ, իր հոդվածներում ասում եր, վոր պրոլետարիատի դաշնակիցը միայն գյուղի չքավորությունն ե։ Համագումարում ոպպոզիցիան, ամբողջ համագումարի ճնշման տակ, արդեն չեր հերքում միջակ գյուղացության հետ դաշնակցելու անհրաժեշտությունը, բայց այդ դաշինքին յետին տեղն ելին տալիս, վորպես մի յերկրորդական, անկարևոր բան։ Ոպպոզիցիան մերթընդմեջ եր այս դաշինքի ահագին նշանակությունը, չնայած վոր միջին գյուղացությունն ամբողջ գյուղացության, կեսից ավելին ե։ Առանց գյուղի այս մեծամասնության, պրոլետարիատը վոչ ինքը՝ և վոչ ել չքավոր գյուղացության հետ միասին սոցիալիզմ կառուցել չի կարող։ Առանց գյուղացության այդ հիմնական մասսայի հետ միանալու՝ մի քայլ անգամ առաջ գնալ չի լինի նույնպես և քաղաքում և գյուղում մեր տնտեսության հասարակ բարձրացման մեջ։ Ուստի XIV համագումարը վճռականապես դատապարտեց բանվոր դասակարգի և

գյուղի չքավորության՝ միջակ գյուղացության հետ դաշնակցելու նշանակությունը նսեմացնելու ամեն մի քայլ։ Այս դեռ քիչ է. նա ցույց տվեց, որ նրանք, ովքեր նսեմացնում են այս նշանակությունը, շատ ավելի վնասաբեր և վտանգավոր գործ են կատարում, քան այն շատ փոքրաթիվ կուսակցականները, որոնք չեն նկատում կամ նսեմացնում են կուլակային վտանգը։

Կուլակային վտանգը

Օպպոզիցիան կուլակային վտանգի մասին շատ և համառ էր խոսում XIV համագումարում։ Յեթե հավատայինք նրանց, ապա դուրս կգար, թե կուլակն արդեն գյուղը բոլորովին իր ձեռքին է պահում. որ նա գյուղատնտեսության մեջ գլխավոր ցանողն է և շուկայում հացի գլխավոր վաճառողը։ Դուրս կգար, որ նրանից է կախված մեր հացամթերման, մեր հացի արտահանման բախտը. իսկ քանի որ արտահանման միջոցով մենք փող ենք ստանում, օրինակ մեքենաներ գնելու համար, ապա ուրեմն, կուլակից է կախված՝ արդյունաբերության համար մենք մեքենաներ կունենանք թե ոչ։ Մի խոսքով, յեթե օպպոզիցիային հավատանք, ապա՝ կուլակն արդեն տեր ու տնօրն է մեր յերկրում, և մենք ընկել ենք նրանից կախման վիճակի մեջ.

Իսկ մյուս կողմից, ինչպես հենց հիմա հիշեցինք, կան առանձին, շատ քիչ ընկերներ, վորոնք կուլակների գոյությունը չեն նկատում, նվազեցնում են նրանց նշանակությունը և հավատացնում, թե մեզ մոտ էյապես, կուլակներ չկան։

Ո՞վ է արդարացին։ Ամեն մի գյուղացի՝ չքավոր և միջակ, կասի, վոր անարդարացի յեն թե սրանք և թե մյուսները։

Ճիշտ է, վոր կուլակն ավելի հզոր ու առաձնավոր է դառել ՆԷՊ-ի ժամանակ, քան ռազմական կոմմունիզմի որոք։ Վ. Ի. Լենինը և ամբողջ կուսակցությունն այս նախատեսնում եյին դեռ ևս 1921 թվին, յերբ վորոշվեց նոր տնտեսական քաղաքականությանն անցնել. Նրանք ասում եյին, վոր ՆԷՊ-ի վտանգներից մեկն էլ այս է։ Յեվ մենք արդեն գիտենք, վոր այն ժամանակ էլ Վլադիմիր Իլյիչն ասում եր, վոր այդ վտանգը մեզ սարսափելի չէ։

Գիտենք նաև՝ թե ինչու յեր նա այսպես ասում։ Միթե

նա սխալվել է. և իրոք վոր կուլակն արդեն տիրապետել է գյուղին։

Մենք այս զրույցում արդեն թվական տվյալներ ենք բերել գյուղացության շերտավորման մասին 1924—25 թ. և տեսել, վոր իսկական ակնհայտ կուլակները մեզանում մոտ 3 տոկոս են կազմում։

Այժմ բերենք ավելի մանրամասն աղյուսակ, վորպեսզի ապացուցենք, թե ցանքի և բանվոր անասունների վո՞ր մասն է ընկնում չքավորներին, միջակներին, ունևորներին և կուլակներին, և գյուղացական այս խմբակներից յուրաքանչյուրը հացի վո՞ր մասն է շուկա բերում։

Տնտեսություններ	Ամբողջ ցանքսից նրանց մասը		Շուկա հանված հացը	Բանվոր անասունները
Չքավոր . . .	$41^0/_0$	$14,4^0/_0$	$23,7^0/_0$	$23,1^0/_0$
Միջակ . . .	$56^0/_0$	$70,1^0/_0$	$47,8^0/_0$	$66,9^0/_0$
Կուլակ և ունևոր	$3^0/_0$	$15,5^0/_0$	$28,5^0/_0$	$10,0^0/_0$

Ի՞նչ է ասում այս աղյուսակը։ Կուլակներ կան. նրանց ձեռքին է ամբողջ ցանքսի $15,5^0/_0$-ը (այսինքն՝ գյուղացիների ցանքսի յուրաքանչյուր հարյուր դեսյատինից $15^1/_2$ դեսյատինը), գյուղի բոլոր բանվոր անասունների $10^0/_0$-ը (կամ մի տասնը), գյուղի բոլոր բանվոր անասունների $10^0/_0$-ը (կամ մի տասներորդականը)։ Կուլակներն են ծախում ամբողջ գյուղացական հացի $28,5^0/_0$-ը (այսինքն՝ յուրաքանչյուր 100 փթից $28^1/_2$ փութը) շուկայում։

Նշանակում է՝ չի կարելի լռել կուլակի մասին, գյուղում և շուկայում նրա խաղացած դերի մասին։ Սակայն արդյո՞ք շատ մեծ է նրա դերը։ Այնքա՞ն սարսափելի յեն կուլակները, վոր կարելի լինի ասել, թե նրանք զոր են անում գյուղում։ Դարկարելի չյալ՝ վոչ։ Այս աղյուսակը պարզ ասում է, թե ում ձեռքին են ցանքերի, բանվոր անասունների և շուկա հանվող հացի գլխավոր մասը։ Միջակների ձեռքին։

Այս ավելի լավ պարզելու համար, մեկ էլ դիտենք աղյուսակը։

Ինչ յեզրակացություն կարելի յե հանել սրանից։ Այն՝ որ մեզ մոտ կուլակի վտանգը կա։ Այս թագցնել չի կարելի, վտանգավոր ե. պետք ե բաց աչքով նայել նրան։ Բայց չի կարելի նույնպես այդ վտանգի համար «հավար» կանչել, ինչպես այդ անում եր ոպպոզիցիան XIV համագումարում։ Գյուղի գլխավոր գեմքը միջակն ե։ Իսկ յեթե միջակ ու չքավոր արտեսությունները միասին վերցնենք, դուրս կգա, որ սրանց ձեռքին են՝ ցանքերի $84^1/_2$ տոկոսը, բանվոր անասունների 90 տոկոսը։ Մի՞թե պարզ չի, որ միջակն ու չքավորը կոոպերացիայի մեջ համախմբվելով, խորհրդային իշխանության, պետական արդյունաբերության, պետական վարկի ոգնությամբ կարող են հաղթել և հաղթելու յեն, վտարելու յեն կուլակին։

Սրա համար հարկավոր ե (ինչպես այժմ արվում ե), որ գյուղի կուսակցական կազմակերպությունները իրենց և խորհուրդների ղեկը հանձնեն գյուղի չքավոր դասը, կազմակերպեն նրան, և որ ինքը՝ չքավոր մասը, միջակ գյուղացությունը կազմակերպվելով իր կողմը գրավի և կուլակների դեմ գնա։ Սրա համար հարկավոր ե հենց այն, ինչը որ ոպպոզիցիան XIV համագումարում յեղին շարքն եր գցում, այն ե՝ *բանվորների յեվ գյուղի չքավորների ամուր միությունը միջակ գյուղացության հետ։*

Ուստի XIV համագումարի բանաձևում ասված ե. «Կռիվը կուլակների դեմ պետք ե գնա ինչպես չքավորներին կազմակերպելով կուլակի դեմ, նույնպես և պրոլետարիատի ու չքավոր գյուղացության դաշինքը միջակ գյուղացության հետ ամրապնդելով, որպեսզի միջակ գյուղացությունը կուլակից պոկենք և կուլակին չեզոքացնենք»։

Հողի վարձակալությունը յեվ վարձու աշխատանքը գյուղում

Վախը կուլակից, որի մեջ ընկել եյին ոպպոզիցիոն ընկերները XIV համագումարում, ստիպեց նրանց մի ուրիշ սխալ ել անել, որը կարող ե միջակ գյուղացուն խելքից հանել։ Ոպպոզիցիայի ղեկավարները, նրանց թվում և ընկ. Կամենևը, անձամբ մասնակցում եյին XIV կուսակցական կոնֆերենցիային և այնտեղ ձայն եյին տալիս կոնֆերենցիայի

որոշմանը՝ գյուղում հողի վարձակալության և վարձու աշխատանքի իրավունքների ընդլայնման մասին։ Իսկ XIV կուսհամագումարում արդեն ընկ. Կամենևն ասում եր, որ սա մի դիջումն եր կուլակին։ Հապա իսկապես ում շահերի համար եր այս բանաձևը հանում XIV կուսկոնֆերենցիան։

Հեղափոխությունից առաջ հողերի մեծագույն և լավագույն մասը կալվածատերերին եր պատկանում. այս հողը վարձակալում եր գյուղացին, վճարելով ահագին փողեր և վորքան ազքատ եր նա, այնքան ավելի յեր վճարում։ Մեզ մոտ, համարյա, ամբողջ հողը գյուղացիներն են ոգտագործում։ Ինքը՝ գյուղացին ե վարձակալման տալիս այն, յերբ ինքն անձամբ չի կարողանում մշակել։ Տալիս ե սովորաբար չքավորը, իսկ վարձակալում ե ունևորը։ Յերբ վարձակալությունն որենքով արգելված եր, չքավորը, ինչևույնն ե, ստիպված եր լինում իր հողը վարձակալությամբ տալ գաղտնի, ապօրինի ձևով։ Կուլակը դրանից ոգտվում եր և, համարյա թե, ձրի վերցնում հողը։

Պարզ ե, որ վարձակալման արգելքից ավելի շատ չքավորն եր տուժում, իսկ կուլակը՝ ոգտվում։ Նույնը և վարձման նկատմամբ։ Վարձու աշխատանքը գյուղում արգելված եր։ Բայց գյուղի չքավորն ու բատրակը ուժ չունեն իրենց հողը մշակելու և աշխատանք են փնտռում։ Բազաքում բանվորների պահանջ չկա, ուստի չքավորներն ստիպված են լինում վարձվել կուլակի մոտ, աշխատանք վորոնել գյուղում։ Կուլակը, վարձու աշխատանքի արգելքից ոգտվելով, նրան կոպեկներ ե վճարում, կամ թե, հենց ենպես, «հացփորի» պահում։

Վարձակալության և վարձման արգելումը չքավորներին անձեռնտու բան եր։ Պետության համար միանգամ չկա և ձեռնտու չե չքավորին նեղել և կուլակին հնարավորություն տալ չափից և որենքից դուրս հարստանալու։ Արգելումից դժգոհ եր նաև միջակը։ Արգելումը խանգարում եր նրան իր անտեսությունը զարգացնել ու լավացնել այն դեպքերում, յերբ նա հողի կամ բանվոր ձեռքերի կարիք եր զգում։ Վարձակալության և վարձման լուծումը միջակին ել ե ձեռնտու։

Կուսակցությունը XIV կոնֆերենցիայում վճռեց, որ վար-

ձակալության և վարձման գոյություն ունեցող նեղումները ձեռնտու չեն չքավորին և միջակին, ուստի և այդ պետք է վերացնել։ Կոնֆերենցիան այսպես վորոշեց նաև այն պատճառով, վոր այդ նեղումները զնասակար ազդեցություն են ունենում գյուղատնտեսության վրա։ Նրանք խանգարում են ցանքերն ընդարձակելուն։ Քիչ լինեն ցանքերը, գյուղատնտեսության արդյունքները քիչ կհանվեն շուկա, քիչ կզարգանա ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև։ Իսկ մենք արդեն յերրորդ և չորրորդ զրույցից գիտենք, թե ինչպես ապրանքային շրջանառության զարգացումը բարձրացնում է ամբողջ գյուղատնտեսությունը և պետական արդյունաբերությունը, թե ինչպես նա ամրապնդում է կապը նրանց միջև։ Մենք գիտենք, վոր աշխույժ ապրանքաշրջանառությունը քաղաքի ու գյուղի միջև ավելի ուժեղ թափով է հրում գյուղի չքավոր և միջակ գյուղացությունն իրենց ապրանքները միատեղ վաճառքի հանելու, միատեղ մեքենաներ գնելու, մի խոսքով կոոպերացիային մասնակցելու. այսինքն՝ վերջին հաշվով, ապրանքաշրջանառությունն ոգնում է անտեսությունների համախմբման ուղիին անցնելու։

Այժմ մենք տեսնում ենք, վոր կուսակցության վորոշումը վարձակալության և վարձման մասին զիջումն չեր կուլակին։ Նա ընդունվել է ի շահ աշխատավորների և ի շահ մեր ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման, վորը կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ուղղում են դեպի սոցիալիզմ։

Հասկանալի յե, վոր վարձակալության և բատրակների վարձման իրավունքի ընդլայնումից կուլակն ել է շահում։ Բայց չե՞ վոր ամբողջ ՆԵՊ-ից ել շահվում է, որինակ, մասնավոր առևտրականն ու այն կապիտալիստը, վորը պետությունից վարձակալում է ֆաբրիկան կամ գործարանը։ Սակայն, մենք չենք ասում, թե ՆԵՊ-ը մասնավոր առևտրականների ու կապիտալիստների համար է մտցրած, Մենք գիտենք, վոր նա նրա համար է մտցրած, վորպեսզի բանվոր դասակարգը գյուղի չքավոր և միջակ գյուղացության հետ միասին միասնական ճակատով կարողանան առաջել դեպի սոցիալիզմը։

Կուլակն առիթը ձեռքից բաց չի թողնում հարստանալու։ Նա ամեն բանից ոգտվում է այդ անելու համար։ Բայց կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն աչալուրջ հրսկում են կուլակին։ Կուլակների տուրքերն ավելացնելով խորհրդային իշխանությունը սահմանափակում է կուլակի հարբսատացումը. իսկ նրանից վերցրած տուրքերը գյուղի չքավոր ու միջակ գյուղացության պետքերին է ծառայեցնում, նրանց տնտեսությանն ոգնում, պետական արդյունաբերության զարգացմանն ոգնում։ Բատրակներին կուլակից նա պաշտպանում է աշխատանքի պաշտպանության որենքներով։ Նա ամեն միջոցով չքավոր ու միջակ գյուղացությանը պաշտպանում է կուլակի դեմ։

Չքավորների կազմակերպումը յեվ ոգնությունը՝ նրանց ու միջակների՝ կուլակների դեմ կռվելու համար

Կուլակության դեմ հաջող պայքարելու համար կուսակցությունը մի շարք միջոցներ է առաջադրում.

Առաջին միջոց.— Կուսակցությունն ոգնում է բատրակներին խմբվել և արհեստակցական միություն կազմել (գյուղատնտեսության և անտառային բանվորների միություն) և նրա միջոցով իրենց շահերը պաշտպանել, կուլակային շահագործման դեմ կռվել։ Վորպեսզի կռիվը ավելի հաջողակ լինի, կուսակցությունն առաջարկում է այդ միությանն ամուր պահել կապն արդյունաբերական բանվորների միությունների հետ, վորոնք, իրենց մեծ փորձառության շնորհիվ, կարող են խորհուրդներով և գործով ոգնել։ Ինքը կուսակցությունն է դեկավարում գյուղատնտեսական և անտառային բանվորների միությունը, ինչպես և բոլոր արհեստակցական միությունները։

Յերկրորդ միջոցը.— Մորհուրդների աշխուժացումն է՝ բատրակներին, գյուղի չքավորներին ու միջակներին աշխատանքի գրավելով կուսակցության դեկավարության ներքո։ Պետք է լավագույն գյուղացիներին պատասխանատու աշխատանքների համար առաջ քաշել խորհրդային բոլոր որգաններում, գյուղխորհրդից սկսած և Ա. Ս. Հ. Մ-թյան Կ. Գ. Կ-ով և Ժողկոմխորհով վերջացրած։ Այժմ ել մեզ մոտ չկա մի այն-

պիսի գավառային, շրջանային կամ նահանգական գործկոմ, վորտեղ գործկոմի գյուղացի անդամներ չլինեն։ Սովորաբար գյուղից առաջ քաշած գյուղացիներն ու գեղջկուհիները ղեկավարում են գործկոմի այնպիսի բաժիններ, ինչպիսի յեն՝ հողային, տուրքային և այլն, առանձնապես այնպիսիները, վորոնք գյուղին են սպասավորում։ Պետք է շարունակել և ուժեղացնել լավագույն չքավորների ու միջակների այդ առաջ քաշելը։

Չքավորներն ու միջակները գյուղխորհրդի շուրջը չքավորների խմբակներ են կազմակերպում և կուսակցության (բջիջի, շրջկոմի) ղեկավարությամբ ակտիվ աշխատանք տանում, ոգնում և լրացնում գյուղխորհրդի գործը։ Չքավորների այս հավաքույթներին մասնակցելու յեն հրավիրվում անպայման նաև միջակները, վորպեսզի նրանց հետ միասեղ պաշտպանեն իրենց ընդհանուր շահերը և՛ գյուղխորհուրդներում, և՛ կոոպերատիվում ու գյուղիսկոմներում նույնպես և միասեղ նրանք խորհրդակցում ու իրենց թեկնածուներն են անցկացնում բոլոր ընտրություններին։

Յերրորդ միջոցն այն է, վոր խորհրդային իշխանության այն բոլոր որենքներն ու կարգադրությունները, վորոնք չքավորների շահերի պաշտպանության են վերաբերում, խստորեն կիրառվեն կյանքում և վոչ վոքի կողմից չխախտվեն։ Կուսակցությունն աչալուրջ հետևում է այս բանին և հատուկ ուշադրություն է դարձնում գյուղում հեղափոխական որինականության պահպանելու համար։ Հաճախ պատահում է, վոր չքավոր գյուղացությունը չի իմանում այն արտոնությունների ու այն ոգնության մասին, վոր նրան տրված է և ցույց է տրվում խորհրդային իշխանության դեկրետների համաձայն։ Մենք գիտենք, թե ինչպես, հաճախ, չքավոր գյուղացիները չեն ոգտագործում իրենց տրված արտոնությունները տուրքերի, հողաշինարարության և այլ բաների վերաբերյալ։ Չքավորների շատ մեծ թիվ բոլորովին ազատվում է տուրքից, կամ նրանց տուրքն իջեցվում է մինչև կեսը կամ սրանից էլ ավելին։ Այս տարի մեզ մոտ տուրքը յեկամտային-առաջադիմական է. այս նշանակում է, ով ավելի

հարուստ է, նա յել ավելի շատ է վճարում։ Անցյալ տարի ամենամանր տնտեսությունները վճարում եյին իրենց յեկամտի 4%-ը, իսկ ամենահարուստները՝ 12%-ը։ Տուրքերից բոլորովին ազատված եր 5 միլիոն տնտեսություն։ Նոր տուրքերի հաշվով ամենաթույլ տնտեսությունները վճարում են միայն 2%-ը, իսկ հարուստները մինչև 20%-ն իրենց տնտեսությունից։ Տուրքերը մտնում են խորհրդային գանձարանը և ծախսվում չքավորներին ոգնելու և գյուղացական տնտեսությունը բարելավելու։ Պետք է ուշադրությամբ հետևել, վոր կուլակը մեր խորհրդային որենքները չոգտագործի հոգուտ իրեն և ի վնաս չքավորի և միջակի։ Սրա համար էլ կուսակցությունն ու կոմյերիտմիությունը հատկապես են չքավորին և միջակին և նրբանց շահը պաշտպանում ամեն տեղ՝ թե կուլակի հետ դատվելիս, թե խորհուրդներում և թե հողաշինարարության ասպարիզում։

Ընկ. Ստալինն այսպիսի հրահանգ է տալիս կոմյերիտմիությանը.

«Կոմյերիտմիության ակտիվը գյուղում հեղափոխական որինականության պահակը պիտի լինի։ Նա աչքի պես կանգնած պիտի լինի գյուղի չքավորության թիկունքին»։

Չորրորդ միջոցը կոոպերացիայի աշխատանքն է։ Կոոպերացիայի մեջ ավելի շատ գրավել չքավորներին, ոգնել պերացիայի մեջ ավելի շատ գրավել չքավորներին, ոգնել սրանց գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի փայսրանց գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի փայրը մուծելու։ Չքավորներին ու միջակներին վարկ տալիս վճարրը մուծելու։ Չքավորներին ու միջակներին վարկ տալիս վճարման ժամկետները յերկարացնել և այդ վարկի ապահովման պայմանները հեշտացնել։

Չքավորների շահերին ավելի լավ սպասավորելու համար կազմակերպվում են զանազան ձեռնարկություններ, ինչպես՝ պրոկատային պունկտեր և այլն։

Կոոպերացիայի աշխատանքի շուրջն էլ կազմակերպվում են չքավորների խմբակներ, վորպեսզի չքավորները միջակներին իրենց շուրջը համախմբելով՝ կենդանի մասնակցություն ունենան իրենց կոոպերատիվի աշխատանքի մեջ, թույլ չտան, վոր նրա մեջ կուլակները ղեկավոր դեկավարներ դառնան, և

կուլեն հափշտակությունների (хищение) և այլ անկարգությունների դեմ։

Հինգերորդ միջոցը վերաբերում է կոլլեկտիվ տնտեսությունների շինարարությանը, այսինքն՝ գյուղատնտեսական կոմմունաների, արտելների և զանազան ընկերությունների կազմակերպմանը և կարգավորմանը։ Խնդիրը նրանումն է, վոր չքավորների և միջակների այդ համախմբումներն իրենց հարկավոր վարկն ստանան և արագ կերպով ու արտոնյալ պայմաններով մեքենաներ, գութաններ և տրակտորներ ստանան։

Սակայն, ոգնելով կոլտնտեսություններին, կուսակցությունը նրանցից ակտիվ ոժանդակություն և ոգնություն է պահանջում իրենց հարևան գյուղացիների նկատմամբ։ Հարկավոր է նույնպես և ուժը ներածին չափ ոգնության գալ աշխատանքային մանր արտելներին և զանազան ընկերություններին, այդպիսիները կազմակերպելով չքավորների և միջակների շրջանից։

Այսպիսի միջոցներով, այսպիսի յեղանակներով կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ոգնում են չքավորներին և միջակներին գյուղատնտեսության շինարարությունը տանել իրենց, այսինքն՝ չքավորների ու միջակ գյուղացիների շահերին համապատասխան և հոգուտ բանվոր դասակարգի հետ դեպի սոցիալիզմը տանող ընդհանուր շարժման։ Կուսակցության և խորհրդային պետության քաղաքականությունն ուղղված է մեր գյուղի հիմնական զանգվածը կազմող չքավոր և միջակ գյուղացության շահերի պաշտպանությանը։ Խորհուրդներն ու կուսակցությունը բոլոր հարկավոր միջոցները ձեռք են առնում թույլ չտալու, վոր կուլակը շահագործի չքավորին ու միջակին։ Մեր որենքները պաշտպանում են չքավորներին կուլակային ստրկացումից, չեն թույլ տալիս կուլակների զորն ու կամայականությունը բատրակների նկատմամբ։ Այսպես, որինակ, չքավորների ու միջակների՝ կուլակների հետ կապած այն պայմանագրերն ու գործարքները, վորոնք ստրկացուցիչ են, առաջինների համար ապորինի յեն ճանաչվում ու քանդվում են, և շահագործող կուլակը խիստ պատասխա-

նատվության է յենթարկվում։ Ցարական, բուրժուական, կալվածատիրական կառավարությունը կապիտալիստների ու կուլակների շահն եր պաշտպանում։ Խորհրդային իշխանությունը, վորը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքին և կուսակցության ղեկավարության տակ, ամուր կանգնած է վորպես պահակ բանվորների, գյուղի չքավորների ու միջակ գյուղացության շահերի՝ ընդդեմ սպեկուլյանտի ու կուլակի։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՋՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼԵՆԻՆԸ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԱՅՐԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նայեցեք Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. քարտեզին։ Վոլոգդայից դեպի հյուսիս, Ռոստովից Դ/Վ և Սարատովից դեպի հարավարևելք, Որենբուրգից և Ոմսկից դեպի հարավ, Տոմսկից դեպի հյուսիս, ընկնում են անսահման տարածություններ, վորտեղ տասնյակ կուլտուրական հսկայական պետություններ կտեղավորվեյին։ Յեվ այդ բոլոր տարածությունների վրա թագավորում է նահապետականությունը (հնագույն տնտեսությունը), կիսավայրենությունը և ամենաիսկական վայրենությունը։ Հապա մնացյալ Ռուսաստանի գյուղացական յետամնաց անկյուններում։ Ամենուրեք, վորտեղ գյուղը տասնյակ վերստեր ընկնող գյուղամիջային ճանապարհներով կամ ավելի ճիշտ, տասնյակ վերստեր հեռու, առանց ճանապարհների ընկած է յերկաթուղուց, այսինքն՝ զրկված է նյութական կապ պահպանելուց կուլտուրայի, կապիտալիզմի, խոշոր արդյունաբերության, մեծ քաղաքի հետ։

Մի՞թե այս բոլոր վայրերում ել ամենուրեք դարձյալ նահապետականությունը (հնագույն տնտեսությունը), աբլոմովշչինան (ծուլությունը), կիսավայրենությունը չի՞ թագավորում։

Մեր պարտականությունն է — ասում եր Իլյիչը — այնպես անել, վոր ամենահետընկած արտադրությունը, այն է յերկրագործականը, գյուղատնտեսականը, նոր ռելսերի վրա դրվի, վորպեսզի այն վերակազմակերպենք և հողագործությունը՝ ան-

գիտակից, հնի ձևով տարվող զբաղմունքից վերածենք մի այնպիսի զբաղմունքի, որը հիմնված է գիտության և տեխնիկայի նվաճումների վրա։

Չի կարելի ապրել հնի ձևով, այնպես, ինչպես ապրում էինք պատերազմից առաջ. մարդկային ուժի ու աշխատանքի այդպիսի հավաքականության, որպիսին կապված է մանր, առանձնացած գյուղատնտեսության հետ, այլևս շարունակել չի կարելի։ Աշխատանքի արտադրողականությունը կրկնակի, չեռակի կբարձրանար. մարդկային աշխատանքը էներգրագործության և մարդկային տնտեսության համար կըրկնակի, չեռակի չափով կտնտեսվեր, եթե այս ժամանակված, մանր տնտեսություններից անցումն կատարվեր դեպի հասարակական տնտեսությունը։

14-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԴՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ, ՆԿ-Ի ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՌԱՆԱՉԵՎԻ ՄԵՋ, ԱՍՈՒՄ Է, ՎՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

... Աջակցել գյուղատնտեսության զարգացմանը և առաջ մղել նրան էներգրագործական կուլտուրայի բարձրացման, տեխնիկական միջոցների զարգացման, էներգրագործական տեխնիկայի բարձրացման, (գյուղատնտեսության տրակտորիզացիա, ինդուստրալիզացիա. հողաշինարարության գործի կարգավորումն) և գյուղատնտեսության կոլեկտիվիզացիայի բազմազան ձևերին աջակցելու գծով։

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՆԻՆԸ 1914 ԹՎԻՆ ԳՐՈՒՄ ԷՐ

Բուրժուազիայի շահերը պահանջում են խառնել գյուղական պրոլետարիատը գյուղական բուրժուազիայի հետ։ Պրոլետարիատի շահը պահանջում է կռվել այդպիսի շփոթման դեմ. նա պահանջում է ամեն տեղ, սրանց թվում նույնպես և գյուղացության շրջանում, դասակարգի պարզ ու վորոշ տարազատումն։ Ջուր է ինքն իրեն և ուրիշներին խաբելը։ «Գյուղացության» մասին դատելիս՝ պետք է ինքներս սովորենք և գյուղացիներին

սովորեցնենք այն բանին, թե գյուղացության մեջ ել որեցոր ավելի ու ավելի չէ խորանում անդունդը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։

ԼԵՆԻՆԸ ՄԻԶԱԿԻ ՄԱՍԻՆ

Միջակ գյուղացին կանգնած է հարստի և պրոլետար միջև, դրա համար ել նա միջակ է կոչվում։ Նրա ապրուստն ել միջակ է։ Լավ տարին նա իր տնտեսությունը ծայրը ծայրին հասցնում է, սակայն կարիքը միշտ կանգնած է նրա կռնակին։ Ինայողություն՝ կամ բոլորովին չունի, կամ շատ քիչ ունի։ Այս պատճառով ել նրա տնտեսությունը խախուտ է։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ, ԲԱՑԱՌԱԿԻ, ՄԻՋԱԿԻ ՑԵՎ ԿՈՒԼԱԿԻ ՄԱՍԻՆ

Դասակարգերի փոխհարաբերությունների ամպարիշտում համագումարը նշում է հետևյալ գլխավոր յերևույթները, վորոնք իրենց հիմունքում վորոշվում են ԽՍՀՄ տնտեսական զարգացմամբ, դրանք են՝ արդյունաբերական պրոլետարիատի աճումը, կուլակների ուժեղանալը գյուղում, նոր բուրժուազիայի աճումը քաղաքում, բոլոր դասակարգերի ու դրուպպաների ակտիվության վերելքը մեր յերկրում։ Ներկայումս, դասակարգային կռվի հիմնական ձևերից մեկն ել արտահայտության կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարն է. պայքարը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև գյուղացական հիմնական մասսան տիրելու համար։ Հենց այս պայքարն իր քաղաքական արտահայտությունն է գտնում գլխավորապես գյուղի կուլակային տարրերի ջանքերի մեջ՝ միջակ տարրերին նվաճելու և այսպիսով, իր ազդեցության յենթարկելու գյուղի խորհուրդները։

Յեթե չքավոր գյուղացությունը չեվ, ամենից առաջ, բատրակները պրոլետարիատի նեցուկն են գյուղում։ ապա միջակ գյուղացին է չեվ պետք է լինի նրա կայուն դաշնակիցը։ Չի կարելի մի րոպե անգամ մոռանալ, վոր կալվածատիրական հողատիրության վերացման և կալվածատիրական հողերի գյու-

ղացությանն անցնելու հեռանքով, չքավորների կոմիտեների քաղաքականության և գյուղի ապակուլակայնացման հեռանքով և վերջապես, աչքի առաջ ունենալով, որ հողն ապրանքաշրջանառությից վերցվել է (հողի ապգայնացումն) ապա՝ գյուղացության միջակ շերտերը չափազանց ուժեղացել են և այդ շերտերն այժմ, չնայած շերտավորման պրոցեսին, գյուղացության հիմնական զանգվածն են կազմում։ Յեթե այդ մասսան իբրև սերտ դաշնակից չունենանք կամ յեթե բավականանանք այդ շերտերի չեզոքացմամբ միայն, այժմ, պրոլետարական դիկտատուրայի ամրապնդումից հետո, սոցիալիզմ կառուցել չենք կարող։ Որովհետև գյուղում սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին այն է, որ սոցիալիստական պետարդյունաբերության, պետական վարկային հիմնարկությունների և պրոլետարիատի ձեռքին գտնվող այլ իշխող բարձունքների կողմից անտեսության ղեկավարման, ածման ու բարձրացման պարագաներում, կոոպերատիվային կազմակերպության ժԼ գրավի գյուղացության հիմնական մասսան և այս կազմակերպության սոցիալիստական զարգացումն ապահովի, ոգտագործելով, հաղթահարելով և վտարելով նրա կապիտալիստական տարրերը։ Այս պատճառով, միջակ գյուղացության ածն ու թերագնահատումն, նրա բացառիկ կարևոր դերը չըմբռնելը, կուսակցությունը միջակ գյուղացության հետ ամուր դաշնակցելու լոզունգից դեպի սրան չեզոքացնելու հնացած լոզունգը թեքելու փորձերը, «վախը միջակից»—այս բոլոր օբյեկտիվորեն ատնում են դեպի պրոլետարական դիկտատուրայի խորտակումը, քանի որ հենց սրանով պատակավում է բանվորագյուղացական բլոկը։

Պայքարը կուլակության դեմ պետք է զնա ինչպես չքավորներին կուլակի դեմ կազմակերպելով, այնպես յեվ պրոլետարիատի ու չքավորների միությունը միջակ գյուղացության հետ ամրապնդելու ուղիով, միջակ գյուղացությունը կուլակներից պոկելու յեվ սրանով կուլակներին չեզոքացնելու նպատակով։

Համագումարն ամբողջությամբ և լիովին հավանություն է տալիս XIV կուսկոնֆերենցիայի գյուղացական հարցի վերաբերյալ որոշումների (սրանց թվում՝ վարձակալության իրավունքների, բանվորական ուժի վարձման իրավունքի ընդլայնման, տնայնագործական արդյունաբերության ոգնելու, վարչական ճնշման սիստեմից տնտեսական մրցակցության և տնտեսական պայքարին անցնելու, խորհուրդներն աշխուժացնելու, և այլն), որոնք ուղղված են կուսակցության քաղաքականության հետագա լավացման՝ բանվոր դասակարգի և գյուղացության շաղկապն ամրացնելու գծով։ Համագումարն արձանագրում է, որ դասակարգերի փոխհարաբերությունների փոփոխումից առաջացած կուսակցության քաղաքականության այդ թեքումը միայն արժատապես բարելավել և կացության այդ թեքումը գյուղում, բարձրացրել և պրոլետարիատի և նրա կուսակցության հեղինակությունը գյուղացության շրջանում և հաստատուն ապահովան ստեղծել կազմակերպչական լայն աշխատանքի՝ գյուղացությանը սոցիալիստական շինարարության ժԼ գրավելու համար։

Միաժամանակ, համագումարն ամբողջովին և լիովին հավանություն է տալիս ԿԿ-ի հոկտեմբերյան պլենումի վորոշումներին՝ գյուղական չքավոր դասի ժԼ վարելիք աշխատանքների մասին։ Հավանություն տալով ԿԿ ի՝ չքավորությանը նյութապես ոգնելու և չքավորների խմբակներ կազմակերպելու վերաբերյալ վորոշումներին՝ համագումարն ընդգծում է, որ այստեղ խոսք անգամ չի կարող լինել՝ վոչ չքավորների կոմիտեներին վերադառնալու, վո՛չ՝ ոգամական կոմմունիզմի ժամանակվա ճնշումների սիստեմին յեվ վոչ ել «ապակուլակայնացման» պրակտիկային յեվ այլն վերադառնալու մասին։ Այստեղ խոսքը գյուղի այն չքավորության կազմակերպման մասին է, որը կուսակցության յեվ պետական իշխանության ոգնության, տնտեսական յեվ քաղաքական ճակատի կռվում (կոլտնտեսություններ, արտելներ, ընկերություններ, կոոպերացիա, գյուղացական կոմիտեներ, խորհուրդներ), պիտի ջնջի իր միջից կուլակին դասակարգային հաշվին ապրելու հոգեբանությունը, կուլակին դասակարգային կազմակերպված դիմադրության ցույց տալու ուղին բռնի յեվ պրոլետարական քաղաքականության հոտառի նեցուկը դառ-

նա՝ միջակ գյուղացիներին պրոլետարիատի շուրջը համախմբելու համար նրա մղած պայքարի մեջ։

(XIV կուսհամագումարի բանաձևերից՝ Հ. Կ. Կուսակցության ԿԿ-ի հաշվետվության մասին)։

ՀԱՐՑԵՐ 5. ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Դեպի ո՞ւր եր գնում գյուղատնտեսությունը նախքան պատերազմը՝ դեպի բարելավո՞ւմ, թե՞ դեպի անկո՞ւմ։

2. Ի՞նչ կատարվեց գյուղատնտեսության հետ իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակ։

3. Վերականգնո՞ւմ է, արդյոք, գյուղատնտեսությունը ՆԵՊ-ի մի՞ջոցին։

4. Ի՞նչ դեր եր կատարում կուլակը գյուղում հեղափոխությունից առաջ և ի՞նչ է նրա նշանակությունն այժմ։

5. Վո՞րն է գյուղում հիմնական գրուպպան՝ չքավո՞րը, մի՞ջակը, թե՝ կուլա՞կը։

6. Ինչպե՞ս է վերաբերվում կուսակցությունը գյուղացությանը՝ չքավորին, մի՞ջակին, կուլակին։

7. Կարո՞ղ է արդյոք կուլակն արագ ուժեղանալ և վորքա՞ն մեծ է կուլակային վտանգը։

8. Պե՞տք է կռվել, արդյոք, կուլակի դեմ և ինչպե՞ս կռվել։

9. Ո՞ւմ է ձեռնտու հողի վարձակալությունը և բանվորների վարձումը գյուղում։

10. Ինչպե՞ս է կազմակերպվում չքավորությունը և ինչո՞վ պետք է ոգնել նրան կուլակի դեմ։

11. Կուսակցությունն ի՞նչ մի՞ջոցներ է առաջարկում կուլակի դեմ պայքարելու համար։

12. Ո՞ւմ շահերն են պաշտպանում կուսակցությունն ու կոոպերատիվությունը գյուղում։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5. ԶՐՈՒՅՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ինչպե՞ս է բաժանվում ձեր գյուղում, ձեր գավառում, գյուղացությունն ըստ իր ունեվորության։

2. Ի՞նչ ուժ ունեն կուլակները ձեր գյուղում, ձեր գավառում։

3. Ի՞նչ է արվել ձեզանում չքավորներին կազմակերպելու համար և ի՞նչ դերք է բռնում միջակ գյուղացությունը։

ՍՍՀՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0185069